Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

31-32(497-498)
22.11.2017
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

ՆՊԱՏԱԿԱՍԼԱՅ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՈՒՆԵՑԱԾ ՆԵՐՈՒԺԸ

Վերջերս Ստեփանակերտի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնում անցկացված ասմունքի մրցույթը լուրջ մտորումների տեղիք տվեց՝ ի հայտ եկած խնդիրների ստույգ շեշտադրումներով: Նման միջոցառումները շահեկան են աշակերտների գեղագիտական ունակությունների զարգացման դիտանկյունից, սակայն ոչ պակաս կարևոր է գրական մեծարժեք գործերը նորովի գնահատելու հանգամանքը: Այլ բան է ստեղծագործությունը պարզապես կարդալը, միանգամայն այլ բան՝ այն գեղարվեստորեն մատուցելը: Այս երկրորդ պարագան, կարծեք, որոշակի թերացած էր, որովհետև մրցույթին ներկայացված ստեղծագործությունների հեղինակների ընտրությունը, մեղմ ասած, սահմանափակ աշխարհագրություն ուներ: Ասել, թե մրցույթի մասնակիցները լավ ծանոթ չեն հայ գրականության ոսկե ֆոնդին, ճիշտ չէր լինի, սակայն գրական գործերը, որոնք մատուցվեցին գնահատող հանձնաժողովի դատին, հանրությանը սակավ հայտնի գրողների հեղինակած ստեղծագործություններից էին, երբեմն նաև՝ սոցիալական ցանցերից քաղված:

Բնականաբար, աշակերտներին մրցույթի նախապատրաստում են իրենց ուսուցիչները, որոնք պետք է հոգ տանեին թե՛ աշակերտների արտասանական ապարատի մշակման, թե՛ ստեղծագործության ճիշտ ընտրության և թե՛ կատարողական պատշաճ տեխնիկայի ապահովման ուղղությամբ: Այս և հարակից գործոնների բացակայությունն, անշուշտ, թիրախավորում է գրականության ուսուցիչներին, քանզի դա նրանց աշխատանքի մի բաղադրիչն է: Յուրացնել հայրենի գրականությունը՝ նշանակում է թափանցել ազգի հոգևոր հարստության խորը շերտերը, ճանաչել անցյալը, գնահատել ներկան և ուղենշել ապագան:

Ի՞նչ է ասմունքը՝ միայն գրական ստեղծագործության պաթետիկ արտաբերո՞ւմ: Եթե դատենք մրցույթում հնչած արտասանություններից, ապա գուցե թե նման ձևակերպմանը կարելի է համաձայնել: Բայց ասմունքելու մեջ, բացի գրական նյութի իմացությունից, կան նաև թատերարվեստի, լինգվիստիկ գիտելիքների, ինքնարտահայտման ունակության և այլ տարրեր: Ո՞վ պիտի դրանք ուսուցանի աշակերտին՝ միայն ուսուցի՞չը… Անհերքելի փաստ է, որ այսօր համացանցը ևս՝ դրական և բացասական առումներով, յուրօրինակ ուսուցիչ է դարձել դպրոցականների համար: Դրականն այն է, որ համացանցը, հանդիսանալով տեղեկատվության անհատակ օվկիանոս, հավելյալ գիտելիքներ է փոխանցում աշակերտներին, նպաստում նրանց բազմահմտությանը: Իսկ բացասական ազդեցությունները, որոնք ավելի մեծ թիվ են կազմում, ըստ էության դարձել են չարիք հենց մանկավարժության համար: Այստեղ տեղին է հիշել ասացվածքը՝ ցածրաճաշակությունը բոլոր վարակներից ավելի արագ է տարածվում: Գաղտնիք չէ, որ բռնություն, այլասերվածություն պարունակող նյութերը համացանցում անվերահսկելի են, և դրանցից լայնորեն օգտվում են դեռահասները: Ավելին, միջին վիճակագրական քաղաքացուն հասանելի հեռուստաալիքները նույնպես լիքն են ցածրորակ հաղորդաշարերով ու հեռուստասերիալներով, և դրանք դիտող հանրության զգալի մասը դարձյալ կազմում են դպրոցականները: Չես կարող, իհարկե, համեմատել այսօրվա և քառորդ դար առաջվա դպրոցականի էրուդիցիան: Կյանքն առաջ է ընթանում, և աններելի կլիներ հետ մնալ այդ գործընթացից: Բայց միաժամանակ անհրաժեշտ է ուղղորդել այդ ընթացքը. ի վերջո, համացանցում անսահման քանակությամբ ուսուցանելի նյութեր կա՝ հեռուստաներկայացումներ, բեմի վարպետների կատարմամբ ասմունք, հեղինակային արտասանություններ և այլն: Արդյո՞ք մեր դպրոցականներն օգտվում են համացանցի այդօրինակ մատուցումներից…

Գեղագիտական ըմբռնումների ձևավորումը աշակերտի հայրենասիրական դաստիարակության կարևոր բաղկացուցիչն է: Ուրախալի է, որ այդ դրվածքը մեր հանրապետությունում բարձր հիմքերի վրա է: Ասմունքի մրցույթի համապատկերին, սակայն, նկատենք՝ մեր գրականության ուսուցիչներն ու նմանատիպ միջոցառումների կազմակերպիչները դեռևս անելիքներ ունեն տվյալ ուղղությամբ: Անկասկած, առանց թերացումներում մեղավորներ փնտրելո՛ւ: Մենք ունենք և՛ բարձրակարգ մասնագետներ, և՛ տաղանդաշատ աշակերտներ, մնում է նպատակասլաց օգտագործել ունեցած ներուժը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ ՈՒԺ Է

Ուսանողների միջազգային օրը, որն աշխարհում նշվում է նոյեմբերի 17-ին, նաև մեր հանրապետության բազմահազար ուսանողների տոնն է: Այդ օրն առանձնահատուկ արժևորվում է հասարակության ամենաակտիվ խավի՝ երիտասարդության շարժիչ ուժ ուսանողության դերը պետության զարգացման գործում, քանի որ բանիմաց, կիրթ ու բարձր արժեքներով առաջնորդվող ուսանողներն են երկրի ապագան:

Արցախի բոլոր բուհերում, ինչպես նաև որոշ համայնքներում ուսանողներն օրը դարձրին տոն:

Հանրապետության գիտակրթական և մշակութային ամենախոշոր՝ Արցախի պետական համալսարանում այդ տոնը առանձնահատուկ շուքով է նշվում. դրան նախապատրաստվում են ամբողջ բուհով, բայց գլխավոր դերակատարներն ուսանողներն են: Օրն այդ դառնում է ուսանողների՝ ուսումնառության ընթացքում կուտակած գիտելիքների, հմտությունների ու կարողությունների յուրատեսակ ամփոփում և ինչու չէ՝ այդ հատկանիշների բացահայտման ու դրսևորման գեղեցիկ առիթ:

Օրվա կապակցությամբ համալսարան էին այցելել ԱՀ Աժ նախագահ, ԱրՊՀ խորհրդի նախագահ Աշոտ Ղուլյանը, կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը, պաշտոնատար այլ անձինք: Հյուրերն ու համալսարանականները նախ իրենց հարգանքի տուրքը մատուցեցին բուհի զոհված ուսանողների հիշատակին: Այնուհետև ներկա եղան տասնյակ ուսանողների՝ համալսարանի մուտքի դիմաց կազմակերպած ազգային շուրջպարին, որից հետո նիստերի մեծ դահլիճում՝ լեփ-լեցուն ուսանողներով, դասախոսներով ու հյուրերով՝ ուսանողական խորհրդի և հասարակայնության հետ կապերի բաժնի ուժերով կազմակերպած տոնական միջոցառմանը:

Աժ խոսնակ, ԱրՊՀ խորհրդի նախագահ Ա. Ղուլյանը, շնորհավորելով ուսանողներին օրվա կապակցությամբ, ասաց, որ ուսանողի կարգավիճակն ամենահետաքրքիրն է բոլոր ժամանակներում, որովհետև այն ներառում է այն տարիները, երբ մարդ անհրաժեշտ ունակություններ ու գիտելիքներ է ամբարում: Այդ առումով 21-րդ դարի ուսանողը շատ ավելի ակտիվ է, պրպտող, ավելի մեծ հնարավորությունների է բախվում և ստիպված է ճիշտ կողմնորոշում ու ճիշտ ընտրություն անել: Այսօր այդպիսի հնարավորություն արցախցի ուսանողներն ունեն ոչ միայն համալսարանում, այլև համալսարանից դուրս, առցանց՝ ժամանակակից բոլոր հնարավորություններով ստանալ գիտելիքներ: Աժ խոսնակը միևնույն ժամանակ ընդգծեց ԱրՊՀ ուսանողի պարտավորեցնող կարգավիճակը: Այս պատերի ներսում է ձևավորվել ու թրծվել այն սերունդը, որը 1988-ի փետրվարին դուրս եկավ հրապարակ ու սկիզբ դրեց մեր ազատագրական պայքարին: Այսօրվա ուսանողներին վիճակված է ոչ միայն շարունակել 88-ի ավանդույթները, այլև նոր աստիճանի բարձրացնել դրանք՝ հաշվի առնելով այսօրվա հնարավորությունները ու նաև գերնպատակը՝ ունենալ շատ ավելի ապահով, անվտանգ ու զարգացած երկիր:

Շնորհավորանքի ու բարեմաղթանքի հետ միասին ԱրՊՀ խորհրդի նախագահը հաճելի նորություն հայտնեց. վերջերս Հայաստանի ամերիկյան համալսարանում ունեցած իր հանդիպման ժամանակ կարևոր պայմանավորվածություն է ձեռք բերվել. այդ բուհի և ԱՀ կառավարության ջանքերով շուտով պատրաստ կլինի ԱրՊՀ նոր մասնաշենքի նախագիծը ու վերջապես ի կատար կածվի: Նա ուսանողներին հորդորեց արդյունավետ և լիարժեք օգտագործել ուսանողական տարիները, քանզի այն բանից, թե ինչպիսին է լինելու ԱրՊՀ շրջանավարտը, կախված կլինի մեր երկրի ապագան: Նա հույս հայտնեց, որ երիտասարդները շատ լավ են գիտակցում իրենց առաքելությունը և պատրաստ են այդ ճանապարհն անցնել մինչև վերջ:

Ի դեմս ԱրՊՀ ուսանողների՝ Արցախի բոլոր ուսանողների տոնը շնորհավորեց ԱՀ ԿԳՍ նախարար Ն. Աղաբալյանը:

- Եթե 1980-ականների սկզբին մեզ՝ այս նույն բուհի՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ուսանողներիս, ասեին, որ մեր սերնդին է վերապահված անկախության պայքար մղել, արցախահայության համար ճակատագրական որոշում կայացնել, անհավասար պատերազմում կենաց-մահու պայքար մղել և պետականություն կերտել, երևի թերահավատորեն վերաբերվեինք ու դժվարությամբ հավատայինք: Առավել ևս եթե ասեին, որ 30 տարի անց այս նույն դահլիճից մենք հանդես ենք գալու որպես երկրի իշխանավորներ,- ասաց նախարարը՝ վստահություն լինելով, որ հետաքրքիր գաղափարներով օժտված այսօրվա հրաշալի, տաղանդավոր երիտասարդությունն է տնօրինելու մեր երկրի ապագան, նա է ճանաչելի դարձնելու Արցախի Հանրապետությունը, ու նրա նվաճումներով է հզորանալու մեր երկիրը:

- Երեք տասնամյակ առաջվա սերունդը չէր կարող երազել այն հնարավորությունների մասին, որոնք այսօրվա սերունդն ունի զարգանալու և առաջ գնալու համար: Այսօր Արցախում կրթություն ստանալուց հետո երիտասարդները կարող են իրենց ուսումը շարունակել մեր երկրի սահմաններից շատ հեռու, որտեղ ամբարված են մարդկության ստեղծած բոլոր գյուտերը, բոլոր նորարարությունները, գիտելիքները, ու այդ անսպառ շտեմարաններից օգտվելու համար նրանց միայն կամք, հետևողականություն և նպատակասլաց աշխատանք է պետք: Իսկ թե նրանք ինչքանով ի վիճակի կլինեն օգտվել այդ անսպառ հնարավորություններից, կախված է նրանց ունակություններից ու որակներից, որոնք ձևավորվում են նաև ուսանողական ակտիվ կյանքի շնորհիվ:

Ն. Աղաբալյանը մաղթեց ուսանողներին վստահել իրենց ուժերին, համարձակորեն առաջ շարժվել և խոստացավ իրենցից կախված ամեն ինչ անել ուսանողական կյանքն ավելի բովանդակալից, հագեցած դարձնելու համար՝ ստեղծելով բոլոր հնարավորությունները:

ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը, իր շնորհավորանքում անդրադառնալով ուսանողների դերակատարությանը հասարակական կյանքում, շեշտեց իրական գիտելիքներ ունենալու կարևորությունը: Կրթությունը 4-6 տարվա կտրվածքով չի ավարտվում: Այդ կրթությունը ցկյանս է, հարատև է, և որևէ փաստաթուղթ, հավաստագիր չի կարող սահմանափակել անձի ցանկությունները՝ ստանալ ավելի շատ գիտելիքներ: Եթե հայրենասիրություն է այն, որ ամեն ոք իր ոլորտում, իր ուժերին ներածին չափ ծառայի հայրենիքին, ուսանողի համար այդ ծառայությունը շատ գիտելիքներ ամբարելն է, դաստիարակվելն այնպիսի մարդկային հատկանիշներով, որոնք մեր հայրենիքին կբերեն լուսավոր ապագա: ԱրՊՀ ռեկտորը պարգևատրեց բարձր առաջադիմությամբ, ստեղծագործական տարբեր մրցույթներում հաղթած, մարզական և այլ ոլորտներում հաջողությունների հասած մի շարք ուսանողների: Ի դեպ, ռեկտորի կողմից ուսանողներին խրախուսանքի արժանացնելը միայն այդ պահով չի սահմանափակվել. օրվա ընթացքում տարբեր միջոցառումներում նա առիթ է ունեցել պարգևատրել շատ ուսանողների:

Իսկ ուսանողները բեմում ցուցադրեցին արվեստի, հումորի իրենց շնորհները: Ազգային երգ-պարին հաջորդեցին ասմունքը, ժամանակակից պարերն ու երգերը: Ուսանողներին միացել էին նաև Ն զորամասի զինվորներն ու աշակերտներ. բուհ-դպրոց-զորամաս ծրագրի շրջանակում ուսանողները միջոցառումներով հանդես էին եկել բոլոր շրջաններում և զորամասերում:

Միջոցառումը հետաքրքիր վարեցին լրագրության բաժնի ուսանողուհի Իրինա Հայրապետյանը և ուսանողական խորհրդի փոխնախագահ Սամվել Բաղրյանը:

Սեփ. լրատվություն

ԱՍՄՈՒՆՔ

ՓԱՌԱՏՈՆՅԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նոյեմբերի 11-ին Ստեփանակերտի Շ. Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնում կայացավ ՀՀ ԱԺ նախկին նախագահ Հովիկ Աբրահամյանի հովանու ներքո անցկացվող Ասմունքի հանրապետական մանկապատանեկան 11-րդ մրցույթ-փառատոնի եզրափակիչ փուլը: Այս տարի այն նվիրված է բոլոր ժամանակների հայ ազատամարտի հերոսներին և, մանավանդ, Արցախի վերջին 30-ամյակի հերոսներին և կրում է «Արցախյան ազատամարտ-30» խորագիրը: Տարիքային երկու խմբերում՝ 11-14 և 15-17, ընդգրկված էր 40 աշակերտ: Ստեփանակերտից մրցույթին մասնակցում էր 10 աշակերտ: ԱՀ ԿԳՍՆ նախադպրոցական և արտադպրոցական բաժնի վարիչ Աննա Այվազյանը տեղեկացրեց, որ մրցույթին մասնակցում են Արցախի բոլոր շրջանները, յուրաքանչյուր շրջանից՝ երկու տարիքային խմբից 4 աշակերտ: «Մենք միայն այս մրցույթով չենք սահմանափակվում, տարվա ընթացքում նախարարությունն առնվազն 3 ասմունքի մրցույթ-փառատոն է անցկացնում. ամեն տարվա օգոստոսին Շուշիում կայանում է համահայկական մրցույթ, իսկ ապրիլին՝ Մայիսյան եռատոնի նախօրյակին, ինքներս ենք կազմակերպում»,- ասաց Ա. Այվազյանը:

Մրցույթ-փառատոնը բացեց նրա պատասխանատու քարտուղար և հանձնաժողովի նախագահ Մարիետա Մակարյանը: Նրա առաջարկով ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին ազատամարտի բոլոր զոհերի հիշատակը: Ապա ելույթ ունեցավ ԵՊՀ պրոֆեսոր Սամվել Մուրադյանը: Նրա խոսքով՝ փառատոնը հարգանքի տուրք է մեր երկրի այս չքնաղ անկյունն ազատագրած և իրենց կյանքը զոհաբերած հերոսների հիշատակին: Իսկ մեր ազատամարտի պատմությունը, նրա խոսքով, շատ երկար է՝ դարերի, հազարամյակների խորքերից եկող, «Հայկ և Բել» առասպելի և Տիգրան Մեծի ժամանակներից մինչև Արցախյան շարժում: Ընդգծելով այն միտքը, որ գոտեմարտը մեր գոյության ու հավիտենության առհավատչյան է, բանախոսը բարի ընթացք մաղթեց փառատոնի հանրապետական փուլին և հաջողություն՝ բոլոր մասնակիցներին՝ հատկանշելով, որ հաղթողներ ու պարտվողներ չկան, այլ միասին նրանք մայրենի լեզվով հնչող հայ բանաստեղծության զինվոր են, որ այսօրվա ասմունքողները վաղն ավելի կարևոր դերակատարություն կունենան հայրենիքի և պետականության կերտման այլ օղակներում:

Փառատոնի մասնակիցներին ողջունեց և հաջողություններ մաղթեց ԱՀ ԿԳՍ փոխնախարար Արմեն Սարգսյանը:

Մ. Մակարյանը ներկայացրեց նախորդ 10 մրցույթներում հաղթած արցախցի 24 ասմունքողների անունները, որոնք մրցանակային տեղեր են գրավել, արժանացել տարբեր մրցանակների: Անդրադառնալով մրցատյանի անդամներին՝ նախագծի ղեկավարը նշեց, որ փառատոնի պատվավոր նախագահը Հովիկ Աբրահամյանն է, հանձնախմբի նախագահը՝ ՀՀ պաշտպանության փոխնախարար Արտակ Դավթյանը: Հանձնախմբի կազմում են ՀՀ ժողովրդական արտիստ, Հրաչյա Ղափլանյանի անվան դրամթատրոնի առաջատար դերասան և բեմադրիչ Գուժ Մանուկյանը, ԵՊՀ հայ գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Մուրադյանը, Երևանի ԳՄ նախագահ Աբգար Ափինյանը, ՀՀ վաստակավոր արտիստուհի Արևիկ Սանթրոսյանը, ԱՀ ժողովրդական արտիստ, Շուշիի Խանդամիրյանի անվան թատրոնի գեղարվեստական ղեկավար Լեոնիդ Հարությունյանը, ԱՀ ԿԳՍՆ լեզվի տեսուչ Գայանե Գրիգորյանը և, ինչպես նշվեց, ծրագրի հեղինակ և մրցատյանի պատասխանատու քարտուղար Մարիետա Մակարյանը: Վերջինս ներկայացրեց նաև մրցույթ-փառատոնի կանոնակարգը:

Մրցույթի անցկացման մեկ դրույթի շուրջ մասնակիցների, ուսուցիչների, իսկ վերջում պարզվեց՝ նաև հանձնախմբի անդամների մի մասի կարծիքները բաժանվեցին. թեպետ ծրագրի ղեկավարը նախապես ստացել էր աշակերտների համաձայնությունը ասմունքելու ընթացքում կամ հետո տրամաբանական, առոգանության սխալ շեշտադրումները շտկելու, ուղղություն ցույց տալու հարցում, մրցույթի ընթացքը ցույց տվեց, որ մասնակիցների վրա բացասաբար է անդրադառնում ելույթն ընդհատելն ու դիտողություններ անելը. անհրաժեշտության դեպքում արդյունավետ կլիներ դա անել ելույթից հետո կամ իրենց նկատառումները գրի առնելով՝ դա անեին վերջում:

Մինչ արդյունքների վերջնական ամփոփումը լրագրողների հետ զրույցում ***Մ. Մակարյանն*** իր դիտարկումները ներկայացրեց մրցույթի ընթացքի, նյութերի ընտրության, ելույթների մասին. «Կային երեխաներ, որոնք ընտրել էին այնպիսի բանաստեղծություններ՝ արևմտահայ և արևելահայ պոեզիայից, որ երբեք չէին հնչել, և մեր երեխաները ծանոթ չէին: Կային նաև այնպիսիք, որոնք ընտրել էին թեմայի հետ կապ չունեցող բանաստեղծություններ, բայց մենք չընդհատեցինք և ելույթի հնարավորություն տվեցինք»: Ելույթ ունեցողների թերացումները նա կապեց գրականության ուսուցիչների ոչ լիարժեք աշխատանքի հետ՝ չխուսափելով անհարկի և ոչ կոռեկտ հայտարարություններից: Սակայն հարկ է խոստովանել, որ ասմունքի արվեստը, ինչպես գրեթե միաձայն խոստովանեցին մրցատյանի բոլոր անդամները, դյուրին չէ: Անգամ շատ հայտնի դերասաններ, բեմական խոսքի վարպետներ ձեռնպահ են մնում արվեստի այս ճյուղից. այստեղ չկան խիստ կանոններ, սահմաններ, և եթե ասմունքողը կարողանում է միջնորդ դառնալ հեղինակի և ունկնդրի միջև, բանաստեղծությունն անցկացնել իր հոգու պրիզմայով, ուրեմն հաջողությունն ապահովված է: Այն նաև խիստ սուբյեկտիվ կարող է լինել, քանի որ անգամ անվանի ասմունքողների խոսքը միանշանակ չի ընդունվում և գնահատվում բոլորի կողմից: Որտե՞ղ են մեր երեխաները լսում գեղեցիկ ու անաղարտ հայերենով խոսք. գաղտնիք չէ, որ անգամ Ստեփանակերտում (էլ չեմ խոսում շրջանների ու գյուղերի մասին) ասմունքի երեկոներ չեն լինում, հայտնի ասմունքողներ չեն հրավիրվում, ուրեմն՝ երեխան լավագույն դեպքում այն լսում է միայն դպրոցում, իսկ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ դպրոցներում գրականության բոլոր ուսուցիչները չէ, որ տիրապետում են գեղեցիկ, զգացմունքային խոսքին, պարզ է, որ մեր երեխաներն այս առումով աննախանձելի վիճակում են: Մրցույթ-փառատոնի հետագա անելիքների թվում ծրագրի ղեկավարն առանձնացրեց. «Գուցե գարնանը մի քանի օրով այստեղ հրավիրենք ասմունքող Սարգիս Նաջարյանին՝ գրականության ուսուցիչների հետ վարպետության դասեր անցկացնելու»: Թե որքանով իրատեսական և արդյունավետ կլինի գաղափարը, ցույց կտա ժամանակը:

Ստորև ներկայացնում ենք մրցույթ-փառատոնի մրցատյանի անդամների կարծիքներն ու առաջարկությունները:

Արևիկ Սանթրոսյան. - Ակնկալիքներն արցախցի դպրոցականներից ավելին էին: Երեխաները թույլ էին, իրենք էլ մեղավոր չեն՝ ասմունքն ամենադժվարն է: Շատ դերասաններ կան, որ իրենք էլ չեն կարողանում ասմունքել: Կային լավ երեխաներ, որոնք հասկանում էին ինչ են արտասանում: Ամենակարևորը՝ հայոց լեզվի և գրականության ուսուցիչները պետք է կարողանան երեխաների մոտ սերմանել օրգանական խոսք, նաև հասնել նրան, որ նրանք հասկանան՝ ինչի մասին է խոսքը: Որպես ժյուրիի անդամ՝ ես դեմ եմ երեխային կեսից ընդհատելուն և դիտողություններ անելուն: Ընդհանուր թերությունները էին ձայնի անհարկի բարձրացնել-իջեցնելը, միապաղաղ, անհույզ ձայնով կարդալը, որը նման է դաշնամուրի նույն ստեղնին խփելուն, ինչի արդյունքում բանաստեղծության սկիզբն ու ավարտը հնարավոր չէ տարբերել: Ամեն դեպքում ողջունելի է նման փառատոն արդեն 11 անգամ անցկացնելը:

Գուժ Մանուկյան. - Ես երևի այն եզակի մասնակիցներից եմ, որ արդեն 11 անգամ ընդգրկվել եմ հանձնախմբի կազմում: Ուրախ եմ, որ երեխաների ընտրությունն այստեղ հետաքրքիր էր՝ համեմատած առաջին երկու մարզերի հետ, այն իմաստով, որ հետաքրքիր գործեր էին ընտրել: Թերություններով հանդերձ՝ կային շնորհալի երեխաներ, որոնց պակասում էր ճիշտ հունով ուղղորդելը. տեղին արված 1-2 դիտողությամբ կարելի էր ավելի մեծ արդյունքի հասնել: Դժբախտաբար, երեխաները զրկված են ասմունքի վարպետի խոսք լսելու հնարավորությունից:

Աբգար Ափինյան. - Գրականության հանրահռչակման ու յուրացման մակարդակը ցույց տալու առումով ասմունքի այս մրցույթը լավագույնն է: Ինձ մտահոգում է միայն մի խնդիր, որը ես արդեն բարձրաձայնել եմ ժյուրիի նիստերի ժամանակ. շատ երեխաներ օգտվում են ֆեյսբուքից: Ֆեյսբուքյան նյութերի հայտնվելն այս մրցանակաբաշխության ընթացքում երբեք օգուտ չբերեց՝ անորակ տեքստեր, անգամ անհայտ հեղինակների գործեր, որոնք չխմբագրված նյութեր են: Կուզեի, որ մեր երեխաները գրքերից քաղեին իրենց նյութերը. մենք ունենք դասական գրականության տարածման խնդիր, հայ դասական գրականությունը պիտի արքայաբար ներկա լինի այս մրցելույթում, իսկ ժամանակակից գրականությունը՝ ընտրողաբար, որովհետև եթե գիտական առումով նայենք խնդրին, ժամանակակից համարվում է վերջին 25 տարիների գրականությունը: Տասնամյակների քննություն բռնած գրականությունը, պոեզիան պիտի լինի ասմունքի փառատոնի առանցքը: Իմ այս մտահոգությունը կկամենայի շատերը կիսեն ու փորձեն լուծում գտնել այս խնդրին:

Սամվել Մուրադյան. - Հայ գրականության տարածման, արժևորման իմաստով այս փառատոնին կարող է համարժեք լինել Համահայկական փառատոնը, որ կազմակերպում են ամերիկահայ բարերարները, Երևանի պետական համալսարանը, «Գուրգեն Մելիքյան» հիմնադրամը, քանի որ մասնակցում են Սփյուռքի տարբեր ծայրերից, աշխարհի հայաշատ համայնքներից եկած երեխաներ:

Այս փառատոնը նվիրված է Արցախյան շարժման 30-ամյակին և հայոց բոլոր ազատամարտերին ու հայ ազատամարտիկներին: Սա պիտի մի քիչ զգաստացներ աշակերտներին և ուսուցիչներին հնչեցվող նյութերի ընտրության ժամանակ: Այդ նյութերը պետք է մակարդակ ունենան. գեղարվեստական գրականությունը հենց այնպես պատահական մի բան չէ, և երբեք չպիտի մոռանալ, որ մեր ժողովրդի գոյատևման, հարատևման ամբողջ պատմության մեջ, մեր բոլոր ազատագրական շարժումների մեջ գրականությունը և պատմությունը եղել են գաղափարական առաջնորդի դերում: «Արցախյան ազատամարտ-30» խորագիրը ճիշտ է ընտրված, բայց եթե չլիներ հայ գրականությունը, և սերունդների գիտակցության մեջ չարմատակայվեր Արցախի ազատագրման անհրաժեշտությունը, մենք չէինք ունենա մեզ պարտադրված պատերազմում այս հաղթանակները: Գրականությունը ոգի է ներարկել այս մարդկանց մեջ. և՛ առաջին ազատամարտի սերունդները, և՛ ապրիլյան պատերազմի ու այսօր սահմանին կանգնած հայ երիտասարդներն իրենց անձնական երջանկությունը, իրենց ճակատագիրը, իրենց ապագան, ամեն ինչ զոհաբերում են հանուն Արցախի: Սա պատահականություն չէ, մենք պարտավոր ենք այս գաղափարը վառ պահել նոր սերունդների մեջ: Այս ասմունքողների մեջ պիտի փնտրենք ապագա զինվորին, զորահրամանատարին, գեներալին, հայոց պետության նորագույն ղեկավարները սրանք պիտի լինեն: Եվ ավելի լավ չէ՞, որ հենց սրանք լինեն՝ համակողմանիորեն զարգացած, գեղագիտական բարձր դաստիարակություն ստացող մարդիկ, որպեսզի մեր ժողովրդին հուզող հարցերը լուծվեն նպաստավոր եղանակով: Այնպես որ, փառատոնը ծառայել է իր նպատակին: 6 մրցանակակիր եղավ, լրացուցիչ 7-րդն էլ, և հետաքրքիր է, որ բոլոր մասնակիցների միջև տարբերությունը գրեթե կես միավոր էր մրցանակակիրների և մրցանակ չստացածների միջև: Մշակութային այս ավանդույթը պետք է լինի շարունակական ու փոխանցվի հաջորդ սերունդներին, որովհետև այսօր այս դահլիճում 40 երեխայից ընտրեցինք 6-7-ին, ամեն տեղ 40 երեխա, ամեն տեղ 6-7 մրցանակակիր, և ամեն տարի սա կրկնվի: Նշանակում է սերնդի բարեփոխում, անհատի համակողմանի զարգացման խորհրդային ժամանակների երազանքների իրականացում՝ արդեն մեր ազգային պետականության համակարգի մեջ:

Գայանե Գրիգորյան. - Շնորհակալություն փառատոնի բոլոր կազմակերպիչներին, մաղթենք, որ այն լինի շարունակական: Այստեղ մեր երեխաներից յուրաքանչյուրը ցույց տվեց իր հայրենասիրությունը, իր սերը մայրենի լեզվի ու գրականության հանդեպ, թողեց իր հոգուց մի նշույլ, իր սրտից մի մասնիկ: Անշուշտ, այստեղ իրենց ավանդն ունեն մեր ուսուցիչները, շնորհակալություն նաև նրանց: Շնորհավորենք փառատոնի բոլոր մասնակիցներին, առավել ևս՝ մրցանակակիրներին ու մաղթենք նրանց այսուհետ ևս ուսման մեջ հաջողություններ, դպրոցական բովանդակալից ու հագեցած առօրյա, ու այդ ամենը՝ արցախյան խաղաղ ու անամպ երկնքի ներքո:

Լեոնիդ Հարությունյան. - Ես կողմնակից եմ, որ ունենանք նմանատիպ բազմաթիվ փառատոներ ու բարեխղճորեն մոտենանք այս ամբողջին: Մինչև փառատոնը պետք է հարկ եղած մոտեցումը ցուցաբերել յուրաքանչյուր երեխայի և յուրաքանչյուր փառատոնի թեմայի: Դպրոցների, ուսուցիչների, մեր նախարարությունների նախանձախնդիր վերաբերմունքով այս ամենը պետք է դրվի ճիշտ հունի մեջ: Ես եղել եմ երկու փառատոների ժյուրիում, և տպավորությունս այն է, որ գնալով աստիճանաբար թուլացնում ենք կոնտինգենտը, մինչդեռ ճիշտ հակառակը պիտի լինի: Ժյուրիի համար հատկանշեմ, որ ես կողմնակից եմ, որ մեր քննադատությունը, մեր քննարկումը, մեր գնահատականը լինի թղթի վրա՝ թվանշանով և ոչ թե ընդհատելով: Վարպետության դաս չէ սա, երեխան արդեն պատրաստ եկել է քննության, պետք չէ նրան նոր թեմա տալ կամ ուղղորդել՝ ինչպես արտասանի:

Հանձնաժողովի որոշմամբ 11-14 տարիքային խմբում մրցանակային տեղեր գրավեցին Սյուզաննա Մելքումյանը (1-ին տեղ, Ասկերան), Տատյանա Մարտիրոսյանը (2-րդ տեղ, Հադրութ), Նարեկ Ստեփանյանը (3-րդ տեղ, Բերձոր): 15-17 տարիքային խմբում՝ Սուրեն Մեսրոպյանը (1-ին մրցանակ, Ստեփանակերտ), Անահիտ Առստամյանը (2-րդ տեղ, Ստեփանակերտ) և Անուշ Սաղյանը (3-րդ տեղ, Մարտունի) մրցանակ: Լրացուցիչ ընտրվեց Լիլյա Նազլուխանյանը (Ստեփ. հ. 2 դպրոց): Մրցանակակիրները պարգևատրվեցին ԿԳՍՆ պատվոգրերով և Ազգային ժողովի կողմից խրախուսվեցին դրամական պարգևով: Նրանք կմասնակցեն 2018թ. Երևանում կայանալիք՝ հանրապետական եզրափակիչ փուլին և շքահամերգին:

Մելանյա ՄԻԼՈՆՅԱՆ

ԲԱՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՄՇԱԿՈՒՅԹԸ՝ ՊԵՏԱԿԱՆԱՍՏԵՂԾ ՀԱՄԱԿԱՐԳ

Ոչ ֆորմալ կրթությունը դարձել է Արցախի պետական համալսարանի ամենահետաքրքիր ծրագրերից մեկը: Այդ շրջանակում բուհում հանդես են գալիս տարբեր ոլորտների հայտնի դեմքեր Հայաստանից և այլ երկրներից: Ինչպես հերթական հանդիպումներից մեկի ժամանակ նկատեց ռեկտոր Մանուշ Մինասյանը, ոչ ֆորմալ կրթությունը դարձել է կանոնավոր, որը գալիս է լրացնելու այն բացերը, որ բուհում առկա են օբյեկտիվ պատճառներով: Ամեն անգամ նման հյուր ընդունելիս ռեկտորն իր երախտագիտությունն է հայտնում «Հելսինկյան նախաձեռնություն-92» արցախյան գրասենյակի ղեկավար Կարեն Օհանջանյանին, որի նախաձեռնությամբ է ԱրՊՀ-ում իրականացվում ոչ ֆորմալ կրթությունը:

Նշյալ ծրագրով նոյեմբերի 16-ին համալսարանում դասախոսությամբ հանդես եկավ գրող, կինոգետ, արվեստի վաստակավոր գործիչ Դավիթ Մուրադյանը:

Լսարանը լեփ-լեցուն էր տարբեր ֆակուլտետների ուսանողներով: Ռեկտոր Մ. Մինասյանը, ներկայացնելով բանախոսին, նշեց նրա ծանրակշիռ ավանդը հայ մշակույթի զարգացման գործում: Դ. Մուրադյանը 2014 թվականից ղեկավարում է Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտը: Այդ հանդիպումով նախանշվել է երկու բուհերի միջև համագործակցության նոր որակ:

Դասախոսության թեման էր՝ «Մշակույթը որպես պետականաստեղծ համակարգ»: Ներկայացնենք պետության ստեղծման, կայացման ու զարգացման գործում մշակույթի դերի մասին ***Դավիթ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ*** *ուշագրավ նկատառումները:*

ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԱՅՐԵՆԻՔ Է

Ինչ է մշակույթը: Սրա ձևակերպումը տալու համար բանախոսը դիմեց «Ֆաուստ»-ի հանճարեղ հեղինակի՝ գերմանացի մեծ բանաստեղծ Գյոթեի՝ նրա քարտուղար էքերմանի հետ զրույցին (կա այդպիսի գիրք՝ «Գյոթեի զրույցները էքերմանի հետ»): Գյոթեն ասում է՝ եթե ուզում եք ազգ ստեղծել, թատրոն բացեք: Առաջին հայացքից սա պարադոքս է, բայց ճշմարտությունը միշտ պարադոքսալ է, նկատեց բանախոսը՝ շարունակելով զարգացնել մշակույթի իր բանաձևումը: Հույներին, իբրև մի ամբողջական ազգ, ձևավորել է իրենց թատրոնը: Ովքե՞ր էին հույները նախքան իրենց թատրոնը. քաղաք-պետությունների ժողովուրդ, որոնք պատերազմում էին իրար դեմ՝ նույն լեզվով խոսելով: Մարդկությանը հայտնի է Տրոյայի պատերազմը, թեպետ այդ ժամանակ այդպիսի պատերազմները հավանաբար բազմաթիվ էին: Բայց մեկն ենք հիշում, որովհետև այդ մեկ պատերազմն է, որ ունեցել է իր բանաստեղծը, այն մյուս պատերազմները Հոմերոս չեն ունեցել, այդ պատճառով էլ մոռացվել են: Երկու քաղաքների միջև եղել է փոքրիկ կռիվ, որը մարդկության հիշողության պատմության մեջ Տրոյական պատերազմ անունն է ստացել, այն պատերազմը, որը վիպերգել է Հոմերոսը: Այստեղից, ըստ բանախոսի, առաջին բանաձևումը. մշակույթն ի սկզբանե հիշողություն է: Այն ստեղծում է պատմական մի տարածություն, որի մեջ ազգը կարող է ապրել հազարամյակներ շարունակ: Ահավասիկ, միմյանց դեմ պատերազմող այդ հունական քաղաքները, նույն հույներն իրենց թատրոններում դիտում էին ներկայացումներ և աստիճանաբար սկսեցին ունենալ նույն հերոսները, նույն արժեհամակարգը, բարոյական նույն իդեալները, էթիկական դաշտը, որի մեջ դրանք տեղավորվում են, և այդ արժեքների շուրջ միավորվելով՝ դարձան մեկ միասնական ազգ-պետություն, դարձան Հելլադա: Ուրեմն՝ մշակույթը ոչ միայն պետականաստեղծ գործոն է, այլև հայրենիք:

Եվ ահա երկրորդ բանաձևումը՝ ոչ թե երկիրն է մշակույթ ստեղծում, այլ մշակույթն է երկիր ստեղծում. ինչպիսի մշակույթ ունենաս, այնպիսին էլ կլինես: Եթե հողն առանց մշակույթի աշխարհագրություն է, ապա մշակույթի հետ միասին հայրենիք է: Այդ հողը մշակելը, ցորեն ցանելը, ծառ աճեցնելը, տուն կառուցելը նույնպես մշակույթ են, քանզի եթե այդ հողում երգ, առասպել, բանաստեղծություն է ծնվում, տաճար, եկեղեցի կառուցվում՝ դառնում է հայրենիք, որն այնտեղ ապրողին տալիս է դեմք, դիմագիծ, հասցե, ինքնություն, ես-ի և մենք-ի գիտակցություն:

...ՄԱՐԴՈՒ ՍՏԵՂԾԱՐԱՐ ՀԱՎԵԼՈՒՄԸ՝ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

Մշակույթը միայն կինոն, թատրոնը, գրականությունը, երաժշտությունը, կերպարվեստը չեն: Դրանք մշակույթի կարևոր մասն են, բայց՝ գեղարվեստական: Մարդու ստեղծարար էության համար իրականությունը քիչ է, քանի որ նա ունի բանականություն ու հոգի և ուզում է իր կենսատարածությունը մեծացնել: Եվ ահա մշակույթի երրորդ բանաձևումը՝ մշակույթը մարդ-արարածի հավելումն է իրականությանը: Նրան հավելյալ իրականություն է անհրաժեշտ՝ որպես իրական կյանքի շարունակություն, որտեղ ինքը հաճախ տեղափոխվում և ապրում է՝ գտնելով իր մխիթարությունը, գտնելով այն, ինչ պակասում է բուն իրականության մեջ: Եվ դրա համար նա ստեղծում է բանաստեղծություն, թատրոն: Այնտեղ, որտեղ վերջանում են կյանքի հնարավորությունները, սկսվում է մշակույթը: Այնտեղ՝ բեմի վրա կատարվում է այն, ինչ ինքը կուզենար, բայց որը չի կատարվում կյանքում: Չեղած կյանքն է իրականացվում արվեստի մեջ, երազանքը, որ գուցե մինչև վերջ կմնա երազանք կամ երբեմն կիրականանա: Բայց նաև իր ապրելաձևն է, լավի և վատի պատկերացումները: Մեր հեքիաթներում տրված է արվեստի ունիվերսալ բանաձևը՝ լինում է, չի լինում: Լինում է, բայց նաև չի լինում, որովհետև ինքը պայմանականություն է, որովհետև ինքը կյանքն է՝ գումարած ֆանտազիան, որովհետև ինքը մի քիչ ավելին է, քան մեր կյանքը, ավելի բարձր է: Բեմը 60 սմ-ով բարձր է դահլիճից: Դա տեխնիկական հանգամանքով է պայմանավորված, որպեսզի հեշտ լինի ներկայացումը դիտել: Բայց այդ տեխնիկականի մեջ կա գաղափար. արվեստն ավելի բարձր է կյանքից: Շեքսպիրի ժամանակներում «Գլոբուս» թատրոնում հավաքվում էր ողջ Լոնդոնը, գնում էին անգամ հասարակ մարդիկ՝ ոչ տառաճանաչ, գռեհիկ լեզվով խոսող և լսում էին այն անգլերենը, որով խոսում էին արքա Լիրը, Համլետը: Բեմից եկող այդ քաղաքակրթական ներարկումներն իրենց ազդեցությունն չէի՞ն ունենում, արդյոք, մարդկության զարգացման վրա:

Դ. Մուրադյանը համանման օրինակ բերեց հայկական կյանքից: 1908թ. լույս է տեսնում Վ. Տերյանի առաջին գիրքը՝ «Մթնշաղի անուրջներ»-ը՝ գրված այդ թվականներին հայկական կենսամիջավայրում բացարձակապես անբնական հայերենով: Դա մարտահրավեր էր: Տերյանն առաջարկում էր ապագա մայրաքաղաքի լեզուն, քանի որ միայն մայրաքաղաքներն են ունենում ազնվականական լեզու: Այսինքն՝ պետություն պիտի ունենաս, պետությունդ էլ՝ մայրաքաղաք, այնտեղ պիտի հոսեին երկրի տարբեր անկյուններից մարդիկ, ուրբանիստական միջավայրի մեջ ձևավորվեր, հարյուր տարվա ընթացքում, դառնար միասնական պետական լեզու՝ բարձր, ազնվականական՝ իր մեջ կրելով մեծ կուլտուրա՝ փոխանցելով դա իր օգտագործողին: Տերյանի ժամանակ ուսանողությունը արտագրում էր նրա բանաստեղծությունները, ձեռքից ձեռք էին անցնում, դպրոցներում, գիմնազիաներում, Թիֆլիսում, Երևանում, Պետերբուրգում հայ երիտասարդները միմյանց սեր էին բացատրում Տերյանի բանաստեղծություններն ուղարկելով: Աստիճանաբար ստեղծվեց մի սերունդ, որը սկսեց խոսել այլ հայերենով: Ահա ինչպես է լեզուն միջավայր ստեղծում, ինչպես է աբստրակցիան թելադրում իրականությանը:

ԱՐԱՐԱՏԻ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՆԱՅԵԼ ԱՇԽԱՐՀԻՆ

Մշակույթն ինքնին ունիվերսալ, համաշխարհային հասկացություն է: Վիթխարի, հզոր մշակույթներ կան, որոնցից շատ բան կարելի է սովորել: Բայց պարտադիր չէ, որ փոքր երկրի մշակույթը ինքն էլ փոքր լինի: Դ. Մուրադյանին մի անգամ մի լրագրող հարցրել է. «Հայաստանը ծով չունի, ինչպե՞ս կարող է նրա մշակույթը լինել համաշխարհային»: Մեծ մշակույթները հիմնականում ծովափնյա ժողովուրդներն են ստեղծում՝ սկսած «Ոդիսական»-ից, որովհետև ծովը համաշխարհային հաղորդակցության միջոց է: Դ. Մուրադյանը նրան պատասխանել էր. «Ծով չունենք, բայց մենք Արարատ ունենք, որ մի օվկիանոսի խորության չափ բարձրություն ունի, և որը նույնպես համաշխարհային է, որովհետև բիբլիական լեռ է և համաշխարհային սիմվոլ: Մենք Արարատին նայելով ենք ապրում ու ստեղծագործում»:

Հայաստանը մշակույթների խաչմերուկ է, իսկ խաչմերուկում ապրելը որքան հետաքրքիր, նույնքան էլ վտանգավոր է: Երեք մեծագույն մշակութային հոսքեր՝ ասիական, հին հունական, հռոմեական, բյուզանդական և պարսկական, մշտապես հանդիպել են, բախվել, մրցակցել, վիճել, մեկը մյուսից վերցրել: Այս բոլորի հանդիպման կետում Հայաստանն է: Հայկական քաղաքակրթությունն ընդունակ է բնականորեն հարաբերվելու, խոսելու և՛ արևելյան, և՛ արևմտյան մշակույթի հետ: Վահրամ Փափազյանը՝ իբրև երևույթ, տիպիկ արևմտյան մշակույթի կրող էր, սակայն նրա լեզուն հայկական հին հիշողությունների և ինքնության լեզուն էր: Հայոց լեզվի այս կրողը եվրոպականացված մասնագետ էր, և հիմնաքարային գիտելիքների շնորհիվ, որ գալիս էին բուն հայկական մշակույթից, ամբողջովին նաև արևելքինն է: Ու շատ բնական համաձուլվածք է: Փարաջանովի ֆիլմը՝ «Նռան գույնը», հավասարաչափ հետաքրքրությամբ դիտում են պարսիկները և լեհերը, որոնք ընդհանրապես չեն շոշափվում իբրև մշակութային համակարգեր: Լեհերը դիտում են, որովհետև դա քրիստոնեական հոգեհյուսվածքի ֆիլմ է և գեղեցիկ է, պարսիկները դիտում են, որովհետև այդ ֆիլմի մեջ հայտնաբերում են մի այնպիսի արևելք, որն ամբողջությամբ իրենցն է, սակայն իրենց կինոն չէ, շատ արևելյան է՝ արևելյան գորգի պես է, բայց նաև եվրոպական է, որովհետև ամբողջովին քրիստոնեական է: Փարաջանովը միավորող էսթետիկական լեզու է: Արամ Խաչատրյանը ամբողջովին հավաքում է արևելքի և արևմուտքի սիմֆոնիզմի ավանդույթները, նա քաղաքակրթություններ միավորող կոմպոզիտոր է: Այստեղից հաջորդ բանաձևումը՝ Հայաստանը քաղաքակրթական հավասարակշռության վայր է: Սա տալիս է քաղաքական մեծ առավելություն մեզ՝ այս աշխարհի երկու թևերի հետ համատեղվելու և բնականորեն ապրելու այս երկու թևերի միջև, գտնելու սեփական դեմքը, այս կշեռքի հավասարակշռության կենտրոնը լինելու: Սա մեր ներուժն է: Կոստան Զարյանն ասում է՝ ով գտավ Հայաստանի ինքնության բանալին, նա կարող է աշխարհի դռները բացել:

Ասիան հայինը չէ, բայց արևելքը հայինն է, արևմուտքը հայինը չէ, բայց Եվրոպան հայինն է: Հայաստանն իր երկգագաթ Արարատի պես տեղադրված է համաշխարհային հանգուցակետում: Բանախոսի տեսանկյունով՝ մենք եվրոպական արևելք ենք, բուն արևելք է Հայաստանը, սակայն իր ամբողջ քաղաքակրթական կոնստիտուցիայով, իր կենսամտածողությամբ եվրոպական արևելք է, ինչը տալիս է մեզ մեծ առավելություն խոսելու և՛ Եվրոպայի, և՛ արևելքի հետ: Ահա այս մեր ինքնաճանաչումից էլ կսկսվի մեր մշակույթի նոր վերելքը:

Կա մի գիրք, կոչվում է «Բնապատկերներ Կովկասյան երկրներեն և Հայաստանեն»: Հեղինակը շվեյցարացի գիտնական է՝ ֆիզիկոս, աշխարհագրագետ, 1911թ. արշավախմբի հետ բարձրացել է Արարատի գագաթը: 1913թ. հրատարակել է այդ գիրքը Գերմանիայում, իսկ 30 տարի հետո թարգմանվել է հայերեն՝ Սփյուռքում: Նա ասում է, որ Արարատը հավասարաչափ հեռավորության վրա է Բերինգի նեղուցից և Բարեհուսո հրվանդանից, Ատլանտյան ու Խաղաղ օվկիանոսներից: Ըստ օտարազգի գիտնականի՝ մենք ապրում ենք մի երկրում, որն աշխարհի հավասարակշռության կենտրոնն է: Սա շատ բան է ասում մեր իսկության մասին: Եվ այն ներքին հնարավորությունների, որը մենք դեռ պետք է բացահայտենք մեզ համար 3-րդ հազարամյակում:

Աշխարհագրական առումով մեր տեղը չի փոխվել, բայց փիլիսոփայական, ինքնագիտակցականության առումով փոխվել է: Աշխարհայացքի փոփոխության խնդիր կա. այո, մենք՝ որպես հայկական մշակույթ, ապրել ենք միշտ Արարատին նայելով, որը պահպանել է մեր ինքնությունը: Բայց գուցե նոր հազարամյակը նո՞ր պահանջ է դնում՝ աշխարհին նայել Արարատի գագաթից. հարց է բարձրացնում բանախոսը: Նախադեպերը կան. Աբովյանը դա ֆիզիկապես արել է: Չարենցն արել է իր պոեզիայով: Արարատի գագաթից աշխարհին նայող հայացք է Արամ Խաչատրյանի երաժշտությունը: Նախորդ դարի 60-ականներին, ազատվելով ստալինյան վանդակից, գրականության, կերպարվեստի, կինոյի՝ հայկական կենտրոնաձիգ մշակույթի մի ահռելի շարժում սկսվեց՝ վերադարձ սեփական ինքնությանը, փոքրության գիտակցության հաղթահարում: Այդ գիտակցությունը հանգեցրեց Ղարաբաղյան շարժմանը: Ո՞վ կանգնեց օպերայի հրապարակում, ով կարդացել էր «Ռանչպարների կանչը», ով դաստիարակվել էր Շիրազով, Պ. Սևակով, ով կրում էր իր մեջ հայկական ինքնության և մշակույթի հարստությունները ու կարող էր իր պատմության, իր անցյալի, ներկայի ու ապագայի անունից կանգնել ու արդարություն և հայրենասիրություն պահանջել:

ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է ԱՅՍՕՐ ԹԵԼԱԴՐՈՒՄ ՄՇԱԿՈՒՅԹԻՆ

Գտի՛ր քո բարձրությունը, քո ազգային ամուր հենակետը ու այդտեղի՛ց նայիր աշխարհին, քո արվեստով ու մշակույթով աշխարհին այդպես հարաբերվի՛ր:

Այդպես է մշակույթը թելադրում իրականությանը, ձևավորվում մարդու նոր տեսակ՝ բարոյական, հոգեկան, ինտելեկտուալ և ընդհանուր կուլտուրայի առումով: Այդ տեսակը դառնում հայրենիք կերտող, հայրենիք պաշտպանող, հայրենիք հարստացնող:

Մեր ինքնաճանաչումից էլ կսկսվի մեր մշակույթի նոր վերելքը: «Ինչքան էլ կյանքից, աշխարհից, բախտից, սոցիումից, գուցե և շատ արդարացի, հայերս դժգոհենք, վերջին 50 տարում մենք այն քիչ ժողովուրդներից ենք, որը կարողացել է ազգային երազանք իրականացնել. Արցախը ազգային երազանքի իրականացում է»,- փաստում է Դ. Մուրադյանը՝ հավելելով, որ սա պիտի մոբիլիզացնի մեր ներքին էությունը, ինտելեկտը, մեր վստահությունը ինքներս մեր հանդեպ: Նրա խոսքով՝ այստեղից է սկսվում հայկական պատմական և քաղաքակրթական ինքնագիտակցության նոր փուլը: Ստեղծել ենք պատմական և քաղաքական նոր իրականություն, որն այսօրվա հայ մշակույթից առաջ է անցել: Առաջ մշակույթն էր իրեն հավասարեցնում իրականությանը, քանզի պետականություն չունեցող Հայաստանում հայ ժողովրդի հեղինակները հայ գրողներն էին: Ռաֆֆի կարդացիր՝ դարձար մի քիչ ուրիշ, ավելի լավ հայ, հետո՝ Աբովյան, Թումանյան, Չարենց, ամեն մեծ գրող իր չափով ընդարձակել, մեծացրել ու նոր աստիճանի վրա է դրել հային: Ազգային-ազատագրական շարժումը դուրս եկավ Ռաֆֆու «Կայծեր» վեպից: Դարձյալ մշակույթն է իրականություն ստեղծել ու ստիպել, որ մարդը բարձրանա և իրականությունը բարձրացնի: Մշակույթն ավելին էր իրականությունից: Իսկ հիմա մենք ստեղծել ենք պատմական և քաղաքական նոր իրականություն, որն այսօրվա հայ մշակույթից առաջ է անցել: Հայ մշակույթին արդեն իրականությունն է տալիս մարտահրավեր, ասելով՝ արի ինձ հավասարվիր:

Երկխոսության մեջ մտնելով լսարանի հետ և պատասխանելով այն հարցին, թե ինչու այսօր գտնված չեն մեր մշակույթի ես-ը և մենք-ը, բանախոսն ասաց, որ գուցե պատմական միջանկյալ ժամանակաշրջան է դարից դար, հասարակարգից հասարակարգ անցումը. ամեն դար իր «Երկիր Նաիրի»-ն է ուզում: Պատմության ինտերմեդիայի մեջ ենք (դասական թատրոնում 1-ին և 2-րդ գործողությունների միջև ներկայացվում էին փոքրիկ պիեսներ, մինչև դերասանները զգեստափոխվեին: Սա կոչվում է ինտերմեդիա):

«Ամեն ինչ չէ, որ լավ է, և գուցե լավը քիչ է, բայց լավի քիչն ավելի կարևոր է, քան վատի շատը: Դա կյանքի օրենքն է: Պատասխանները միշտ արագ են ընթանում, հարցերը մնում են հավերժորեն, բայց ես հավատում եմ, որ կգտնվեն»,- լավատեսորեն եզրափակեց Դավիթ Մուրադյանը:

ԲՈՒՀԱԿԱՆ

ԱՐՊՀ-ՈՒՄ ԳՈՐԾՈՒՄ Է ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱ

Հոկտեմբերի 6-ից Արցախի պետական համալսարանում գործում է իրավաբանական կլինիկա: Բացմանը ներկա էին ԱՀ մարդու իրավունքների պաշտպան Ռուբեն Մելիքյանը, հյուրեր Մայր Հայաստանից, իրավաբան-դասախոսներ, ուսանողներ: ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը շնորհավորեց համալսարանականներին՝ բուհի կյանքում այդ կարևոր իրադարձության կապակցությամբ: Նրա խոսքով՝ իրավաբանական կլինիկայի բացումը հետապնդում է մի քանի նպատակ. ընդլայնել ուսանողների մասնագիտական հմտությունները, նրանց տեսական գիտելիքները գործնականում իրացնելու հնարավորությունները, քաղաքացիներին մատուցել անվճար իրավաբանական ծառայություններ, նպաստել Արցախի դատական, իրավապահ և այլ մարմինների աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, փաստաբանական ծառայությունների կայացմանը, իրավաբան ուսանողներին փաստաբանական գործունեության ուղղորդելուն:

Համալսարանում իրավաբանական կլինիկա ունենալու երազանքն առարկայական դարձավ մի քանի ամիս առաջ Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի հետ կնքած Հուշագրի արդյունքում, որին գործնական մասնակցություն ունեցավ ԱՀ մարդու իրավունքների պաշտպան Ռուբեն Մելիքյանը, որի ուղեկցությամբ ամռանը ԱրՊՀ-ում էր ամերիկահայ իրավաբանների միության ներկայացուցիչը, որն էլ խոստացավ ֆինանսապես աջակցել կլինիկայի գործարկմանն ու գործունեությանը: Եվ այսօր այն իրականություն է: Շնորհավորանքի հետ մեկտեղ Մ. Մինասյանը կոչ արեց մեր քաղաքացիներին՝ օգտվել կլինիկայի ընձեռած հնարավորություններից:

Բացմանը ողջույնի խոսք ասաց ԱՀ մարդու իրավունքների պաշտպան Ռուբեն Մելիքյանը՝ շնորհավորելով բոլորին և առաջին հերթին ուսանողներին՝ համալսարանում և առհասարակ հանրապետությունում այսպիսի կառույց ունենալու առնչությամբ: Եվ պարզաբանեց՝ ինչումն է դրա կարևորությունը:

Նախ՝ ցանկացած պետության Մարդու իրավունքների պաշտպանի համար ուրախալի է ունենալ նոր հաստատություն, որը հենց մարդու իրավունքների պաշտպանությամբ է զբաղվում, ընդ որում՝ տարբեր ուղղություններով: Առաջին հերթին, իրավաբանական կլինիկան նպաստում է արդար դատաքննության իրականացմանը, իսկ մենք, որպես ժողովրդավարական պետություն, այս ուղղությամբ անելիք ունենք ոչ միայն պաշտոնական մակարդակում (որտեղ ունենք անվճար իրավաբանական օգնության իրավունք, փաստաբանների պալատ, որը քրեական գործերով դա ապահովում է), այլև ոչ պաշտոնական՝ հասարակական մակարդակով: Կլինիկան կիրականացնի այդ գործառույթը: Այն նաև լավ հնարավորություն է ուսանողների որակավորման բարձրացման, գործնական հմտությունների ու կարողությունների գործարկման տեսանկյունից:

Ռ. Մելիքյանն ասաց, որ միջազգային հանրության հետ խոսելիս մշտապես բարձրացնում է այն հարցը, որ Արցախը, ցավոք, չունի այն հնարավորությունները, որ ունեն ճանաչված պետությունները: Բայց դա չի նշանակում, թե մեր քաղաքացիները պետք է զրկված լինեն այն հնարավորություններից, որ ունեն ճանաչված երկրների քաղաքացիները: Եվ արվում է այն ամենը, որ մեր քաղաքացիները զրկված չլինեն միջազգային չափանիշներով սահմանված մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմներից: Իրավաբանական կլինիկան սրա մի դրսևորումն է: Նրա բացումն իրականացվել և գործունեությունը կայանում է ԱրՊՀ-ԵՊՀ-ԱՄՆ-ում գործող Հայ իրավաբանական միության համագործակցության շնորհիվ: Առանձնապես՝ սփյուռքյան գործընկերների, որոնց ուշադրությունը գնալով այնքան է մեծացել Արցախի նկատմամբ, որ ոգևորված այստեղ ծրագրեր իրականացնելու հնարավորությունից, որոշում են կայացրել առաջին անգամ Նահանգներից դուրս՝ Արցախում կազմակերպել իրենց տարեկան ժողովը:

Իրավաբանական կլինիկային բարի երթ մաղթեցին ԵՊՀ իրավաբանական կլինիկայի տնօրեն Քնարիկ Վարդանյանը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի խորհրդական Սերգեյ Ղազինյանը, Փաստաբանների պալատի ներկայացուցիչ Վրեժ Խաչիկյանը, կլինիկայի փաստաբան-դասընթացավար Աշոտ Ապրեսյանը: Նրանք իրենց պատրաստակամությունը հայտնեցին աջակցել իրավաբանական կլինիկայի կայացմանն ու զարգացմանը:

Տեղեկացնենք, որ հուզող իրավաբանական հարցերով արդեն քաղաքացիներ են դիմում այստեղ՝ Արցախի պետական համալսարան, 1-ին հարկ, Իրավաբանական կլինիկա:

Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀՈԳԵՎՈՐ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ՄԻՇՏ ԷԼ ԶԳԱԼԻ Է ԼԻՆԵԼՈՒ ԻՐ ԾՆՆԴԱՎԱՅՐՈՒՄ

Հայ գրականագիտության և գրական քննադատության մեջ անուրանալի է Սերգեյ Սարինյանի ներդրումը: Նրա գիտական վաստակը բարձր է գնահատվել ոչ միայն հայ գիտական հանրության կողմից, իսկ ամենամեծ վաստակը թերևս կարելի է համարել հայրենի Արցախին անմնացորդ նվիրվածությունը: Սարինյանը շոշափելիորեն նպաստել է Արցախում գրականագիտական մտքի զարգացմանը, աջակցել տեղի երիտասարդ գիտնականներին՝ ատենախոսություններ պաշտպանելու ժամանակ:

Հատկանշական է նրա սերտ համագործակցությունը Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» պետհավատարմագրված համալսարանի հետ, որտեղ հաճախակի հանդես էր գալիս դասախոսություններով, մասնակցում բուհի և Արցախի գրողների միության համատեղ կազմակերպած գիտամշակութային միջոցառումներին: Հարկ է նշել, որ «Գրիգոր Նարեկացի» համալսարանի մի խումբ դասախոսներ գիտական աստիճաններ են ստացել Սերգեյ Սարինյանի անմիջական ղեկավարությամբ կամ նրա գործուն աջակցությամբ:

Մեծանուն ակադեմիկոսը միշտ պնդում էր, որ իր հայրենի երկրամասը ոչ միայն հայտնի է հերոսական ժողովրդով, այլև ունի գիտական բավարար ներուժ, որը պետք է լիարժեք բացահայտել ու ծառայեցնել հայ ժողովրդին: Եվ ինքն էլ հենց այդ գաղափարի իրականացնողներից էր:

Օրերս «Գրիգոր Նարեկացի» համալսարանում տեղի ունեցավ ուշագրավ միջոցառում՝ նվիրված մեր անվանի հայրենակցի ծննդյան տարեդարձին: Այսուհետև բուհի գրադարանը, որի ստեղծմանն անձամբ մասնակցել է գրականագետը, կկոչվի Սերգեյ Սարինյանի անունով: Միջացառման բացմանը ելույթ ունենալով՝ համալսարանի ռեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Հակոբյանը նշեց, որ դա պարզապես տուրք չէ անվանի ակադեմիկոսի հիշատակին: Սերգեյ Սարինյանը նշանակալից հետք է թողել բուհի գիտական կյանքում, և գրադարանը նրա անունով կոչելը ևս մի վկայություն է այն բանի, որ գիտնականի հոգևոր ներկայությունը միշտ էլ զգալի է լինելու իր ծննդավայր Արցախում:

Այնուհետև համալսարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ցերեկույթ, որի ընթացքում վերարժևորվեց Սերգեյ Սարինյան գիտնականի, մտավորականի ու Մարդու կյանքն ու գործունեությունը: Միջոցառումը վարող՝ համալսարանի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Ամալյա Գրիգորյանը, որը նույնպես Սարինյանի սաներից է, համառոտ ներկայացրեց ականավոր գիտնականի կենսագրությունը: Իսկ բուհի ռեկտոր Վարդան Հակոբյանը, գիտական գնահատման արժանացնելով Սարինյանի ամբողջական վաստակը, միաժամանակ հետաքրքիր դրվագներ պատմեց նրա հետ ունեցած երկարատև բարեկամական շփումներից:

Ելույթ ունեցան նաև «Գրիգոր Նարեկացի» համալսարանի հայ գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու Ժաննա Բեգլարյանը և արձակագիր, բանասիրական գիտությունների թեկնածու Կիմ Գաբրիելյանը: Ասմունքող Ռուզան Գասպարյանն էլ հանդես եկավ Վ. Հակոբյանի՝ Սարինյանին նվիրված, արցախյան բարբառով գրված բանաստեղծությամբ:

Միջոցառման ընթացքում ցուցադրվեց ֆիլմ ակադեմիկոսի մասին:

Սեփ. լրատվություն

Ես՝ քո մի զարկը

ՀԵՐՈՍՆԵՐ ԾՆՎՈՒՄ ԵՆ

Յուրաքանչյուր դարաշրջան ծնում է իր հերոսներին, որոնց սխրանքներով էլ առանձնանում է: Նախախնամության կամոք հայը մաքառել է, ապացուցել աշխարհին, որ ինքն ունի ազատ ապրելու իրավունք իր պապենական հողում, իր հայրենիքում:

Իսկ ո՞վ է իմաստավորում հողն ու հայրենիքը. նվիրյալը՝ հայրենապաշտն ու հայրենիքի պաշտպանությանը հավերժ զինվորագրված մարտիկը:

Ռոբերտ ԱԲԱՋՅԱՆ: Զինվոր, որը հայրենիքը վեր դասեց անձնական մղումներից, ով ընտրեց հայրենիքին անմնացորդ նվիրվելու ճանապարհը:

Հայոց բանակի կրտսեր սերժանտ Ռոբերտ Աբաջյանը նոյեմբերի 16-ին կդառնար 21 տարեկան, եթե հայրենիքի պաշտպանությունն այդքան կարևոր չլիներ նրա համար:

Որպես ճշմարիտ արիացի ուստր, որն ապրելու գաղտնիքին տիրապետում էր այնպես, որ իմացյալ մահով կարող էր հաղթել մահին՝ դարձած մի նոր Նժդեհ, մի նոր Վարդան ու Անդրանիկ, 19 տարեկանում արդեն գիտակցում էր, որ վահան դառնալո՛վ Սրբազան Հայոց հողը կարող է պաշտպանել ոսոխի ոտնձգությունից:

2016 թվականի ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը արցախա-ադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով հակառակորդի զինված ուժերի ստորաբաժանումները լայնածավալ հարձակման անցան:

Վաշտի հրամանատար Արմենակ Ուրֆանյանի զոհվելուց հետո ոտքից վիրավորում ստացած Ռոբերտ Աբաջյանը մինչև վերջին փամփուշտը շարունակեց միայնակ կռվել թշնամու մեծաքանակ զորքի դեմ՝ միաժամանակ կապ հաստատելով գումարտակի հրամանատարի հետ: Նկատելով մոտեցող թշնամուն՝ Ռոբերտը վերջին անգամ կապի է դուրս եկել ու ասել, որ արդեն հանել է իր մոտ մնացած վերջին նռնակն ու պատրաստ սպասում է, որ հենց մոտենան, իր հետ միասին կպայթեցնի նրանց ու չի չհանձնվի: Նրա պարտքն էր՝ ինչ գնով էլ լինի, չհանձնել դիրքը: Եվ չհանձնվեց:

Անձնազոհ քայլով Ռոբերտ Աբաջյանը փրկել է նաև թիկունքից օգնության հասած հայկական ուժերի զինվորներին:

Մերօրյա հերոսը հետմահու արժանացել է «Արցախի հերոս» ԼՂՀ բարձրագույն կոչման և պարգևատրվել «Ոսկե արծիվ» շքանշանով:

Պատմության բավիղներում հայ մայրերին մնացել է վիշտ ու տառապանք, սակայն... լուսավոր, քանզի նրանց նրբին ու փխրուն գեղեցկությունից ու հոգու առատ լույսից են ծնվել տղաները, որոնք պահպանել են մեր ինքնությունը, որոնք պաշտպանում են մեր այսօրը:

Ռոբերտ Աբաջյանի բացառիկ հերոսությունն անտարբեր չթողեց ոչ մեկին, բոլորն էլ ցանկանում են հավերժացնել նրա հերոսությունը հայոց պատմության փառապանծ էջերում: Այդ նպատակով կազմակերպվում են նրան նվիրված միջոցառումներ: Անմասն չմնաց Ստեփանակերտի հ.6 հիմնական դպրոցի պատմության ուսուցչուհի Վարյա Ավետիսյանը, որը երաժշտության ուսուցչուհի Դիանա Աբրահամյանի աջակցությամբ նոյեմբերի 16-ին կազմակերպեց Ռոբերտ Աբաջյանի ծննդյան օրվան նվիրված հուշ-ցերեկույթ:

Միջոցառումն սկսվեց Արցախի Հանրապետության հիմնով: Մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգեցին Հայրենիքի սահմանների պաշտպանության ժամանակ զոհված հայորդիների հիշատակը:

«Հայրերը ուժեղ են, իսկ որդիները՝ հզոր...» կարգախոսով ելույթ ունեցավ Վ.Ավետիսյանը՝ ոգեկոչելով հերոսի հիշատակը: Այնուհետև 9-րդ դասարանի աշակերտներն արտասանեցին Ռոբերտ Աբաջյանին նվիրված բանաստեղծություններ, ներկայացրին հերոսի կյանքի ուղին և նրա կատարած սխրանքը, իսկ 4-րդ դասարանի աշակերտուհի Սոնա Թովմասյանի ‹‹Բարով գնացեք›› կատարումը հուզեց բոլորին: Մենք վերապրեցինք այդ օրերը, բայց և հպարտ էինք, քանզի ունենք հայրերին գերազանցող որդիներ:

Ճիշտ է, նման միջոցառումները մեծ դեր են խաղում աշակերտների հայրենասիրական դաստիարակության գործում, բայց թող այսուհետ Արցախ աշխարհում խաղաղությո՛ւն տիրի. մեզ պատերազմի նորանոր հերոսներ պետք չեն: Թո՛ղ ոչ մի մայր այլևս չարտասվի: Թող բոլոր որդիները տուն դառնան:

Նայենք հայ մայրերին նրանց որբացած ու նահատակ որդիների աչքերով ու փորձենք մեղմել նրանց ցավը. «Հա՛յ մայրեր, ձեր որդիները կան, ապրում են, նրանք անմահ են...»:

Հիրավի, հերոսները չեն մեռնում... Նրանք ապրում են, քանի դեռ նրանց հիշում ենք:

Մերի ՀԱԿՈԲՅԱՆ
Ստեփանակերտի հ. 6 հիմն. դպրոց

ՓՆՋԱՅԻՆ

ԱՆՆԿՈՒՆ ՈԳՈՎ

Կրթօջախ մտնելիս ստացած նախնական տպավորությունները հաճախ են խոսում նրա գործունեության բովանդակության ու ներքին խոհանոցի մասին: Իսկ երբ դրանք հաստատվում են իրականության մեջ, դառնում են ավելի խոսուն ու ցայտուն:

Պատերազմի վերքերը կրող, դեռևս անամոք դպրոցական շենքից ներս գտնվող մարդիկ, սակայն, լավ գիտեն իրենց պարտականությունները, պատասխանատվությունը հայրենիքի վաղվա հանդեպ. չէ՞ որ այստեղ է կերտվում մեր ապագան:

Նախիջևանիկի միջնակարգ դպրոցի տնօրեն Գալինա Մեժլումյանը կրթօջախում հմտորեն է տնօրինում ամեն ինչ. և՛ մանկավարժական կոլեկտիվի առջև դրված խնդիրների լուծումը, և՛ դպրոցականների կրթության հարցերը, և՛ մարդկային կիրթ ու քաղաքավարի վերաբերմունքը միմյանց հանդեպ:

Այնտեղ, ուր իշխում է օրինականությունը, տիրում՝ կարգուկանոնը, հաջողություններն էլ դառնում են ակնհայտ:

Հարակից դպրոցների ուսուցիչների ներկայության առիթը կրթօջախում կազմակերպվող ընդօրինակման դասերն էին աշխարհագրությունից, մաթեմատիկայից և մայրենիից (հերթական փնջի նիստը):

Աշխարհագրության բաց դասը 6-րդ դասարանում կազմակերպվեց երիտասարդ ուսուցչուհի, առարկայի գիտակ Նոյեմ Գաբրիելյանի մոտ: Թեման՝ Աֆրիկա մայրցամաքը. ամփոփման դաս էր: Դասարանն ու ուսուցչուհին դարձել էին մի կուռ ու ներդաշնակ համադրություն: Ուսուցչուհու ժրաջանությունը փոխանցվել էր աշակերտներին. արագաշարժությամբ գերազանցում էին միմյանց:

Երիտասարդ ուսուցչուհին նրանց վարպետորեն վարժեցրել էր արագ ու անկաշկանդ մտածողությանը, և նրանք ողջ դասի ընթացքում չթերացան ոչ մի բանում: Իրենց ակտիվությամբ ու արագ գործողություններով արդարացրին ուսուցչուհու սպասելիքները: Մանկավարժական մեթոդներով՝ մտագրոհ, պրիզմա, համագործակցային, Վենի դիագրամ, ուսուցչուհին վեր հանեց սովորողների գիտելիքները թեմայից և ընդհանրապես անցած նյութերից:

Միջառարկայական կապն ավելի էր օգնում նրանց, որի արդյունքում վեր հանվեցին Աֆրիկայի աշխարհագրական դիրքը, ափագիծը, մակերևույթը, կլիման, ներքին ջրերը, բնական գոտիները: Աշակերտները վարժ կարդում էին քարտեզը, արագ կողմնորոշվում աշխարհագրական լայնություններում:

Ն. Գաբրիելյանն իր առջև դրված նպատակները՝ ա) ունենալ սեփական տեսակետի նկատմամբ վստահություն, բ) զարգացնել տրամաբանական մտածողություն, տեսողական հիշողություն, գ) դաստիարակել պատասխանատվության, համագործակցելու, փոխօգնության կուլտուրա, դ) ճանաչել աշխարհագրությունը՝ որպես մոլորակը բացահայտող գիտություն, գերազանց կատարեց՝ հաճելի պահեր պարգևելով ներկաներին: Նույնքան արագաշարժությամբ էլ ուսուցչուհին մատուցեց նոր նյութը՝ Ավստրալիա. ընդհանուր բնութագիրը՝ վերջում սովորողների միջոցով ամրապնդելով նյութը, վեր հանելով Աֆրիկայի ու Ավստրալիայի տարբերություններն ու նմանությունները: Ի միջի այլոց, Ն. Գաբրիելյանի խոստովանությամբ՝ առաջին անգամ է նման մակարդակով ու մասշտաբով բաց դաս կազմակերպում և դժգոհ չէ իր սաներից:

Քննարկման ժամանակ փորձառու ուսուցիչներ Մելանյա Սարգսյանը, Հրանուշ Հարությունյանը, Մարելլա Ավանեսյանը, Վլադիմիր Ալավերդյանը բարձր գնահատականների արժանացրին երիտասարդ ուսուցչուհու կարողություններն ու աշխատասիրությունը, նպատակասլացությունը, երեխաների դրսևորած գիտելիքներն ու գրագետ պատասխանները: Ասկերանի միջնակարգ դպրոցի տնօրեն Մարելլա Ավանեսյանն ընդգծեց հատկապես այն հանգամանքը, որ Նոյեմի նման աշխատասեր ու կարող, նպատակասլաց ուսուցիչ ունեցող դպրոցը միայն ու միայն կշահի, քանզի նրա էներգիան անսպառ է, ապագան՝ խոստումնալից: Մելանյա Սարգսյանն էլ նշեց ուսուցչուհու խորագիտակության խոսուն փաստերը, օլիմպիադաներում նրա սաների ցուցաբերած գիտելիքներն ու լավ արդյունքները:

Հաջորդ ընդօրինակման դասը 2-րդ դասարանում էր՝ դասվար Գոհար Սարգսյանի մոտ՝ մայրենիից: Նա իր առջև նպատակ էր դրել «Ժողովուրդն իմաստուն է» թեմայի ամփոփմամբ լուծել մի շարք խնդիրներ. 1) ամրապնդել ժողովրդական բանահյուսության նմուշները ճիշտ առոգանությամբ արտասանելու կարողությունները. 2) ձևավորել դերային խաղերին մասնակցելու հմտություններ. 3) տարբերակել առարկա և գործողություն ցույց տվող բառերը. 4) ձևավորել ընկերների հետ աշխատելու կարողություններ. 5) զարգացնել գեղեցիկ խոսք կառուցելու հմտությունները, տարածական մտածողությունն ու երևակայությունը:

Դասը բեմականացված էր: «Երեք աղջիկների հեքիաթը» ներկայացնելով՝ երեխաները կարողանում էին հեշտությամբ զանազանել բարին ու չարը՝ օգտվելով ժողովրդական համով-հոտով բառ ու բանից: Ժողովուրդը հարուստ ժառանգություն է թողել, և նրանք վստահորեն ներկայացնում էին բարի ու չար մարդկանց. գյուղացին և նրա աղջիկները խորհրդանշում էին բարին, իսկ վեզիրը՝ չարը: Գունագեղ պաստառին, որ խնամքով պատրաստել էր դասվարը, երեխաներն ամրացնում էին գյուղացուն, աղջիկներին ու վեզիրին բնութագրող բառերը: Նրանք լավ էին տարբերում ժողովրդական խաղիկները, տաղիկները, շուտասելուկներն ու սուտասելուկները, հանելուկները: Իսկ փոքրիկ «մայրիկի» նանիկը, տիկնիկ-երեխային քնեցնելու նպատակով, ուղղակի գերեց ներկաներին:

Փոքրիկներն ակտիվ էին նաև խմբային աշխատանքը կատարելիս, որում հանդես բերեցին իրենց գեղագիտական ճաշակը: Բոլորի աչքերում բարությունն էր շողարձակում. ամեն մեկը կարծես մի հոտավետ ծաղիկ լիներ: Նայում ես նրանց ու զարմանում, թե այսքան բարի ու անմեղ երեխաներից ոմանք հետագայում ինչպես են վերափոխվում ու չարությամբ լցվում դաժան իրականության պատճառով:

Դասը վերլուծող գործընկերները գնահատեցին և՛ դասվարի, և՛ երեխաների խրախուսանքի արժանի աշխատանքը:

Մաթեմատիկայի դասը (11-րդ դասարան) Արգենտինա Մկրտչյանի մոտ էր: Դասարանի կահավորումը, սովորողների ինքնավստահ ու համոզիչ պատասխանները, ուսուցչուհու հանգիստ տոնը, մանկավարժական տակտը, աշակերտակենտրոն ուսուցման մեթոդը՝ ահա այն բարձր հատկանիշները, որ ապահովեցին ցանկալի արդյունք: Ուսուցչուհու հավասարակշռված կեցվածքը, ցուցաբերած վարպետությունը բարձր գնահատվեցին Մարիետա Մելքումյանի, Լյուդմիլա Մոսիյանի, Մարելլա Ավանեսյանի, Գնել Սահակյանի, Վոլոդյա Հակոբջանյանի կողմից, որոնք ընդգծեցին սովորողների ակտիվությունն ու իմացությունը: Դրանք էլ դարձան հաջողված դասի երաշխիքը: Ամեն ինչ կախված էր ուսուցչի վարպետությունից: Երիտասարդ ուսուցիչներն էլ ուսանելու շատ բան ունեին, որոնք իրենց հերթին արժանի կարծիքներ հայտնեցին ուսուցչուհու հասցեին: Արգենտինա Մկրտչյանը իր բնավորության շնորհիվ վայելում է բոլորի սերն ու համակրանքը:

Այս կրթօջախում աչք շոյող մի հանգամանք ևս արժանի է հիշատակության. դա աշակերտների համեստ, կոկիկ հագուկապն էր՝ դպրոցին ու դպրոցականին հարիր տեսքով:

Օրվա աշխատանքը եզրափակվեց դպրոցի կազմակերպիչ, փոխտնօրեն Նոյեմ Գաբրիելյանի տքնաջան գործունեությամբ ձևավորված աղջիկների պարախմբի գեղեցիկ ելույթներով, որ ընդմիջվում էին Գևորգ Էմինի «Սասունցիների պարը» պոեմի հատվածների արտասանությամբ: Նաիրյան աղջիկների հեզաճկուն, երբեմն՝ խրոխտ ու մարտական պարերը՝ «Սարդարապատ», «Խենթ Անուշին», «Հայաստան» երգերի կատարումներով, հիացական ծափողջույնների արժանացան հյուրերի կողմից: Այստեղ էլ փայլեց Նոյեմ Գաբրիելյանի շնորհքը:

Ցուրտն ու անշուք պայմանները չէին խաթարում պարերի գեղեցկությունն ու հպարտ կեցվածքը. այսպիսին է հայը: Շռայլությունն ու ճոխությունը չեն դառնում հայի հերոսական ու մարտական աննկուն ոգու որոշիչը:

Արհամարհելով կյանքի ու կենցաղային դժվարություններն ու զրկանքները՝ մարդիկ այստեղ աշխատում են խղճի մտոք, արարում ու կերտում երկրի ապագան հայրենասեր ու անձնվեր սերնդով:

Այստեղ տեղին է հիշատակել մեծ բանաստեղծի խոսքը.

Եվ չի հաղթի ոչինչ այն հին ժողովրդին,
Որ այս ջանքով
Ու այս կամքով
Պարել գիտի…

Սուրայա ՂԱԶԱՐՅԱՆ
Խնապատի միջն. դպրոցի հ.լեզվի եւ գրականության ուսուցչուհի

ՁԵՐՄ ՈՒ ԱՆԿԵՂԾ ՄԹՆՈԼՈՐՏՈՒՄ

Աշնան արևի ցանկալի ջերմությո՞ւնն էր պատճառը, թե՞ Ակնաղբյուրի դպրոցի աշակերտների այտերի շիկնանքն ու աչքերի ցոլքը, որ օրը հրաշալից էր ու անսովոր, հուզիչ ու հիացական...

Հոկտեմբերի 27-ին Ակնաղբյուրի Վարդան Ջիվանշիրյանի անվան միջնակարգ դպրոցում (տնօրեն՝ Ա. Ղարամյան) հաճելի եռուզեռ էր: Դպրոցն ընդունել էր հյուրեր ԱՀ ԿԳՍ նախարարությունից՝ վարչության պետ Ռայա Մուսայելյանի գլխավորությամբ: Բաց դասերին մասնակցելու էին եկել մանկավարժներ Ավետարանոցից, Սղնախից, Ջրաղացներից, Մադաթաշենից: Աչք էր շոյում դպրոցի ներքին կահավորումը. հայ դասականների գունավոր մեծադիր նկարները՝ նրանց ստեղծագործությունները ներկայացնող պատկերներով, ակնաղբյուրցի զոհված ազատամարտիկների հուշակոթողը պատկերող կտավը, առարկայական պատի թերթերի թարմ շունչը, թերթեր, որոնք նաև դպրոցի տաղանդավոր աշակերտների հաջողություններն են ներկայացնում: Նախարարության աշխատակիցները չէին մոռացել ուշադրության կենտրոնում պահել մանկավարժներին. նրանց նվիրեցին գրենական պիտույքներ:

Զանգի ղողանջը դասարաններ կանչեց մանկավարժներին: Բաց դասեր կազմակերպվեցին հայոց պատմությունից (6-րդ դասարան, ուսուցիչ՝ Ա. Ավանեսյան), մայրենի լեզվից (2-րդ դասարան, դասվար՝ Կ.Պողոսյան), կենսաբանությունից (9-րդ դասարան, ուսուցիչ՝ Լ. Մարգարյան): Բաց դասերի քննարկումը վերածվել էր ջերմ զրույցի հարգարժան հյուրերի և դասերը կազմակերպած ուսուցիչների միջև:

Կենսաբանության դասի ընթացքում փորձառու ուսուցչուհին հմտորեն է հարաբերել տեսականը գործնականին, սահուն անցումով աշակերտներին մղել ինքնուրույն աշխատանքի: Հայոց պատմության դասը յուրօրինակ էր զննական պարագաների տեղին օգտագործմամբ և աշակերտների ակտիվությամբ: Երկրորդ դասարանի մայրենիի բաց դասի առաջադրանքներից հատկապես մեկը գրավիչ էր՝ «Նկարի՛ր և նվիրի՛ր»: Սա և՛ գեղագիտական, և՛ բարոյական դաստիարակության առիթ էր:

Մի առանձնահատուկ բաց դաս էր «Ոսկե աշուն» խորագրով հանդեսը (կազմակերպիչ՝ Ի.Հայրապետյան): Ցերեկույթը ներկաներին տարավ մանկության հրաշք աշխարհը. աշնան ոսկին էր խոսում, տերևների մեղմ շրշյունն էր օրորում մեր հուշերը: Արտասանում էին աշակերտները, և աշունը նրանց խոսքում գորովագութ տատիկ էր դառնում, որն անակնկալ է մատուցում թոռանը՝ նրան պարզելով սիրած միրգը: Հնչեցին Վահան Տերյանի, Գուրգեն Գաբրիելյանի չքնաղ բանաստեղծությունները: Ուշագրավ էր հատկապես «Մրգահանդես» բաժինը: Տոնին մասնակից յուրաքանչյուր ասմունքող աշակերտ մի միրգ էր ներկայացնում՝ նուռ, սերկևիլ, տանձ, խնձոր, խաղող... Յուրաքանչյուր միրգ-աշակերտ հպարտորեն իր առավելությունն էր հիշեցնում ունկնդրին: Վերջում տասներորդցիների կատարմամբ հնչեց «Կենաց երգը», որում բոլորիս բաղձանքը կա.

Բարի բե՛ղք մաղթենք մեր հողին,
Մեր հողի ոսկե խաղողին,
Խաղողից գինի քամողին,
Արցախը ազատ պահողին:

Օրը հագեցած էր ցանկալի մարդկանց հետ հանդիպումի ջերմությամբ, աշակերտների արտակարգ ակտիվությամբ, տպավորությունների հարստությամբ:

Աշնան պես ակնկրկնելի ու շռայլ էր օրը, աշնան արևի պես ջերմ, աշնան ոսկիով օծուն...

Էվելինա ՂՈՒԼՅԱՆ
Ասկերանի շրջ. Ակնաղբյուրի միջնակարգ դպրոցի հ.լեզվի եւ գրականության ուսուցչուհի

ԲԱՑ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ

Հոկտեմբերի 25-ին Մարտունու Մոնթե Մելքոնյանի անվան մանկապարտեզի միջին և ավագ՝ «Արևիկ» և «Ճուտիկներ» խմբերում անցկացվեցին ընթացիկ տարվա առաջին շրջանային դաս-պարապմունքները: Մասնակցում էին Մարտունու հ.1, Ճարտարի հ.1 և հ.2, Գիշու, Մաճկալաշենի մանկապարտեզների միջին և ավագ խմբերի 20 դաստիարակներ:

«Արևիկ» խմբի դաս-պարապմունքը վերաբերում էր խոսքի զարգացմանը, թեման՝ «Պապն ու շաղգամ»-ը:

Դաստիարակ Վարդուհի Միրզոյանը ներկայացրեց դաս-պարապմունքի նպատակը, այն է՝ երեխաներին սովորեցնել կազմել նախադասություններ ըստ սյուժետային պատկերի, անվանել առարկաների գտնվելու վայրը, զարգացնել կապակցված խոսքը, երկխոսելու ունակությունը, հարստացնել բառապաշարը, դաստիարակել գեղեցիկ խոսելու, հորինելու, հեքիաթի հերոսներին նմանակելու հմտություններ, հուզական արձագանք՝ անհրաժեշտ պարագաներով:

Դաս-պարապմունքը սկսվեց «Ավարտիր նախադասությունը» դիդակտիկ խաղով և ավարտվեց ընդհանուր ամփոփմամբ: Նկարի միջոցով ամփոփվեց «Աշուն» թեման, կազմակերպվեց ֆիզրոպե, որից հետո դիդակտիկ խաղ՝ «Նկարագրիր առարկան» վերնագրով: Ներկայացվեցին հանելուկներ, ասացվածքներ, բեմականացվեց «Պապն ու շաղ-գամը» ստեղծագործությունը:

«Ճուտիկներ» խմբի դաս-պարապմունքը մաթեմատիկա առարկայից էր՝ «1-5 թվերի

ամրապնդում» թեմայով: Սովորեցնել ուղիղ հաշվել 10-ի սահմանում, հետ և կարգային հաշվել 5-ի սահմանում, ձևավորել պատկերացում 1-5 թվերի մասին, զարգացնել երկրաչափական պատկերները շոշափելու, գտնելու և անվանելու ունակություններ, ժամանակի և տարածության մեջ կողմնորոշվելու, դաստիարակել լսելու, դիտելու, հարցին ճիշտ պատասխանելու, ինքնուրույն աշխատելու կարողություններ, ամրապնդել երեխաների պատկերացումներն այն մասին, որ թիվը կախված չէ առարկաների մեծությունից, տարածական դասավորությունից, հաշվելու ուղղությունից: Այս նպատակն ուներ «Ճուտիկներ» խմբի դաստիարակ Կարինե Առստամյանի կազմակերպած դաս-պարապմունքը: Երեխաները շատ ակտիվ էին, բավականին արագ էին կողմնորոշվում դաստիարակի հարցադրումների մեջ ու ճիշտ պատասխաններ տալիս:

Դաս-պարապմունքները պարունակում էին տեսողական, տրամաբանական հիշողությունը զարգացնող տարրեր և կրում ճանաչողական բնույթ: Երեխաները կարողացան միմյանցից տարբերել իրերն ու առարկաները, ճիշտ ու արագ կողմնորոշվել ինչպես բանահյուսության տեսակների, այնպես էլ տրամաբանությունն ու հիշողությունը բացահայտող առաջադրանքների մեջ:

Մարտունու շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի առաջատար մասնագետ Անուշ Հովսեփյանը իր գոհունակությունը հայտնեց դաս-պարապմունքներից և ընդգծեց դասասենյակների համապատասխան կահավորումը, գրատախտակը և անհրաժեշտ դիտողական պարագաներ, միջին խմբում՝ աշնան մեծադիր նկար, մրգեր, բանջարեղեն, հեքիաթի հերոսների զգեստներ, գլխարկներ, հեքիաթը պատկերող կտավ, աշնանային բնական տեսարան, շաղգամ, առարկայական նկարներ, իսկ ավագ խմբում՝ երկրաչափական պատկերներ, թվաքարտեր, գնդակ, փափուկ խաղալիքներ, կախարդական արկղիկ, համապատասխան նկարներ օգտագործելը:

Դաստիարակներ Վ.Միրզոյանը և Կ.Առստամյանն իրենց խոսքում նշեցին, որ երեխաները յուրացրել են կիսամյակային թեմաները, ասացին, որ դաս-պարապմունքների հաջողությունը պայմանավորված է համատեղ աշխատանքով, ինչի համար շնորհակալություն հայտնեցին տնօրինությանը և գործընկեր դաստիարակներին:

Մեթոդիստ Հ.Մկրտչյանը դաս-պարապմունքները համարեց կայացած, ինչը, ըստ նրա, հետևողական աշխատանքի արդյունք է: Նշեց, որ երեխաները կողմնորոշվեցին ժամանակի ու տարածության մեջ, տարբերեցին աշուն եղանակի գույներն ու առարկաները:

Դասալսումներին ներկա բոլոր դաստիարակները կիսեցին իրենց տպավորությունները, հավանություն տվեցին պարապմունքներին: Ոմանց համար դրանք ուսուցողական էին:

Արմինե ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԲԱՑ ԴԱՍԸ ՀԱՋՈՂՎԱԾ ԷՐ, ԸՆԴՕՐԻՆԱԿՄԱՆ ԱՐԺԱՆԻ

Նոյեմբերի 3-ին Ասկերանի շրջանի Իվանյանի համայնքի մանկապարտեզում կազմակերպվեց երաժշտության բաց դաս: Ներկա էին Ասկերանի շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ Սվետլանա Ասրյանը, Ասկերանի ՄՊՍԿ տնօրեն Մերի Գաբրիելյանը, Այգեստանի, Ավետարանոցի, Ակնաղբյուրի, Խնձրիստանի, Խաչենի, Խնապատի, Հարավի մանկապարտեզների տնօրեններ, դաստիարակներ, երաժշտական ղեկավարներ:

Բաց դասը կազմակերպվել էր ավագ խմբում, ուր հաճախում է 19 երեխա: Երաժշտական խմբի ղեկավար Նանար Ղազարյանը ողջունեց հյուրերին՝ նշելով, որ կարճ ժամանակում կարողացել է փոքրիկներին նախապատրաստել այս հանդեսին և հույս ունի, որ նրանք կկարողանան հաճելի պահեր տրամադրել հանդիսատեսին:

Դասասենյակը զարդարված էր աշնանային երանգներով ու բազմագույն ծաղիկներով: Առատ բարիքներով ու ձեռքի յուրօրինակ աշխատանքներով զարդարված աշնան անկյունն անմիջապես աչք էր շոյում:

Երեխաների բաց դասն սկսվեց գեղեցիկ ելույթով, որը վերաբերում էր աշնան հրաշագեղ եղանակին: Նրանք պատմեցին, թե ինչպիսի բազմերանգ գույներ ունի աշունը և ինչ անուշաբույր ու ոսկեհամ մրգեր: Այնուհետև երաժշտական խմբի ղեկավարը հարցեր տվեց երեխաներին երաժշտական նոտաների, գործիքների մասին և ստացավ անսխալ պատասխաններ: Փոքրիկները լավ գիտեն նաև հայ հայտնի երգահանների անունները, անգամ նրանց ճանաչում են դեմքով: Մեծ խանդավառությամբ պատասխանում էին ցանկացած հարցի: Մանուկների դեմքը փայլում էին ուրախությունից, իսկ անծանոթ հյուրերը նրանց ամենևին չէին կաշկանդում: Ավելին, փոքրիկները ցանկանում էին ավելի լավ ներկայանալ, որպեսզի արդարացնեն երաժշտական ղեկավարի սպասելիքները: Նրանց պարը, արտասանությունը մի յուրահատուկ ջերմություն սփռեցին դահլիճում:

Մանկապարտեզի տնօրեն Արևիկ Թովմասյանն իր գոհունակությունը հայտնելով միջոցառման մակարդակից՝ նշեց, որ Նանար Ղազարյանն իր աշխատանքը կատարում է մեծ սիրով, բարձր պատասխանատվությամբ: Այս հանդեսին նա պատրաստվել էր կարճ ժամկետում, բայց ակնհայտ էր, որ արդյունքը գոհացուցիչ է:

Շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ Սվետլանա Ասրյանի գնահատականը նույնպես դրական էր.

- Մենք հիացանք փոքրիկների ելույթներով: Շնորհակալություն մեր երիտասարդ մասնագետին: Անմիջապես զգացվեց, թե ինչ ջերմ կապ է ստեղծված նրա և երեխաների միջև: Անհնար էր չզգալ այն անկեղծ ու մաքուր հայացքները, որ տածում էին բոլորը նրա հանդեպ: Նրանից հորդացող դրական լիցքեր ստանալով՝ երեխաները մեծ հաջողությունների կարող են հասնել: Չմոռանանք, որ հենց մանկապարտեզում է սկսում ձևավորվել մարդու աշխարհահայացքը: Շնորհակալություն մեր երկրի կառավարությանը, որ ստեղծել է այսպիսի հրաշալի պայմաններ, որտեղ երեխան կարող է ստանալ

հայեցի դաստիարակություն:

Ակնաղբյուրի մանկապարտեզի դաստիարակ Բելա Իսրայելյանի տպավորությունները հուզիչ էին. «Ամեն մի երեխա պետք է ունենա իր մանկությունը, հեքիաթի իր աշխարհը: Ուստի կարևոր է, որ յուրաքանչյուր երեխա կարողանա դաստիարակվել հենց այսպիսի պայմաններում: Հուսով եմ, որ մի օր էլ մեր երեխաները կհաճախեն նման գեղեցիկ, լուսավոր և պայծառ շենք»:

Ելույթ ունեցան նաև Խաչենի մանկապարտեզի տնօրեն Ալինա Առստամյանը, Այգեստանի մանկապարտեզի երաժշտական ղեկավար Արթուր Պետրոսյանը: Կիսելով իրենց տպավորությունները՝ նրանք տվեցին նաև մասնագիտական խորհուրդներ:

Բոլոր ելույթ ունեցողներն ընդգծեցին փոխադարձ այցելությունների կարևորությունը, ինչը փորձի փոխանակման լավ հնարավորություն է: Դասն օրինակելի էր, գնահատելի է երաժշտական ղեկավարի աշխատանքը:

Հիրավի, մեզանից յուրաքանչյուրը գիտի, որ երեխայի առօրյան պետք է անցնի գեղեցկության, խաղերի, հեքիաթների, երաժշտության, նկարների, ստեղծագործության աշխարհում: Իվանյանի մանկապարտեզի երաժշտության բաց դասն այս ամենի վառ ապացույցն էր: Խմբի դաստիարակ Սուսաննա Դանիելյանի և երաժշտական ղեկավար Նանար Ղազարյանի համատեղ աշխատանքը ներկաներիս ապացուցեց, որ Իվանյանում աճող մատաղ սերունդը հուսալի ձեռքերում է…

Կարինե ԲԱԽՇԻՅԱՆ

ԵՂԵԳՆՈՒՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՓՈՔՐԻԿՆԵՐԸ ՆՈՐ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՈՒՆԵՆ

Անհատի կրթությունը սկսվում է նախակրթարանից: Այստեղ է սկսում ձևավորվել երկրի ապագա քաղաքացին:

Օրերս Շահումյանի շրջանի Եղեգնուտ համայնքի մանկապարտեզում տոն էր, քանի որ վերաբացվեց հիմնովին վերանորոգված, նոր պայմաններով, գեղեցիկ ու արդիական պահանջներին համապատասխան շենքը: Չնայած մանկապարտեզը գործում է 2009 թվականից, շենքային պայմաններն արդեն չէին բավարարում օրեցօր զարգացող համայնքին, և այն բարեկարգելն ու երեխաների ժամանակակից պահանջներին համապատասխանեցնելը դարձել էր հրամայական: Մանկապարտեզը վերանորոգվել է «Տորոնտոյի համազգային հայ կրթական և մշակութային միության» ֆինանսավորմամբ:

Մեր ուրախությունը կիսելու էին եկել բազմաթիվ հյուրեր: Ազգային կոլորիտով ձևավորված բակում միջոցառման մշակութային մասն ու բարձր տրամադրությունն ապահովեց Երևանից հյուրընկալված «Կէ-

ան» մշակութային կենտրոնը: Ողջ ընթացքում միայն ազգային երգն ու պարն էին փոքրիկների ուղեկից: Բեմադրվեց նաև ազգային ծիսական տոնակատարությունից վերցված դրվագ: Օրն անցավ շատ ուրախ, իսկ երեխաներն անչափ երջանիկ էին:

Մանկապարտեզն օրհնեց շրջանի հոգևոր հովիվ, Դադիվանքի Տեր Հովհաննես քահանա Հովհաննիսյանը: Ներկա էր նաև ՊՆ N զորամասի հոգևոր սպասավոր Սուրեն սարկավագը:

Մոտ ապագայում Շահումյանի շրջանի վարչակազմի ղեկավար Հարություն Մնացականյանի ջանքերով մանկապարտեզը կհամալրվի նոր տեխնիկայով և կահույքով, բակը՝ նոր ու գունեղ խաղահրապարակով: Իսկ տիկին Լիլիի շնորհիվ դրախտ դարձած մանկապարտեզում մեր փոքրիկները կստանան նախնական կրթություն, ջերմություն ու զուտ ազգային դաստիարակություն, որը մեր հայեցի դաստիարակության անվիճարկելի արժեքներից է:

Հայազնուհի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԲԵՐՔԻ ՏՈՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ

Ստեփանակերտի հ.5 մանկապարտեզում անցկացվեց բերքի հանդես, որի գլխավոր «հերոսը» հացն էր: Այն կազմակերպել էր դաստիարակչուհի Օքսաննա Դանիելյանը: Երեխաներն իրենց դաստիարակչուհու հետ «էքսկուրսիա» կատարեցին դեպի հայրենի դաշտերն ու այգիները: Փոքրիկներն իրենց գիտելիքները ցուցաբերեցին ամենակարևոր սննդամթերքի՝ հացի մասին: Ներկայացրին, թե ինչպես է արարվում հացը:

Տոնականորեն զարդարված դահլիճի կենտրոնական մասում հացաթխման ազգային պարագաներն էին: Երեխաներն իրենց փոքրիկ ձեռքերով ալյուր մաղեցին, խմոր հունցեցին, գրտնակեցին ու կպցրին թոնրի պատին: Այդ ամենն ուղեկցվում էր երգ-երաժշտությամբ ու պարերով: Ֆիզկուլտդաղարները նույնպես աշնան ու հացի թեմաներով էին:

Հանդեսին մի առանձին հմայք տվեց երեխաների և դաստիարակչուհու ազգային տարազը:

Օքսաննա Դանիելյանը ամեն տարի կազմակերպում է բաց պարապմունք և ամեն անգամ մի անակնկալ մատուցում: Այս անգամ անակնկալը «Այայի երկիր» երգի նրա կատարումն էր սանի հետ:

Դաստիարակչուհու աշխատանքը դրվատանքի արժանացավ միջոցառմանը ներկա՝ Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՍ բաժնի վարիչ Կառլեն Մարգարյանի կողմից, որը նշեց, որ դա համերաշխ աշխատանքի արդյունք է, ու շնորհակալություն հայտնեց մանկապարտեզի տնօրինությանը, ողջ կոլեկտիվին:

Այդ առնչությամբ մանկապարտեզի տնօրեն Ս. Ավշարյանը իր երախտագիտությունը հայտնեց ծնողներին, առանց որոնց աջակցության այդքան հաջողված չէր լինի միջոցառումը: Հանդեսին ներկա էին ԿԳՍՆ պատասխանատու աշխատողներ:

Անահիտ ՄԵՍՐՈՊՅԱՆ

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ՏԱՐԲԵՐ ԵՂԱՆԱԿՆԵՐՈՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ավելի լավ է լուծել մեկ խնդիր տարբեր մեթոդներով, քան մի քանի խնդիրներ՝ մեկ մեթոդով:
Դ. Պոյա

Հոդվածում դիտարկվում է դպրոցական դասընթացի խնդիրների տարբեր եղանակներով լուծման նպատակահարմարության հարցը: Մեկ տասնյակից ավելի եղանակներով լուծված է ոչ բարդ եռանկյունաչափական մեկ հավասարում, որը հնարավորություն է տալիս ոչ միայն սովորողների հետ կրկնելու եռանկյունաչափական հավասարումների լուծման մեթոդները, այլև եռանկյունաչափության հիմնական բանաձևերը: Ցույց է տրված, թե ինչպես է տարբեր մեթոդների և հնարքների կիրառումը ազդում ուսումնական նյութի յուրացմանը և նպաստում սովորողների ճկուն մտածողության զարգացմանը:

Խնդիրների լուծումը տարբեր մեթոդներով ունի կարևոր մեթոդական նշանակություն և մեծ հնարավորություններ է ընձեռում մաթեմատիկայի ուսուցման պրոցեսի կատարելագործման համար:

Առաջին. խնդիրների լուծման եղանակների փնտրումը ուսումնական պրոցեսի յուրացման գիտակցական և ակտիվության դիդակտիկական սկզբունքների իրականացման արդյունավետ ճանապարհներից մեկն է: Միևնույն խնդրի տարբեր մեթոդներով լուծման ժամանակ հաճախ սովորողներին ծանոթ վարժությունը ներկայանում է որակապես նոր պայմաններով, կրկնվում նոր կապերով ու համակցությամբ:

Երկրորդ, խնդրի լուծումը տարբեր եղանակներով սովորողներին հարկ է լինում օգտագործել շատ տեսական գիտելիքներ, մեթոդներ ու հնարքներ, վերլուծել դրանք տվյալ խնդրի տրված վիճակում կիրառելիության տեսակետից, ինչը նպաստում է մտածողության ճկունության ձևավորմանը:

Երրորդ. մի խնդրի լուծման տարբեր եղանակների փնտրման պրոցեսում գերիշխում է ստեղծագործական մտածողությունը, ինչը նպաստում է սովորողների ինտելեկտի զարգացմանը:

Բացի դրանից, տարբեր եղանակներով խնդիրների լուծումը ուղղված է նաև սովորողների գեղագիտական դաստիարակությանը: Հատկապես այստեղ դպրոցականները սովորում են ինքնուրույն գտնել խնդրի ավելի պարզ և գեղեցիկ լուծումներ, սկսում են տեսնել մաթեմատիկայի տարբեր բաժինների փոխադարձ կապերը, մաթեմատիկա գիտության գեղեցկությունը:

Խնդրի լուծումը տարբեր եղանակներով միանգամայն բնականորեն միահյուսվում է դասերի անցկացման պրոցեսին: Նկատվել է, որ ծրագրի որև բաժնի ընդհանուր կրկնության ժամանակ նպատակահարմար է օգտագործել խնդիրներ, որոնք լուծվում են տարբեր եղանակներով և ընդգրկում են տեսական մեծ նյութ: Օրինակ՝ «Եռանկյունաչափական հավասարումներ» թեմայով ընդհանուր կրկնության ժամանակ շատ արդյունավետ է

$$\sin x + \cos x = 1 \qquad (1)$$

հավասարման լուծման հնարավորինս շատ եղանակներով լուծումներ գտնելը: Միայն այս առաջադրանքի լուծմամբ սովորողների հետ հնարավոր կլինի կրկնել ոչ միայն եռանկյունաչափական հավասարումների լուծման մեթոդները, այլև եռանկյունաչափության հիմնական բանաձևերը, իսկ հետագայում ներգրավել այլ բաժինների խնդիրներ:

Մանկավարժական պրակտիկայում հայտնի է պարապմունքի այնպիսի ձև, ինչպիսին է «Հիմնարար խնդիրների լուծման դաս»-ն որը հենվում է հենց ոչ մեծաքանակ խնդիրների տարբեր եղանակներով լուծման վրա:

Ներկայացնենք (1) հավասարման լուծման տարբեր եղանակներ:

I եղանակ : (1) հավասարումն իրենից ներկայացնում է

$$a\sin x + b\cos x = c \qquad (2)$$

հավասարման մասնավոր դեպքը, երբ $a = b = c = 1$: Դպրոցական դասընթացից հայտնի է, որ (2) հավասարումը կարելի է լուծել լրացուցիչ անկյուն մուծելու եղանակով.

$$\sin\varphi = \frac{a}{\sqrt{a^2+b^2}}, \cos\varphi = \frac{b}{\sqrt{a^2+b^2}},$$

կամ որ նույնն է՝ $tg\varphi = \frac{a}{b}$ և $\varphi = arctg\frac{a}{b}$:

Արդյունքում (2) հավասարումը բերվում է

$$\cos(x-\varphi) = \frac{c}{\sqrt{a^2+b^2}}, \qquad (3)$$

տեսքի: Եթե $\frac{|c|}{\sqrt{a^2+b^2}} < 1$, (3) հավասարումն ունի լուծում, իսկ եթե $\frac{|c|}{\sqrt{a^2+b^2}} > 1$, լուծում չունի: (1) հավասարման դեպքում ունենք

$$tg\varphi = 1, \varphi = \frac{\pi}{4}, \qquad \frac{c}{\sqrt{a^2+b^2}} = \frac{\sqrt{2}}{2}$$

և (3) հավասարումը բերվում է

$$\cos\left(x - \frac{\pi}{4}\right) = \frac{\sqrt{2}}{2}, \qquad (4)$$

հավասարման, որի լուծումն է

$$x - \frac{\pi}{4} = \pm\frac{\pi}{4} + 2\pi k$$

Այստեղից՝

$$x = 2\pi k, \quad x = \frac{\pi}{2} + 2\pi k, \quad k \in Z \qquad (5)$$

Նշենք, որ հետագա գրություններում ևս, թեպետ չի նշվում, $k \in Z$ և $n \in Z$:

II եղանակ: (2), հետևաբար, և (1) հավասարման լուծման մյուս հայտնի եղանակը հետևյալ տեղադրությունն է.

$$\sin x = \frac{2tg\frac{x}{2}}{1+tg^2\frac{x}{2}}, \qquad \cos x = \frac{1-tg^2\frac{x}{2}}{1+tg^2\frac{x}{2}}$$

Տեղադրելով (1) հավասարման մեջ՝ ոչ բարդ ձևափոխություններից հետո ստանում ենք

$$tg\frac{x}{2}\left(tg\frac{x}{2} - 1\right) = 0$$

$$tg\frac{x}{2} = 0 \text{ կամ } tg\frac{x}{2} = 1.$$

Բնականաբար, նորից ստանում ենք (4) լուծումները՝

$$x = 2\pi k, \qquad x = \frac{\pi}{2} + 2\pi k$$

III եղանակ: Դիմենք բերման բանաձևերի օգնությանը և (1) հավասարումը ներկայացնենք հետևյալ տեսքերից մեկով.

ա) $\sin x + \sin\left(\frac{\pi}{2} - x\right) = 1 \Leftrightarrow \frac{2\sin\pi}{4}\cos\left(x - \frac{\pi}{4}\right) = 1 \Leftrightarrow \cos\left(x - \frac{\pi}{4}\right) = \frac{\sqrt{2}}{2}$

բ) $\cos x + \cos\left(\frac{\pi}{2} - x\right) = 1 \Leftrightarrow \frac{2\cos\pi}{4}\cos\left(x - \frac{\pi}{4}\right) = 1 \Leftrightarrow \cos\left(x - \frac{\pi}{4}\right) = \frac{\sqrt{2}}{2}$

Երկու դեպքերում էլ (1) հավասարումը բերվեց (4) հավասարմանը, որի լուծումն ունի (5) տեսքը:

IV եղանակ: (1) հավասարման երկու կողմը բարձրացնենք քառակուսի: Այստեղ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ (1) հավասարման ձախ մասը կարող է ընդունել ինչպես դրական, այնպես էլ բացասական արժեքներ: Հետևաբար, քառակուսի բարձրացման գործողության ժամանակ կարող են առաջանալ ավելորդ արմատներ: Իրոք՝

$$(\sin x + \cos x)^2 = 1 \Leftrightarrow 1 + 2\sin x\cos x = 1 \Leftrightarrow$$

$$\left[\begin{array}{l}\sin x = 0\\ \cos x = 0\end{array}\right. \Leftrightarrow \left[\begin{array}{l}x = \pi n\\ x = \frac{\pi}{2} + \pi n\end{array}\right.$$

Դեն նետելով քառակուսի բարձրացման արդյունքում առաջացած $x = \pi + 2\pi n$ և $x = \frac{3\pi}{2} + 2\pi n$ ավելորդ լուծումները՝ կստանանք (5) լուծումները;

V եղանակ: (1) հավասարությունը տեղի ունի, եթե

$$\left[\begin{array}{l}\begin{cases}\sin x = 0\\ \cos x = 1\end{cases}\\ \begin{cases}\sin x = 1\\ \cos x = 0\end{cases}\end{array}\right. \Leftrightarrow \left[\begin{array}{l}\begin{cases}x = \pi n\\ x = 2\pi k\end{cases}\\ \begin{cases}x - \frac{\pi}{2} + 2\pi k\\ x = \frac{\pi}{2} + \pi n\end{cases}\end{array}\right. \Leftrightarrow \left[\begin{array}{l}x = 2\pi k\\ x = \frac{\pi}{2} + 2\pi k\end{array}\right.$$

VI եղանակ: (1) հավասարումը ներկայացնենք

$$\sin x = 1 - \cos x$$

տեսքով, իսկ վերջինիս ձևափոխությամբ ստանում ենք.

$$2\sin\frac{x}{2}\cos\frac{x}{2} = 2\sin^2\frac{x}{2} \Leftrightarrow \left[\begin{array}{l}\sin\frac{x}{2} = 0\\ tg\frac{x}{2} = 1\end{array}\right. \Leftrightarrow \left[\begin{array}{l}x = 2\pi k\\ x = \frac{\pi}{2} + 2\pi k\end{array}\right.$$

VII եղանակ: (1) հավասարումը ներկայացնենք

$$\sin x + \cos x = \sin^2 x + \cos^2 x$$

տեսքով և ձևափոխենք այն

$$\sin x(1 - \sin x) + \cos x(1 - \cos x) = 0$$

տեսքի: Օգտվելով եռանկյունաչափության հայտնի բանաձևերից՝ կունենանք.

$$2\sin\frac{x}{2}\cos\frac{x}{2}(1 - \sin x) + 2\cos x\sin^2\frac{x}{2} = 0$$

$$2\sin\frac{x}{2}\left[\cos\frac{x}{2} - \left(\sin x\cos\frac{x}{2} - \cos x\sin\frac{x}{2}\right)\right] = 0$$

$$\left[\begin{array}{l}\sin\frac{x}{2} = 0\\ \cos\frac{x}{2} - \sin\frac{x}{2} = 0\end{array}\right. \Leftrightarrow \left[\begin{array}{l}\sin\frac{x}{2} = 0\\ tg\frac{x}{2} = 1\end{array}\right. \Leftrightarrow \left[\begin{array}{l}x = 2\pi k\\ x = \frac{\pi}{2} + 2\pi k\end{array}\right.$$

VIII եղանակ: (1) հավասարումը ներկայացնենք

$$\sqrt{1 - \cos^2 x} = 1 - \cos x$$

տեսքով և ձևափոխենք այն հետևյալ կերպ.

$$1 - \cos^2 x = (1 - \cos x)^2$$

$$1 - \cos^2 x = 1 - 2\cos x + \cos^2 x$$

$$\cos^2 x - \cos x = 0$$

Ստանում ենք՝

$$\left[\begin{array}{l}\cos x = 1\\ \cos x = 0\end{array}\right. \Leftrightarrow \left[\begin{array}{l}x = 2\pi k\\ x = \frac{\pi}{2} + \pi n\end{array}\right.$$

Վերցնում ենք միայն $x = 2\pi k$, $x = \frac{\pi}{2} + 2\pi k$ արժեքները:

IX եղանակ: (1) հավասարումը կարելի է ներկայացնել նաև

$$\sqrt{1 - \sin^2 x} = 1 - \sin x$$

տեսքով և կատարելով նախորդ եղանակում կատարված ձևափոխությունները, կունենանք

$$\left[\begin{array}{l}\sin x = 0\\ \sin x = 1\end{array}\right. \Leftrightarrow \left[\begin{array}{l}x = \pi n\\ x = \frac{\pi}{2} + 2\pi k\end{array}\right.$$

Վերցնում ենք միայն $x = 2\pi k$, $x = \frac{\pi}{2} + 2\pi k$ արժեքները:

(շարունակելի)

Ալեքսանդր ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ֆ.մ.գ.դ., ԱրՊՀ մաթեմատիկայի ամբիոնի պրոֆեսոր,
ԼՊՀ գիտության վաստակավոր գործիչ

ՈՒՍՈՒՑԻՉԸ՝ ՍԱՆԻ ՄԱՍԻՆ

ՆԱ ԿԴԱՌՆԱՐ 50 ՏԱՐԵԿԱՆ

Ուսուցչի հպարտության ու գնահատանքի գրավականն իր սաներն են: Որքան հաջողություն, այնքան հպարտություն ու հոգու հանգստություն, քանզի մտածում ես՝ զուր չեն անցել այն դասերը, որ տարիներ շարունակ համբերատար, սիրով ու քնքշանքով հաղորդել ես սաներիդ՝ վաղվա օրվա հանդեպ ունեցած մեծ հավատով...

Վառվռուն երազներով լեցուն մի աղջնակ էի, երբ ոտք դրեցի այն դպրոցը, որտեղ ուսանել էի, որտեղ դեռևս աշխատում էին իմ ուսուցիչները: Ավագ ջոկատավար էի և փորձում էի իմ առաջին քայլերն անել: Դժվար, շատ դժվար էր առաջին օրերին, բայց ես վերագտա ինձ ու այնպես կապվեցի թռվռուն, կարմիր վզկապ կրող փոքրիկներին, որ թվում էր՝ ողջ կյանքս սկսվել ու ավարտվել է նրանցով: Յուրաքանչյուր ուսուցչի կողքին, հիրավի, լինում են երեխաներ, որոնք ուզում են անպայման ցույց տալ իրենց պատրաստականությունն ու շնորհիքը, առանձնապես նրանք, որոնց թերևս գիրքը այնքան էլ չի ձգում...

Ես միշտ տեսնում էի նրան առաջամարտիկի դերում. տեսնում էի, հիանում, հպարտանում, որ ամենուր ինձ աջակցում է ու չնայած նրան, որ ընդամենը 6-րդ դասարանցի էր, երբեմն փորձում էր ինձ խորհուրդներ տալ, ասես մեծացած ու փոքրացած մանչուկ լիներ...

Թմբլիկ էր, կարմրաթուշ, մշտաժպիտ, միշտ կոկիկ հագնված ու ալ վզկապը կրած: Չեմ հիշում մի օր, որ նա, ի տարբերություն շատ տղաների, առանց վզկապի ներկայանար դպրոց: Էն գլխից էլ սիրեցի նրան ու դարձրի մեր դրուժինայի շեփորահարը: Այնպիսի պատասխանատվությամբ էր կատարում շեփորահարի իր պարտականությունը, ասես դրանից կարևոր գործ իր համար գոյություն չուներ: Շնորհաշատ էր. գրեթե ամեն օր իր հետ բերում էր փայտից կամ մետաղալարից պատրաստված ինքնաձիգ, հրացան կամ ատրճանակ: Այդ ամենը լրացնում էր մեր պիոներական սենյակի «Հմուտ ձեռքեր» անկյունը, որտեղ դրված էին նաև նրա կողմից նախշված բազմապիսի ճիպոտներ: Սիրում էր թատրոնը, օժտված էր արտիստական մեծ շնորհքով: «Գիքոր»-ում կինտոյի դեր ստանձնելով, այնպիսի ձայնով էր կանչում «դունի յաբլուկի», որ թվում է իրական, Թիֆլիսի շուկայից ժամանած կինտո էր՝ խնձորով լիքը զամբյուղը ուսած...

Ով կհավատար, որ այդ կենսուրախ, կենսախինդ պատանին մի օր կդառնա հավերժի ճամփորդ...

Օրերը գալիս ու գնում են: Օրերը հոսում են գետ ու գետակի նման, իսկ արցախցին հավատում էր, որ այդ եկող-գնացող օրերի հետ կգա բաղձալի օրը, և կունենա ազատ, անկախ, իր երազած տունն ու տեղը: Ինչպե՞ս չհավատար, երբ ապրում էր մի երկրում, որ կոչվում էր ԽՍՀՄ: Բայց ժամանակի հետ հասկացավ, որ իր հավատը սին է, քանզի իր կողքին ազերին է, նույն ինքը՝ թուրքը, պարզապես նոր հագուկապով, նոր գործելաոճով: Պիտի զինվել, պիտի գործի անցնել,- մտածում էր նա, ի՛մ սիրելի հերոսը՝ Արմեն Ավագյանը: Մտածում էր ու գործի անցնում: Առանց զենքի ի՞նչ կռիվ:

Հիշում է դպրոցական տարիների սարքած «զենքերը». այն իրական դարձնելու գաղափարը նրան հանգիստ չէր տալիս: Ու սկսվեց... քանի՜-քանի զենք ծնվեց նրա ձեռքից, ծնվեց ու դարձավ իր կողքին համախմբված քաջարի տղաների զենքը և ահուսարսափ սփռեց թշնամու մեջ: Ոչ միայն զենքի նորարար էր, այլև Ավոյի հրամանով դարձավ ձորակի վաշտի հրամանատար: Քանի՜-քանի անքուն գիշերներ է լուսացրել Ավդուռի, Մյուրիշենի, Կաղարծիի բարձունքներում, որ այդ գյուղերի մարդկանց հանգիստը չխաթարվի:

- Արմե՛ն, հասի՛ր, ազերին անհանգստացնում է,- գուժում էին եմիշճանցիներն ու սպիտակաշենցիները:

Արմենը, Ավոյի բնորոշմամբ՝ հզոր արծիվը, «Ուրալ» մակնիշի մեքենայի թափքում նստած, վաշտի տղաների հետ հասնում էր օգնության, պատուհասում թշնամուն, ապա կրկին շտաբ հասնում, որ ծրագրի առաջիկա անելիքները: Անելիքներ՝ որքա՜ն ուզես. գերված տղաներին ազատել, դեռ չծնված երեխային ու մորը սպանած ազերուց վրեժ լուծել, ազերի «լեզու» բռնել՝ իմանալու ինչ է մոգոնում անհիրավը, Մարտունու հիվանդանոցում ռուս զինվորների հսկողության տակ գտնվող վիրավոր Արտյոմի փախուստի կազմակերպումը.... Աչքերը կարմրել էին անքնությունից, բայց դրա մասին ի՞նչ մտածելու ժամանակ է... Քնե՞լ, կգա պահը, մտմտում էր ու շտապում ծնունդ տալու իր ծրագրերին... Բոլորը վստահում էին նրան, որովհետև չկար գործ, որ ձախողեր: Ոչ միայն վստահում, այլև սիրում ու պաշտում էին նրան:

Երկնակամարում՝ ամպի ոչ մի ծվեն, արևը հուրհրատում էր ու իր ջերմ շողերը սփռում աշխարհի վրա, թռչուններն էլ մեղմիվ ծլվլում էին: Անհոգ էր բնությունը, անհոգ ինչպես մի նորածին մանչուկ: Սակայն խռովված էին մարդկանց հոգիները, անհանգիստ ու փոթորկված... Տղաները մարտի են գնացել, գնացել են լռեցնելու Գյուլափլուի կրակակետերը, որոնք շրջակա գյուղերի համար պատուհաս էին դարձել:

Անվեհեր ու անկոտրում հրամանատարը՝Արմենը, առջևում էր՝ խրոխտ ու ոգեկոչող ձայնով: Տղաներն աներեր առաջ էին շարժվում. վախենալու ի՞նչ կա, երբ Արմենը իրենց կողքին է: Հանկարծ երկնակամարում երևաց թշնամու երկու ուղղաթիռ: Տղաները մի պահ շփոթվեցին, բայց նույն վայրկյանին ռադիոկապով հնչեց նրա ձայնը՝ կրակե՛լ, ու տղաները կրկին իրենց հավաքեցին ու սկսեցին առաջ շարժվել: Ուղղաթիռներից մեկը գահավիժում է ցած: Հաղթանակը մոտ էր, սակայն թշնամու օգնական ջոկատի մոտենալը ստիպեց հրամանատարին նահանջի հրաման տալ: Տղաները՝ իրար թև ու թիկունք դարձած, կրակելով նահանջում էին...

Պայծառ առավոտին տեղի տվեց մշուշապատ երեկոն: Մթնշաղ էր: Տղաները, մեկմեկու փսփսում էին, որ հրամանատարը չկա: Ո՞ւր կլինի: Նա բոլորին տուն էր ճամփել, իսկ ի՞նքը...

Անցան սպասողական, սրտմաշուկ ու կեղեքող օրեր: Բոլորը հավատում էին, որ նա կգա, գուցե գերվե՞լ է և Ստեփանակերտից բերված բարձրաստիճան գերուն այնպիսի պատասխանատվությամբ էին պահում, որ փոխանակեն:

Երազ տեսա, երազում նրան՝ իմ սիրելի աշակերտին: Ասում էր, որ վաղը կգա: Եկավ վաղը, բայց ցավոք, նա ոչ թե իր եկավ, այլ բերեցին: Նա գերի չէր, նահատակվել էր իր վաշտի մի քանի տղաների հետ: Անհիրավ գնդակը գտել էր նրան, գտել ու կիսատ թողել նրա բոլո՜ր-բոլոր երազանքները...

Արմենը հոկտեմբերի 31-ին կդառնար 50 տարեկան: Ընկերներն ու համագյուղացիները նշում էին նրա ծնունդը:

Սիրելի՛ հերոս, իմ փոքրիկ թիմուրական, հոբելյանական տորթ ու մոմեր չկային, կային միայն ջերմ ու հուզառատ, քեզ գովաբանող, քո ինքնությունը բացահայտող ելույթներ, մտերմիկ հուշեր...

Քո տորթի փոխարեն բյուր ծաղիկներ խոնարհեցին քո շիրմին, իսկ մոմերը... մոմերը միշտ են, որ դողդոջուն ձեռքերով, խունկի հետ միասին, վառում են կինդ, մինուճար աղջիկդ, զինակիցներդ և այն պարմանիներն ու պարմանուհիները, որոնց համար դարձել ես անմահ հերոս, խորհրդատու մարտիկ...

Ի՛մ փոքրիկ շեփորահար, ամեն օր մտովի զրուցում եմ քեզ հետ, պատմում այն հրաշք թռռներիդ մասին, որոնք մեծանալով՝ պիտի հպարտանան, որ իրենց պարգևել ես Հերմինե մայրիկ, ազատ Արցախ, անվրդով այգաբացներ:

Ես գիտեմ, որ միշտ համեստ էիր ու շռայլ, քեզ գովաբանող խոսքեր չէիր սիրում: Ի՞նչ անենք, հիմա էլ լռե՞նք... Լռել՝ կնշանակի մոռանալ, մոռանանք հերոսին, լավ մարդուն, ընտանիքի հորը, հավատարիմ ընկերոջն ու ուշիմ աշակերտին, կնշանակի ինքներս մեզ մոռանանք, մեր պատմությունն ու մեր լինելիությունը:

Ուրեմն՝ հիշենք բոլորին անուն առ անուն, դա զոհվածներին պետք չէ՝ ես գիտեմ, բայց ապրողներիս շատ է հարկավոր...

Լիանեպա ԻՇԽԱՆՅԱՆ
Աշանի միջն. դպրոցի
հ. լեզվի եւ գրակ.
ուսուցչուհի

ԱՅՍՊԻՍԻՆ ԷՐ ՄԵՐ ԴՊՐՈՑԻ ՆԱԽԿԻՆ ՍԱՆԸ

Միջնակարգն ավարտել է 1989-ին: Ավարտել է փայլուն գնահատականներով ու նույն տարում ընդունվել Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի բուժական ֆակուլտետը: Բժիշկ պիտի դառնար, բայց չհասցրեց, ուսումը կիսատ թողեց: 1991-ին, լինելով երկրորդ կուրսի ուսանող, անդամագրվեց Նիկոլ Դումանի անվան ջոկատին ու եկավ Արցախ: Եկավ հայրենի հողը պահելու, եկավ՝ կռվելու և հերոսանալու:

- Ջոկատի հոգին էր նա ու լավագույն հետախույզ,- մարտական ընկերն են ասում ու բազում օրինակներով հաստատում:

Քանի՜-քանի անգամ քայլել-անցել է մահվան ճամփեքով՝ օրինակ ծառայելով շատերին: Ֆիդայու քաջությունը, մարտական կեցվածքը, համեստությունը, շիտակությունը բնորոշ էին նրան:

Ջոկատի հրամանատար Մուրադ Մուրադյանը, որ մասնագիտությամբ մանկական վիրաբույժ էր, կոչումով՝ կապիտան (զոհվել է 1996-ի մարտի 10-ին, ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ), սիրում էր հաճախակի կրկնել.

- Արմե՛ն, մեզանից ամենից շատ դու ես նման ֆիդայու՝ թիկնեղ, բարձրահասակ, պարթևահասակ ու ազդեցիկ դեմքով: Իսկ Արմենը մեղմ ժպտում ու համեստորեն պատասխանում էր.

- Մենք ի՞նչ ֆիդայիներ ենք, մենք ընդամենը զինվորներ ենք, ֆիդայիներն ուրիշ էին...

Այսպիսին էր Արմենը՝ մեր դպրոցի նախկին սանը: Չէր սիրում արածի մասին խոսել, մեծամտել, իր հերոսական արարքը դրոշ դարձնել: Ի դեպ, նա, իբրև հերոս, իրեն տակավին դրսևորել էր Երասխավանի ու Նոյեմբերյանի համար մղված մարտերում: Նա արիասիրտ զինվոր էր, իսկական ռազմիկ: Զինվոր էր՝ մտածողությամբ, հոգով ու կոչումով: Ու զոհվեց, ինչպես վայել է մարտիկին՝ կռվի դաշտում, զենքը ձեռքին: Իսկ դա եղավ այսպես.

- 1992-ի ապրիլի 1-ին ջոկատը, որի ոգին էր Արմենը, հատուկ առաջադրանքով գալիս է Ասկերանի շրջանի Աղբուլաղ (Սառնաղբյուր) գյուղը:

Օրեր, շաբաթներ անց գյուղի պաշտպանության համար դիրքավորվեցին: Շուտով լուր ստացվեց, որ գյուղի վրա երեք տանկ է գալու:

- Մեկին ես կխփեմ, կհանեմ շարքից, մյուսները կփախչեն,- շատ ինքնավստահ ասում է Արմենը:

Բայց տանկերը երեքը չէին, ոչ էլ՝ հինգը: Շատ էին: Երևացին նաև բեռնատարներ՝ տասնյակ հետևակներով: Արմենը իր երկու ընկերների հետ ելավ մարտի: Ուժերը, սակայն, խիստ անհավասար էին: Ու երբ Արմենը տանկից արձակված արկից վիրավորվեց, կրակն իր վրա վերցրեց փոքր-ինչ հեռվում դիրքավորված Աշոտը: Վերջինս կարողացավ թաքցնել Արմենի դիակը: Շուտով Աշոտը ևս մահացու վերք է ստանում: Թուրքերը նրան գերի են վերցնում ու ծառից կախելով՝ խոշտանգում...

Երրորդի՝ Սլավիկի ճակատագիրն առայսօր մնում է անհայտ: Թուրքերը համոզված էին, որ ֆիդայիները փորձելու են մարտի դաշտից հանել զոհված ընկերների դիակները: Ու՝ սպասում էին: Երբ Ստեփանակերտից օգնություն ու համալրում ստացած ջոկատը հարձակման անցավ, փախուստի դիմած թուրք խուժանը, իր տված շատ ու շատ զոհերի հետ միասին, թողեց նաև Արմենի ու Աշոտի դիակները:

Յոթ օր հետո քեռին՝ Վլադիկ Աղաբեկյանը (ի դեպ, երեք ամիս անց ինքն էլ զոհվեց) մի խումբ մարտիկների հետ դուրս բերեց Արմենի ու Աշոտի դիակները: Արմենին հողին հանձնեցին հայրենի Մեծ Թաղերում: Քսան տարին դեռ չէր բոլորել, այո՛, քսանը դեռ չէր բոլորել, բայց նման էր հասուն, առնական տղամարդու: Մեծ մտքի տեր էր, նաև՝ մեծ ուժի: Մայրը՝ բուժքույր Վալյան (ափսո՛ս, հիմա չկա) արցունքը հազիվ զսպելով, պատմում էր, որ իրենք սկզբում չգիտեին, տեղյակ չէին, որ Արմենը ուսումը թողել ու անդամագրվել է «Նիկոլ Դուման»-ին: Ասում էր՝ հետո են իմացել, Արմենը թաքցրել էր ամեն ինչ:

«Մայրի՛կ, ես չեմ կարող տանը հանգիստ նստել, երբ հարյուրավոր, հազարավոր ջահելներ կռվի են ելել հանուն Արցախի: Իմացե՛ք, մեր առջև ձգվում է արյունով ներկված երկար ու դժվարին մի ճանապարհ, որ տանում է դեպի Արցախի, դեպի մեր հող ու ջրի վերջնական ազատագրում: Մի բան եմ խնդրում միայն՝ իմ մասին քիչ մտածեք ու ձեզ լավ պահեք: Մի խնդրանք էլ. անպես արեք, որ մեր փոքրիկ Գայանեն (քույրն է) լավ սովորի, որ կարողանա բժշկական ընդունվել...»:

Սա նախավերջին նամակն էր: Վերջինը եղել է սրտից հորդացող արյունով՝ հազար ու մի ծաղիկ ծնող վառ մայիսին՝ արևի շողերի ժպտացող, հուրհրատող կանաչի վրա:

Տարիներ են անցել, ու հիմա Արմենը դարձել է երազ, դարձել է սեր ու կարոտ, հուշ ու լեգենդ, դարձել պատմություն: Հիմա նա բոլո՜ր-բոլոր հարազատներին, քրոջը՝ Գայանեին (հիշեցնենք, որ իրականացել է Արմենի բաղձանքը) նայում է նորից, բայց արդեն... քարից: Իսկ քարի վրա փորագրված է ուսանողական տարիներին գրած նրա բանաստեղծությունը, որ վերջանում է այս բառերով.

«Ես գնում եմ ու ասում եմ ձեզ՝ մնացե՜ք բարով...»: Սիրտը զգացել է, երևի. իմացել է, որ ինքը պիտի գնա ծաղիկ հասակում ու... վառ կանաչը ներկի կարմիրով: Ի՜նչ իմաստ: Երևի սա է եղել նրա ճակատագրի խորհուրդը: Ափսո՜ս, հազա՜ր ափսոս... Բայց մեռնո՞ւմ են, արդյոք, դյուցազունները, մեռնո՞ւմ են լեգենդ դարձած հերոսները...

Դու, Արմե՛ն, այսօր էլ մեզ հետ ես, մեր կողքին: Քո մասին դեռ լեգենդներ պիտի հյուսվեն, քանզի տակավին ողջ՝ դու արդեն լեգենդ էիր՝ հերոս ֆիդայու կյանքով, ու համոզված եմ, որ քո անունն ու գործը ո՛չ միայն ներշնչելու և ոգեկոչելու են մեծերին ու փոքրերին, այլև դառնալու են սուրբ մասունք, գալիք սերունդներին պահ տրված թանկ մասունք:

Դու այլևս հավերժի ճամփորդ ես, մեր ազգային-ազատագրական պայքարի պայծառ ու անմարելի աստղերից մեկը: Դու, որ քո երիտասարդ կյանքը գիտակցորեն նվիրաբերեցիր հող-հայրենիին, ապրելու ես դարերում ու դարերի հետ:

Փա՜ռք քեզ, Արմե՛ն, ու փա՛ռք քեզ նմաններին, որոնց շատ են պատշաճում Մեծն Նժդեհի խորհրդաստ տողերը. «Մեռիր այնպես, որ մահդ էլ ծառայի հայրենիքիդ: Ահա իմ դավանած հայրենասիրությունը»:

Հիրավի, քո մահով անգամ դու ծառայեցիր հայրենիքիդ, քո մահով անգամ դու հայրենասիրության մեծ դաս տվեցիր հազարներին ու մի հերթական անգամ հաստատեցիր դարերից եկած և մեզ հասած իմաստությունը.

«Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահություն»: Այսքանը: Ու դեռ՝ բազում չասված բառեր, ապրումներ, դեպքեր, դրվագներ, պատմություններ: Ամեն ինչի մասին, բնական է, չես կարող ասել: Բայց իմ ասելիքը թերի կլինի ու մի քիչ էլ գունատ, եթե հպարտությամբ ու նաև պարծանքով չասեմ, չշեշտեմ, որ այս ամենի համար 2001-ի մայիսի 9-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի հրամանագրով խիզախ հայորդին՝ Արմեն Էդուարդի Ղունյանը, հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանով:

Միքայել ԲԱԼՅԱՆ
Թոշակառու մանկավարժ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՆՈՐ ՄԱՐԶԱԴԱՇԼԻՉ՝ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ

Արցախի մարզական աշխարհում շարունակում են տեղի ունենալ մատաղ սերնդի մարզական եւ ռազմահայրենասիրական դաստիարակության համար կարեւոր նշանակություն ունեցող իրադարձություններ, ինչպես նաեւ իրականանում են Արցախում սպորտի եւ մարտարվեստների զարգացմանը միտված ողջունելի ծրագրեր: Հերթական մարզադահլիճը բացվեց Ստեփանակերտում, որտեղ մարզվելու հաճույքն ու բերկրանքն առաջին հերթին զգացին Արցախի արմֆայթինգի ֆեդերացիայի սաները:

Պրոֆեսիոնալ արմֆայթինգի ֆեդերացիան Արցախում ստեղծվել է ոչ շատ վաղուց,2012թ.՝ նպատակ ունենալով արմֆայթինգը Արցախում տարածելու, մարզիկներին ֆիզիկապես եւ հոգեպես կոփելու, ինչպես նաեւ արտերկրում կազմակերպվող մրցաշարերին արժանապատիվ մասնակցելով՝ բարձր պահելու հայրենիքի պատիվը: Հիմնադիր եւ գլխավոր մարզիչ Արմեն Հայրապետյանի ջանքերով ֆեդերացիան զգալի աշխատանքներ է իրականացնում: Ֆեդերացիայի ներքո կոփվող մոտ ութսուն սաներից ոմանք դեռ նոր են առաջին քայլերն անում դեպի արմֆայթինգի աշխարհ, իսկ ոմանք էլ արդեն զանազան մրցաշարերում հանդես եկած չեմպիոններ են:

Արմֆայթինգն այն մարզաձեւերի շարքին է պատկանում, որով պարապող մարզիկը պետք է լինի ոչ միայն ֆիզիկական գերազանց վիճակում, այլեւ ուժեղ կամային գծեր եւ խոչընդոտներ հաղթահարելու առանձնահատուկ ձիրք ունենա: Հենց այս հատկություններով են օժտված ֆեդերացիայի սաները, որոնք իրենց մարզիչ Արմեն Հայրապետյանի գլխավորությամբ համառորեն շարունակում էին ակտիվ մարզումները՝ չնահանջելով սեփական մարզադահլիճ չունենալու պատճառով ստեղծված անբարենպաստ պայմանների առջեւ:

Մինչդեռ արդեն անցյալում են մնացել անբարենպաստ պայմանները. Ստեփանակերտի Հեքիմյան 5 ա հասցեում բացվեց մարզական ժամանակակից պահանջներին համապատասխանող մարզական ակումբ, որի պաշտոնական բացումը տեղի ունեցավ նոյեմբերի 16-ին: Մարզական գույքով հագեցած եւ պարապմունքի համար լավագույն պայմաններ ունեցող մարզադահլիճն արմֆայթինգի ֆեդերացիայի սաների համար նաեւ կծառայի որպես մասնագիտացված մարզական ակումբ:

Մարզիչ Արմեն Հայրապետյանն իր երախտագիտությունը հայտնեց Մխիթար Աթայանին, որի աջակցությամբ հնարավոր եղավ մշտական օգտագործման համար նոր, լուսավոր մարզադահլիճ ունենալ:

Արմֆայթինգի ֆեդերացիայի սաներին՝ տարբեր բնավորություն, խառնվածք եւ տարիք ունեցող մարզիկներին, համախմբում է մեկ ընդհանուր հատկանիշ՝ արցախցուն բնորոշ մարտական ոգին եւ ընդհանուր նպատակ՝ մասնակցել պրոֆեսիոնալ մրցաշարերի միջազգային ռինգին:

Արմֆայթինգի ֆեդերացիայի երկակի լավագույն մարզիչ ճանաչված եւ ռեկորդակիր մարզիկ, ՀՀ վեցակի չեմպիոն, 2013թ. աշխարհի առաջնության մրցանակակիր, գլխավոր մարզիչ Արմեն Հայրապետյանը առանձնակի ուշադրությամբ եւ կարեւորությամբ է խոսում մարզիկների բարոյահոգեբանական կոփվածքի մասին եւ նշում է. «Մենք չենք կարող սերունդ կոփել միայն ֆիզիկապես, ճիշտ է, մեր մարզաձեւում նշանակություն ունի մարզիկի ֆիզիկական վիճակը, այն պետք է գերազանց լինի, բայց միայն դա բավական չէ ռինգում հաղթելու համար: Մենք ռինգ ենք հանում այն մարզիկներին, որոնք ուժեղ են թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգեպես եւ կարողանում են հաղթել՝ շնորհիվ մարտական ոգու և կամքի ուժի: Մարզումների ժամանակ մենք չենք շրջանցում այնպիսի կարեւոր հատկությունների ձեւավորմանը մարզիկների մեջ, ինչպիսին են միմյանց նկատմամբ հարգանքն ու պատիվը, քաղաքավարությունը, մարզիչին ու ծնողներին լսելու անհրաժեշտությունը, կանոններին հետեւելը, մտքի եւ կամքի ուղղորդված դրսեւորումը մենամարտերում: Նոր, սեփական մարզադահլիճը՝ ժամանակահունչ կահավորումով, կնպաստի սաների ավելի ոգեւորված եւ նպատակադրված պարապելուն, կխթանի մարզիչների ավելի կենտրոնացված աշխատելուն»:

Արմեն Հայրապետյանը նախապատրաստվում է մասնակցել ՌԴ Տյումեն քաղաքում դեկտեմբերին կայանալիք Արմֆայթինգի առաջնությանը, իսկ տարեվերջին ֆեդերացիայի կողմից ակնկալվում է խոշոր մրցաշարի կազմակերպում Արցախում՝ ՀՀ արմֆայթինգում ճանաչված մարզիկների ու վառ դեմքերի մասնակցությամբ:

ԱՌԱՋԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ՝ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼ

Վինգչունը չինական մարտական արվեստի ոճ է, որում օգտագործվում են բազմաթիվ մարտական՝ պաշտպանական եւ հակահարձակման տեխնիկաներ: Վինգչունի մարտը հիմնված է այն սկզբունքների վրա, որոնք յուրացվում են մարզիկի կողմից պարապմունք առ պարապմունք: Մարտարվեստների աշխարհում վինգչունն առանձնանում է նրանով, որ այստեղ շեշտը դրվում է մասնավորապես մարզիկների շարժումների կոմպակտության, սահունության, շարունակականության,արագ կողմնորոշվելու վրա: Իրական մարտ վարելու հմտություններ ձեռք բերելու համար վինգչունի ուսուցման ծրագրում ներառված են զույգերով աշխատելու բազմաթիվ հնարներ, պարապմունք փայտե մանեկենի վրա: Նրանք, ովքեր պարապում են վինգչուն, դառնում են առողջ, եռանդուն, վստահ, ուժեղ: Վինգչունում մարտն ընթանում է հակառակորդից շատ մոտ հեռավորության վրա, նրան հպվելու միջոցով՝ զգալով եւ կանխատեսելով նրա շարժումները, պաշտպանությունից ակնթարթորեն հակահարձակման անցնելով եւ կասեցնելով նրա շարժումները: Վինգչունիստը սովորում է ոչ թե փախչել, այլ դեմ առ դեմ դուրս գալ վտանգի առաջ եւ առաջին հայացքից անելանելի թվացող վիճակում պահպանել սառնասրտություն, հանգստություն եւ գտնել օպտիմալ ելք: Վինգչուն պարապող մարդկանց մոտ նկատվում է արագ կողմնորոշվելու եւ դժվարին թվացող իրադրությունից արագ ելք գտնելու հմտություն նաեւ առօրյա կյանքում: Իզուր չեն վինգչունն անվանում նաեւ «ուղեղի մարզում», քանի որ երկարատեւ վինգչուն պարապելու շնորհիվ սկսում է ավելի լավ աշխատել ուղեղը:

Վինգչունի հնարները տարբեր երկրներում օգտագործվում են ոստիկանության աշխատակիցների, հատուկջոկատայիններիի եւ բանակայինների նախապատրաստական զորավարժություններում:

Արցախում եւս վինգչունը արդիական է: Արդեն յոթերորդ տարին է՝ այն դասավանդվում է հմուտ մարզիչ Սայաթ Բաղդասարյանի կողմից, որի նախաձեռնությամբ եւ նախագահությամբ սույն թվականի մարտին ստեղծվեց Արցախի վինգչունի եւ թայչիի ֆեդերացիան:

Ֆեդերացիան նպատակ ունի մարտարվեստի վինգչուն եւ թայչի ոճերը մասսայականացնել Արցախում, մարզչական կազմը ընդլայնել, համագործակցել տարբեր հասարակական կազմակերպությունների հետ եւ ավելի շատ նախազորակոչային տարիքի մարզիկներ ներգրավել՝ հայրենիքի պաշտպանությանը ֆիզիկապես եւ հոգեպես նախապատրաստելու նպատակով: Ֆեդերացիայի մարզիկները հնարավորություն ունեն մասնակցելու տարբեր մրցաշարերի ինչպես հայրենիքում, այնպես էլ արտասահմանում, իսկ սիրող-մարզիկները՝ արդեն ֆեդերացիայի ներքո մասնագիտանալու մարտարվեստներում:

Արցախի վինգչունի եւ թայչիի ֆեդերացիայում կոփվող սաներից հինգի համար հոկտեմբերի 24-ը տոնական օր դարձավ: Հաջողությամբ հանձնելով իրենց առաջին քննությունը վինգչուն մարտարվեստից՝ ֆեդերացիայի պատանի մարզիկներ Արթուր Հովակիմյանը, Դավիթ Հովակիմյանը, Արսեն Առստամյանը, Բորիս Ստեփանյանը եւ Հայկ Գասպարյանը ստացան վինգչունի առաջին կարգի որակավորում: Մարզիչ Սայաթ Բաղդասարյանը մարզիկներին հանդիսավոր պարգեւատրեց ֆեդերացիայի վկայականներով:

Մեզ հետ ունեցած զրույցի ընթացքում մարզիչ Սայաթ Բաղդասարյանը պարզաբանեց, որ ի տարբերություն մարտարվեստի այլ ոճերի, վինգչունը գոտեւորման փուլեր չի ներառում: Վինգչունում գոյություն ունեն կարգեր, որոնցից յուրաքանչյուրն իր ծրագիրն ունի: Վինգչունի եւ թայչիի ֆեդերացիայում քննություններ կհանձնվեն ընդունված վեց կարգով: Պարապմունք առ պարապմունք յուրացնելով տվյալ կարգի մեջ ընդգրկված տեխնիկան՝ մարզիկը կարող է քննություն հանձնել եւ համապատասխան որակավորումը նշող վկայական ստանալ: Վինգչունում վկայականը լոկ փաստաթուղթ չէ, այն ոգեւորում է մարզիկին, հնարավորություն է տալիս զգալ սեփական կարողությունները, ինչպես նաեւ էլ ավելի ձգտումով եւ նպատակասլացությամբ ոտք դնել հաջորդ փուլ եւ այդպիսով վարպետանալ:

Ինչպես ասում են՝ ճանապարհը սկսվում է առաջին քայլից: Ֆեդերացիայի պատանի մարզիկները կատարեցին իրենց առաջին քայլը դեպի հետաքրքրաշարժ, առողջարար, հին վարպետներից փոխանցված մարտարվեստի գաղտնիքները վերծանող, հոգու եւ մարմնի կատարելությանը հասցնող դժվարին ճանապարհ:

Ցանկանանք նրանց հաջողություն մարզական եւ մարտական կյանքում:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ԽՈՍՔ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ

Հային բնութագրական մի հատկություն. մի ձեռքում՝ զենք, մյուսում՝ գրիչ: Այսպիսին է Նվեր Լազարյանը՝ Ստեփանակերտի հ.12 հիմնական դպրոցի զինղեկը՝ նախկին վաշտի հրամանատարը: Ուսուցիչ, որն իր գործունեությամբ նպաստում է կրթադաստիարակչական աշխատանքների ձեւավորմանն ու ամրապնդմանը՝ հիմնված վստահության ու պատասխանատվության վրա:

Ն. Լազարյանն ունի ընդամենը երեք տարվա մանկավարժական փորձ, բայց արդեն արժանացել է լավ մանկավարժի, լավ ուսուցչի պատվին:

Նախորդ՝ 2016-2017 ուստարում նրա սաները Ստեփանակերտի հանրակրթական դպրոցների միջև կայացած «Պատանի փրկարարներ» քաղաքային մրցույթում գրավեցին 1-ին տեղը, իսկ հանրապետականում՝ 2-րդ և ԼՂՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայության, ինչպես նաև քաղաքապետարանի կողմից արժանացան պարգևատրման:

Այս ուսումնականում ևս հոկտեմբերի 30-ին տեղի ունեցած «Պատանի փրկարարներ»-ի քաղաքային մրցույթում մեր դպրոցի աշակերտները՝ ի դեմս 8-րդցի Նվեր Ադամյանի և 9-րդցիներ Դավիթ Աղասյանի, Ջոն Քարամյանի, Հայասեր Կզրյանցի, Մարիամ Արզումանյանի, գրավեցին պատվավոր 1-ին տեղը և պարգևատրվեցին նվերներով ու պատվոգրերով: Նրանցից Դավիթ Աղասյանը պարգևատրվեց «Լավագույն թիմի ավագ» ճանաչվելու, թիմը՝ «Հրշեջ կիրառական սպորտի արգելագոտու հաղթահարում» լավագույն ցուցանիշ ապահովելու համար:

Դա հաղթանակ էր ազնիվ ու օրինապահ ուսուցչի հետևողական գործունեության, ուսուցիչ, որը պատասխանատու է կատարած աշխատանքի որակի համար:

Որպես ուսուցիչ՝ անաչառ ու անկողմնակալ է գնահատման մեջ, ուսուցիչ, որը հարգում է աշակերտի անհատականությունը:

Անկախ ամեն ինչից, նա նպաստում է սովորողների մեջ դրական, բարոյական գծերի դաստիարակմանն ու զարգացմանը: Որպես սպա և որպես ուսուցիչ՝ դաստիարակում է հայրենասիրության, նվիրվածության վեհ գաղափարներ, ձևավորում ինքնուրույնություն, ինքնավստահություն, պատրաստակամություն, պատասխանատվություն:

Հ.12 հիմնական դպրոցի ուսուցիչներն ու աշակերտները հպարտ են նման ուսուցչով, ինչպիսին Ն. Լազարյանն է: Մենք ամբողջ հոգով գնահատում ենք մեր գործընկերոջ արդյունավետ ու արգասաբեր աշխատանքը, գնահատում և միաժամանակ ասում.

- Շնորհակալություն, պարո՛ն Լազարյան, Դուք մեր երկրի արժանի քաղաքացին եք, որը բարձրացնում է ուսուցչի արժանապատվությունը, բարձր պահում նրա մասնագիտական պատիվն ու կոչումը:

Կարինե ԴԱՎԹՅԱՆ
Ստեփանակերտի հ.12 հիմնական դպրոցի փոխտնօրեն

ՆՈՅՅԱՆ

ՀԱՋԱՐԱՄՅԱԿՆԵՐԻ ԱՌԵՂԾՎԱԾ ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏԸ

«Հայ ազգը ժամանակակից քաղաքակիրթ ազգերի մեջ հնագույններից մեկնէ: Նա եկել է մեր աշխարհ այնքան հեռու, հին օրերից, երբ դեռ ոչ միայն գոյություն չունեին ժամանակակից եվրոպական ազգերը՝ ֆրանսիացիները, իտալացիները, անգլիացիները, ռուսները, այլև նոր-նոր պատմության ասպարեզ էին իջնում անտիկ աշխարհի ազգերը՝ հռոմեացիները, հելլեները...

Հայաստանի պատմությունը յուրօրինակ գանձարան է, և ասես մթության մեջ թաքցված այդ գանձերից դեռևս կարելի է շատ բաներ լույս աշխարհ հանել»:

Վալերի Բրյուսով

Այդ հնագույն ժամանակներում Արարատյան երկրում ապրում էր արդեն զառամյալ Նոյ նահապետը, այստեղ էր նաև Հայկի հայր Թորգոմը: Եվ նրանց օրհնությամբ Արարատի երկրում իշխում էր Հայկը՝ հայոց նահապետը: Հայկն էր տիրում այս երկրում, քանի որ թե՛ հավատքով, թե՛ ուժով և թե՛տարիքային առումով նա էր Հայաստանի նման խորհրդավոր երկրին համապատասխան կառավարիչը, մի երկրի, որտեղ որպես համայն մարդկության և կենդանական աշխարհի փրկության խորհրդանիշ՝ վեր էր խոյանում Արարատ լեռը՝ իր վրա հանգրվանած Նոյյան տապանով: Նոյը պետք է իջներ Արարատի վրա, որպեսզի մարդկային ցեղը կրկին սկսեր իր գոյությունը Դրախտի դռների մոտից: Հիշենք, որ աստվածաշնչյան դրախտը ևս գտնվում էր Հայաստանում՝ Եփրատ, Տիգրիս, Գեհոն, Փիսոն գետերի ակունքների շրջանում: Արարատի երկրում սուրբ նահատակների ներկայությունը երաշխիք էր, որ այստեղ ժողովուրդն ապրեր բարեպաշտության օրենքներով՝ պաշտելով երկինք ու երկիր ստեղծող Բարձրյալ Աստծուն: Այստեղ էր, որ երկրի բնակիչները խոսում էին առաջին՝ ադամական լեզվով: Սա այն երկիրն էր, որ մեծ նվաճումներուներ ուներ մետաղագործության, գյուղատնտեսության, մանածագործության, ռազմական արվեստի, գիտական ու մշակութային ոլորտներում: Նոյը ոչ միայն քահանայությունն էր ժառանգել, այլև արքայական օծումը, քանզի ձիթենու ճյուղը վերաբերում էր նաև թագավորներին, քանզի թագավորները նույնպես օծվում էին սուրբ յուղով:

Նոյը, տապանից դուրս գալով, երկրի վրա դարձավ թագավոր՝ Ադամից հետո երկրորդ թագավորը: Նոյը նաև համարվում էր Փրկչի նախակերպարը, քանզի արդար թագավոր էր և Բարձրյալ Աստծո քահանա: Նոյի տապանն էլ Քրիստոսի եկեղեցու խորհուրդն ուներ, քանզի այն դարձավ մարդկային ցեղը իսպառ ոչնչացումից փրկելու միջոց:

950 տարի ապրեց Նոյը: Նա 840 տարեկան էր, երբ Հայկը Ք. ա. 2492-ին սպանեց Բելին: 950 տարի ապրեց Նոյը և արդեն ժամանակն էր, որ մտածեր՝ ում պետք է ավանդել «արդարության թագավորի և Բարձրյալ Աստծո քահանայի»վեհ կարգավիճակը:

Եվ երբ Նոյը հայտնեց իրեն փոխարինողի վերաբերյալ երկնայինի կամքը, բոլորը մեծ ուրախություն ապրեցին, քանզի ընտրվել էր այն վեհաշուք այրը, որը հանուն ճշմարիտ Աստծո՝ կենաց և մահու պայքարի ելավ Արարչի դեմ ըմբոստացած, կռապաշտության հիմնադիր Բելի (Նեբրովքի) դեմ: Հայկի հեղինակությունը շատ բարձր էր ոչ միայն Հայաստանում, այլև շրջակա բոլոր երկրներում: Նա էր, որ Տիրոջից երկու անգամ հայտնություն ունեցավ՝ նետ-աղեղի և տոմարի հետ կապված: Նա էր, որ տապալեց առաջին աստվածամարտ Բել-Նեբրովքին, որն ինքն իրեն թագավոր էր կոչել և ապա՝ աստված հռչակել

Այդ ամենից հետո Նոյը ննջում է խաղաղությամբ, և նրա մարմինը թաղվում է Նախիջևանում:

Հայկը Նոյի կողմից թագավոր և քահանա օծվեց ն.Ք. 2382 թվականին, և այդ ժամանակ էլ նա ունեցավ իր երրորդ հայտնությունը Տիրոջից: Բելի ու նրա հսկա զորքի դեմ հաղթանակ տանելուց հետո Հայաստանի համբավը տարածվել էր աշխարհով մեկ: Արդյունքում Արատտան պահպանեց իր լիակատար անկախությունը, իսկ միջագետքյան տարբեր իշխանություններ երկար ժամանակով հրաժարվեցին Արատտայի վրա գերիշխելու գաղափարից: Հայկի խաղաղասեր բարքի շնորհիվ տարածաշրջանում խաղաղություն էր տիրում: Ոչ միայն հնագույն ժամանակներում, այլև մեր օրերում Հայկը սովորական մահկանացու չի եղել, այլ՝ աստված՝ հեթանոս ազգերի կողմից: Իսկ հայերը պաշտում էին միակ ճշմարիտ Աստծուն. նրանք Հայկ նահապետին երբեք չաստվածացրին, այլ մեծարեցին և պատվում են մինչ օրս: Չպաշտեցին, քանզի մարդապաշտությունը կռապաշտություն է: Մեր նախնիների Հայկին, որպես աստվածամերձ և վեհապանծ անձի, դասեցին համաստեղությունների շարքում, երկնքում երևում է պայծառաճեմ Հայկը՝ Օրիոնը:

Հայկի անձի խորը հետազոտությամբ զբաղվել է Ղևոնդ Ալիշանը: Նա նշում է, որ Հայկի մասին մեզ հասած տեղեկություններում չկան մտացածին, առասպելական բաներ, ինչպես աշխարհի մյուս առասպելներում: Հայկը ոչ թե առասպելական, այլ պատմական կերպար է:

Կարող է հարց ծագել. եթե Հայկ նահապետը նման սուրբ և բարեպաշտ անձ է եղել, այդ դեպքում ինչու՞ մինչ այժմ հայ եկեղեցին չի սրբադասել նրան: Դա մեծ խորհուրդ է և, հավանաբար, ծածկված պիտի մնա՝ մինչ սահմանված ժամանակի լրումը:

1780-ական թվականներին Ղուկաս կաթողիկոսը հրամայեց քանդել էջմիածնի տաճարի պատերի ծեփը՝ եղած որմնանկարներով և զարդանկարներով և նորը նկարել: «Հայկ նահապետը» մեզ է հասել գլխի հատվածով: Մայր տաճարի որմնանկարների շարքում եղել է նաև Հայկ նահապետի սրբապատկերը՝ լուսապսակով: Նաղաշ Հովնաթանի որդի Հակոբ Հովնաթանը ստեղծել է գեղեցիկ, նուրբ դիմագծերով, երազկոտ աչքերով, հանդարտ, խաղաղ հոգեվիճակով մի կերպար:

Գրիգոր Նարեկացին Մարիամ Աստվածածնին բազմաթիվ գովաբանական աղոթքներ է ձոնել, իսկ «հայկանման» ասելով ցանկացել է մեկ այլ վեհ անվանումով օրհնաբանել:

Ըստ ավանդության՝ Հայկի մոտ եղել են Ադամի նշխարները, և նա է դրանք թաղել Գողգոթայում: Հայկ նահապետը նույն ինքը Աստվածաշնչյան Մելքիսեդեկն է, որը նույնպես կոչվում էր ճշմարտության թագավոր և քահանա: Եթե նույն Հայկն է գործել այդ երկու անվանումներով, ուրեմն Հայկ նահապետը դարեր առաջ արդեն իսկ սրբադասված է եղել թե՛ հայ, թե՛ ավանդական մյուս եկեղեցիների կողմից՝ Մելքիսեդեկ ծածուկ անվամբ: Հայկ-Մելքիսեդեկը դարձել է կապող օղակ՝Արարատյան երկրի նախահայրերի և պաղեստինյան նահապետների միջև:

Հայաստանը աստվածապաշտության կենտրոն էր, և Աստված խոսում էր թե՛ Նոյ և թե՛ Հայկ նահապետների հետ: Եվ ահա երկնային մի նոր հայտնությունից մղված՝ Արարատյան երկրի թագավոր և քահանայապետ բարեպաշտ Հայկ նահապետը զորաժողով է անում և, առանձնացնելով ժողովրդի մի մասին, պատվիրում է, որ իրենց ընտանիքներով պատրաստվեն ճանապարհ ընկնել դեպի Պաղեստին՝ Քանանի երկիր: Արարատյան երկրում տեղապահ կարգելով իր ավագ որդի Արամանյակին՝ Հայկը ճանապարհ է ընկնում դեպի Քանան: Հայկի և մյուս հայերի հետ երրորդ հազարամյակում մ.թ.ա. քուռ - արաքսյան մշակույթի հուշարձանները հանկարծ հայտնվում են Սիրիայում, ապա՝ Պաղեստինում, հատկապես խեցեղենը, որի հայրենիք համարվել է Հայաստանը: Սուրբ Եպիփան Կիպրացին նշում է, որ հսկա Նեբրովքը Քամի ազգից, Սեմի որդիներին հանեց Պաղեստինից և բնակեցրեց Քամի որդիներին: Ուստի այնտեղ մնացած սեմականները, որ լսել էին Հայկի և Բելի պատերազմի և Հայոց բարգավաճ և հզոր երկրի մասին, նրանց հարգանքով և երկյուղածությամբ են դիմավորում: Իսկ Քամի սերնդի հետնորդները անհանդուրժողականություն են ցուցաբերում: Սակայն Քանանի բիրտ ցեղերը, իրենց կաշվի վրա զգալով հայոց զենքի կործանարար ազդեցությունը, ցիրուցան են լինում:

Հայկ և Մելքիսեդեկ նահապետների միջև եղած ընդհանրությունները և այդ ժամանակաշրջանում Արարատյան սուրբ երկրից դեպի Պաղեստին արտագաղթի առկայությունը հիմք են վստահորեն հավաստելու, որ Հայկ և Մելքիսեդեկ անվանումների ներքո գործել է միևնույն անձնավորությունը: Իսկ ո՞րն էր այդ արտագաղթի իմաստը, և ինչու՞ Հայկը Պաղեստինում կոչվեց Մելքիսեդեկ: Նրանից շատ ժամանակ անց Աբրահամը Տիրոջ կանչով թողեց կռապաշտությամբ վարակված իր ծննդավայրը և ուղևորվեց դեպի Քանան:

Հայկը երկրային դրախտի երկրից՝ Աստծորդիների Հայաստան լեռնահայրենիքից իջավ Պաղեստին՝ Երուսաղեմ քաղաքը հիմնելու և քահանայագործելու:

Պատմության ընթացքում հայտնի Մեծ Հայքի, Եդեսիայի, Կիլիկիայի հայոց թագավորությունների թվում հիմնադրվեց ևս մեկ հինավուրց տերություն՝ Պաղեստինի Հայոց թագավորությունը՝ իր Խաղաղություն (Սաղեմ) կոչվող մայրաքաղաքով: Տեղաբնակները Հայկին էլ իր արդար և սրբակենցաղ վարքի համար կոչեցին Արդարության թագավոր՝ Մելքիսեդեկ: Սաղեմում Հայկ- Մելքիսեդեկը նաև տաճար է կառուցել՝ Աստծուն պաշտելու և փառաբանելու համար: Նրա մոտ էր Քրիստոսի Հավիտենական Պատարագի նշանը՝ հացի և գինու տեսքով: Մելքիսեդեկը հաց և գինի մատուցեց Աբրահամին: Եվ մեր Տերն էլ նույնով ավանդեց Փրկչական Մարմինը և Արյունը:

Կառուցելով Սաղեմ քաղաքը և Սիոնի տաճարը՝ Հայկ-Մելքիսեդեկը Գողգոթայի բարձունքում կառուցում է նաև մի դամբարան և մեծ հանդիսավորությամբ համայն մարդկության նախահոր՝ Ադամի նշխարները թաղում է այնտեղ և մի մատուռ կառուցում շիրիմի վրա: Եվ հենց այդ վայրում հազարամյակներ անց, խաչի վրա գամվելով, Աստծո անարատ Գառը պիտի իր Փրկչական արյունը հեղեր համայն մարդկության փրկության համար՝ տալով իր մարմինն ու արյունը՝ որպես հավիտենական կյանքի կերակուր՝ դա հավատով ընդունողների համար, և ամեն կիրակի քրիստոնյաներին այն բախշվում է Սուրբ Պատարագի արարողության ժամանակ՝ հացի և գինու երևույթով:

Այն, որ Հայկ-Մելքիսեդեկը Բարձրյալ Աստծո քահանայապետ էր և թագավոր, իսկ Աբրահամը միայն իր ժողովրդի համար էր քահանայություն անում և իշխում էր միայն նրանց վրա, ակնհայտ է դարձնում Հայկ նահապետի՝ ավելի մեծ լինելը. այդ է վկայում Աբրահամի տասանորդի մատուցումը Մելքիսեդեկին: Քանանում այդ ժամանակ Աստծուց մի բան իմանալու համար դիմում էին Մելքիսեդեկին, քանզի նա էր Տիրոջ առջև կանգնելու համարձակություն և շնորհ ստացել՝ որպես Բարձրյալ Աստծո քահանա: Իսկ Աբրահամը իր խոնարհ հոգով Մելքիսեդեկին ճանաչեց ու մեծարեց՝ որպես Քրիստոսի նախակերպարի, իսկ Հայկ նահապետը Աբրահամին օրհնելով և հաց ու գինու մատուցումով հայտնեց, որ մեծագույն Խորհուրդը պիտի իրականանա հենց Աբրահամի միջոցով. Նրա սերնդից պիտի գար Մեսիան՝ աշխարհի Փրկիչ մեր Տեր Հիսուս Քրիստոսը՝ թագավորների թագավորը և հավիտենական Քահանայապետը: Սակայն մի այլ մարգարեական խորհուրդ էլ կար նրանում, երբ Հայկ նահապետը փրկչական խորհուրդները տվեց Աբրահամին, այն է, որ կգա ժամանակ, երբ միայն հայ ազգին տրված Աստվածային շնորհները կվերցվեն Հայկի սերունդներից՝ հայերից, և կտրվեն Աբրահամի սերունդներին՝ հրեաներին, երբ հայերը կընկնեն ճշմարիտ աստվածապաշտության բարձրունքներից՝ հեթանոսական խավարի գուբը: Սակայն պիտի գա նաև մի այլ ժամանակաընթացք, երբ Աստվածային շնորհը այս անգամ կվերցվի հրեաներից և նորից կվերադարձվի այն ազգին, որը ի սկզբանե նրա կրողն էր, այսինքն՝ հայ ազգին:

Դրա մասին է խոսում Տերունական առակը. «Դրա համար ասում եմ ձեզ, որ ձեզնից կվերցվի Աստծո արքայությունը և կտրվի այն ազգին, որ պտղաբեր կդարձնի այն»:

Մեր երանելի նախահայրը, երկար տարիներ թագավորելով Սաղեմում, հասնելով խոր ծերության, կնքեց իր մահկանացուն: Նրա նշխարները մնացին հենց Սաղեմում և հողին հանձնվեցին ոչ թե Նոյի, այլ՝ Ադամի կողքին: Այս մասին հիշատակվում է նաև հունական Հայսմավուրքում:

Նոյի սերունդները բնակության պայմանների անբավարարության պատճառով շարժվեցին դեպի Սենաարի դաշտ: Այդ տեղաշարժը Նոյի օրհնությամբ եղավ:

Նեբրովքը՝ Քամի սերնդից, Եբերը՝ Սեմի սերնդից և Հայկը՝ Հաբեթի սերնդից, ապրում էին նույն ժամանակաշրջանում: Քամին նաև Տիտան էին կոչում, այդ պատճառով Նեբրովքը կոչվում էր Տիտանյան: Մար Աբաս Կատինան հետևյալ կերպ է նկարագրում Հայկին.

«Սրանից մեկն էր և Հապետոսյան Հայկը՝ հաստ աղեղով ու հզոր նետածիգ, անվանի և քաջ նախարարը... Այս Հայկը վայելչակազմ էր, թիկնավետ, գեղագանգուր մազերով, վառվռուն աչքերով, հաստ բազուկներով: Սա քաջ և երևելի հանդիսացավ հսկաների մեջ»: Սենաարում սկզբնական շրջանում բարեպաշտություն էր տիրում: Նեբրովքը ոչ միայն աչքի էր ընկնում իր հզոր ուժով, որսորդական և շինարարական ունակություններով, այլև աստվածապաշտությամբ: Նեբրովքի և Հայկի գլխավորությամբ բազմաթիվ քաղաքներ ու բնակավայրեր կառուցվեցին: Նրանք մշտապես կապված էին Արարատյան երկրում գտնվող Նոյի հետ: Սակայն Նեբրովքը, տեսնելով այն հսկայածավալ աշխատանքները, որի գլխին ինքն էր կանգնած, հպարտացավ իր սրտում և ամբողջ աշխատանքների հաջողությունը սկսեց վերագրել իրեն, այլ ոչ թե Տիրոջը: Սա, մի կողմ թողնելով քաղաքաշինությունը, որոշեց ամբողջ ուժերը նվիրել իր փառքի համար մի հզոր աշտարակի կառուցման: Սկզբնական շրջանում աշտարակի նպատակը ծածուկ էր պահում, պատճառաբանում էր Եփրատ և Տիգրիս գետերի հաճախակի հեղեղումները: Աշտարակաշինությունը գլխավորում էին Նեբրովքը, Լամսուրը և Հայկը: Նեբրովքը, որին անվանում են նաև Բել, շինարարների մեջ ջերմեռանդություն առաջացնելու նպատակով հայտարարում էր, թե աշտարակի օգնությամբ կարող են փրկվել նաև հետագա ջրհեղեղներից և հրից:

Աշտարակաշինությունը անվստահություն էր Աստծո խոստման հանդեպ, որ այլևս մարդկությանը ջրհեղեղով չէր պատժելու: Ասում են, թե այն կառուցվեց 40 տարվա ընթացքում, նրա ելնելն ու իջնելը 10 ամսվա ճանապարհ էր: Շուտով պարզվեց Բելի բռնատիրական դեմքը. նա ուրացավ իր Բարերարին և սկսեց պաշտել կուռքերին՝ իրեն հնազանդ ժողովրդին էլ համոզելով և պարտադրելով նույնն անել: Եվ շատ շատերը մոլորվելով ընկնում էին կռապաշտության մեջ: Այնուհետև, Բելը կուռքերի պաշտամունքը փոխարինեց իր հաղթանդամ անձի պաշտամունքով՝ ասելով՝ եթե Տերն ընդամենը ութը հոգու կարողացավ փրկել Ջրհեղեղից, ապա ինքն աշտարակի միջոցով կփրկի բոլոր իրեն ապավինողներին:

Այսպես՝ աշտարակը վերածվում էր մեհյանի, որը՝ որպես պաշտամունքի առարկա,՝ իր մեջ կրում էր կենդանի կուռք Նեբրովքին: Դեռ ավելին՝ Նեբրովքը սկսում է համոզել մարդկանց, որ ինքը նրանց կպաշտպանի Տիրոջ արհավիրքներից: Ամբոխը միահամուռ ցանկություն հայտնեց հետևել Նեբրովքին՝ Տեր Աստծուն ծառայելը համարելով ստոր ստրկություն: Եվ ինչպես Արարատը՝՝ անձեռակերտ լեռը, Նոյան տապանին հանգրվան եղավ, Բելը ցանկանում էր ձեռակերտ աշտարակը ապաստան դարձնել հաջորդ ջրհեղեղի ժամանակ:

Նեբրովքը ապստամբեց Աստծո դեմ և որոշեց իր նախնիների կորստյան վրեժը լուծել և մարդկանց էլ մղում էր նույն նպատակին:

Հայկը, տեսնելով, որ Բելի բռնած ուղին հեռացնում է Աստծուց, սկսում է համոզել նրան, որ ետ դառնա այդ աղետալի ուղուց, սակայն հաջողության չի հասնում: Լեզուների խառնակումից հետո լքելով Նեբրովքին՝ Հայկը Բաբելոնից վերադառնում է Տիգրիսի և Եփրատի ակունքների մոտ գտնվող Արարատյան երկիրը: Այլալեզվությամբ քանդեց չար միաբանության կապը, և տարբեր լեզուներով խոսող ազգատոհմերը ցրվեցին աշխարհով մեկ: Աշտարակաշինության գլխավոր դրդապատճառը փառասիրությունն էր:

Բոլոր մեկնիչները Բելին համարել են աստվածամարտ, ապստամբ, կռապաշտության հիմնադիր

Բելը հույների մոտ կոչվել է Կրոնոս, բաբելացիների մոտ՝ Բել և Մարդուկ, ասորիների մոտ՝ Տիտան, Քանանում անվանվել է Բահաղ և Բերփեգովր, Աստվածաշնչում՝ Նեբրովք կամ Նեմրութ, շումերների մոտ՝ Էնմերքար:

Մարդուկի մեծ տաճարը կանգնած էր Բաբելոնի աշտարակի կողքին և համարվում էր ամենամեծ սրբատեղին: Նրա մեջ տեղադրված էր Բահաղի ոսկե արձանը և ոսկե սեղանը՝ քաշով 21000 կգ-ից ոչ պակաս: Բաբելոնը դարձավ իբրև կռապաշտության խորհրդանիշ՝ թե՛ Ջրհեղեղից առաջ, թե՛ հետո:

Լիդա ՄԿՐՏՉՅԱՆ
Շուշիի Խ. Աբովյանի անվան միջնակարգ (հոսքային) դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի

ԴԻՏԱԿԵՏ

ԿՅԱՆՔՆ ՈՒ ՉԵՆՔԸ ՍԻՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Երիտասարդ գրող, լրագրող Վանիկ Նովիկովը 2016թ. ապրիլյան պատերազմի ժամանակ մարտական դիրքերում էր: Ներկայացնում ենք նրա հուշապատումն այդ օրերից:

2016-ի ապրիլի 3: Անխնա հրետակոծվող Մարտակերտ: Ապրիլյան քառօրյա պատերազմի այն ժամանակահատվածն էր, երբ Ադրբեջանն արդեն, ի լուր աշխարհի, հայտարարել էր, թե իբր միակողմանի դադարեցնում է մարտական գործողությունները: Հրետակոծության տակ մարդիկ վերանորոգում են բեկորներից վնասված գազատար խողովակները, նույնիսկ ճղակոտոր ծառերն էին մաքրում, հավաքում ճանապարհներից: Թշնամին քաղաքի վրա արձիճ ու պողպատ էր հեղում: Շախմատաձև: Զորամասում մեզ՝ լրագրողներիս ոգևորությամբ և ուրախությամբ դիմավորող, լուսանկարվող ու հարցազրույց տվող կամավորականները բնության անզուսպ տարերք են՝ լեռնցի հայի վերագտնված տեսակ: Մինչև հիմա չեմ կարողանում ինքս ինձ համոզել, որ նրանցից մի քանիսի հետ մենք զրուցել ու լուսանկարվել ենք վերջին անգամ: Ավելի ուշ պիտի իմանայի, երբ Արցախյան ազատամարտի թոհուբոհով անցած և 2016-ի ապրիլի 4-ին Թալիշի ինքնապաշտպանական գործողությունների ժամանակ նահատակված Սարգիս Խալաֆյանի մարտական վաղեմի ընկերը կմտնի մեր գրասենյակ ու կփլվի առաջին պատահած աթոռին.

-Սարգսի լուսանկարների համար եմ եկել:

Դեպի Մատաղիս ու Թալիշ տանող օձաձև ոլորաններն ամբողջովին քրքրվել էին՝ տանկերի թրթուրների ու թշնամական հրետանու համազարկերի տակ կքած: Քրքրված մաշկի տակից բացված ողնաշարի պես մեծ-մեծ քարաբեկորներ էին ցցվել ճանապարհի մեջտեղում: Անշունչ Մատաղիսում կոկորդիս հանկարծակի պրկումը դժվարացնում է շնչառությունս: Ընդամենը մեկ ամիս առաջ էր, երբ ուրախությունից էր շունչս կտրվում ոսկի արևի տակ, դպրոցի բակում թռչկոտող հրաշամանուկների ուրախ ճռվողյունից: Թալիշի մուտքի մոտ, ցուցանակի տակ, սպիտակ հորթուկը հոգեվարքի ջղաձգումների մեջ էր:

Բարձունքներում են դիրքավորվել տղերքը: Կենաց-մահու արծվաթռիչքի էին պատրաստվում: Վաղն ընդամենը չոր թվեր կհրապարակվեն՝ վերադարձված դիրքերի, հեկտարների, մեր ու թշնամու զոհերի մասին, իսկ հիմա, հրամանատարական դիրքի առջև աջուձախ թափված թուրքերի դիակների հարևանությամբ, հարցազրույց են տալիս մարդիկ, ովքեր ժամեր անց հնարավոր է՝ նույնպես չդողան ցրտից, խոսեն քարեղեն լուսանկարներով, չսիրեն, չամուսնանան, ու հայու լեռնցի տեսակը պակասի: Առաջ, երբ միամիտ խաղաղասեր էի, վախենում էի, որ չեմ հասցնի սիրել, կին ունենալ, սերունդ շարունակել, իսկ հիմա երբ ունեմ, ամեն գիշեր զոհվում եմ նրանց փոխարեն, ովքեր էլ չեն ունենա, որովհետև նրանց թռիչքին հասու բարձունքներում էր գրվում մեր ճակատագիրը: Նրանց փոխարեն, ում հիմա լուսանկարներով ենք ճանաչում:

Մինչև ոսկորները թափանցող պատերազմական ցուրտ է: Երբ նայում եմ սառնամանիքից դողալու, սեփական տաք օջախի կարոտի ու էլի նման մարդկային բնական զգացմունքների նկատմամբ անհաղորդ թշնամու դիակներին, ցրտից դողալուց նույնիսկ հաճույք եմ զգում: Զինվորները ծածկում են դրանց, որոնք մեր գյուղում անպաշտպան ծերունիներ էին սպանել ու հոշոտել:

- Որ արտասահմանցիք չասեն՝ թե մարդասեր չենք,- չգիտես լուրջ, թե կատակով ասում է հրամանատարը:

Երևի մոտավորապես հենց այդ պահին էին նրանք իրենց գյուղերում ցուցադրում մեր գլխատված զինվորին:

Մաս առաջին
ՄԵՐ ՃԱԿԱՏԻ ԳԻՐԸ

Առաջին անգամ չէի անցնում այդ ճանապարհով: Բայց այս անգամ սովորականից կրկնակի երկարեց: Թվում է՝ մի ամբողջ հավերժություն ճանապարհին ենք: Համագյուղացիս էլ նոր է սովորել ավտոմեքենա վարելը: Հազիվ է կարողանում ոլորաններում խուսափել երթևեկելի մասից դուրս թռչելուց և մեզ ուղեկցող ձորերից մեկում հանգրվանելուց:

- Լյո՛վ, հանգիստ քշիր: Ամենևին էլ տրամադիր չեմ Շամշյանի հերոսը դառնալու:

Հիմար կատակ ստացվեց, բայց համագյուղացիս լայն ժպտում է: Մի փոքր ցրում է հոռետես մտքերը: Լյովն առաջին ուղեկիցս է այդ ճանապարհին, որով բազում անգամներ էի անցել, տարբեր ընկերախմբերով: Հասանք զորամաս, որտեղից պիտի դիրքեր մեկնենք: Կեսօրից հետո՝ արդեն զինվորական համազգեստով, մեզ տնավարի ենք զգում զորամասում: Նույնիսկ սրճարան ունենք, որտեղ դառը սուրճի կումերի հետ փորձում էի ըմպել այն գիտակցությունը, որ քաղաքացիական խաղաղ կյանքը մնաց մշուշոտ հեռվում: Զորամասում էլ դեռ կարգին բան չեն ասում. մեկնելու ենք դիրքեր, թե սպասելու ենք: Մի քանի անգամ շարվելու հրաման տվեցին, բայց շարվելուց հետո հրամանատարն ամեն անգամ անհետանում էր այնպես, որ գերազանցում էր մեր տեսողության արագությանը: Այստեղ ծանոթներ ձեռքբերելն ավելի հեշտ էր, քան եթե անմարդաբնակ կղզում հանդիպեինք: Ժամանակն անհոգորեն

սպառելու համար սկսեցինք ծանոթանալ: Ով, որտեղից, ինչ աշխատանքից, ինչու չէ, հետաքրքիր պատմություններ: Մի խոսքով՝ ինչպես զինվորների մասին պատմող գրքերում կամ ֆիլմերում է լինում: Շուտով հոգնեցի: Ոտքս աստիճանաբար սկսում էր ցավել: Մեկուսացա ու հանձնվեցի մտքերիս գրոհին: Ժամկետային զինվորական ծառայությանս ավարտից շուրջ 10 տարի է անցել: Մեծ սիրով ու դժվարությամբ յուրացրել էի տանկիստի մասնագիտությունը: Տանկիստները դիրքեր չէին պահում: Իսկ հիմա առաջին անգամ պետք է որպես դիրքապահ կանգնեի սահմանին: Տղաների ուրախ կատակներն ու ծիծաղը ցրում են: Մենակ չեմ: Նրանց հետ Բաքու էլ կարելի է հասնել, դեռ Կասպից ծովում, մեր նավատորմի վրա պարեկային ծառայություն էլ կարելի է տանել: Համագյուղացիներս էլ քիչ չեն այստեղ: Ինձ զինվորական հագուկապով տեսնելով՝ ծիծաղում են: Երեկոյանում էր, երբ բեռնատարներով ճանապարհվեցինք դիրքեր: Գլխավոր ճանապարհին մեզ դիմավորեցին գումարտակների հրամանատարներն ու իրենց մարդատար Ուազներով տարան դիրքերի հողոտ ճանապարհով: Ճանապարհին ավտոմեքենան մի քանի անգամ հանգավ: Խափանումներով էր աշխատում:

- Կեղտոտ բենզինից է,- կարծես փորձում էր արդարանալ գումարտակի հրամանատարը: Մինչդեռ շարժիչի ինքնուրույն անջատվելուց հետո ավտոմեքենան դժվարությամբ էր գործի ընկնում, որովհետև մարտկոցն էլ էր հնացել:

Թանձր մութ էր, երբ հասանք գետնատնակ: Երբեք չէի մտածի, որ այդքան կուրախանայի եթե գետնատնակի առջև հանդիպեի համագյուղացի բարեկամներիցս մեկին՝ Հակոբին՝ ուրախ ու կատակասեր մի մարդու: Մի ուրիշ անգամ կարելի էր և գրկախառնվել, բայց այստեղ նման զեղումն ամենևին էլ տեղին չէր լինի: Բավարարվում ենք ամուր ձեռքսեղմումով: Հակոբն էլ լրջացել է մի տեսակ: Դիրքապահ դասակի հրամանատար Թևոս Հարությունյանն իմ անփորձության համար սկզբում ցերեկային հերթափոխում գրանցեց: Ամբողջ գիշեր չքնեցի՝ չնայած չափից դուրս հոգնածությանը: Ապրիլյան եռօրյա մարտական ակտիվ գործողություններից հետո իրավիճակը դեռևս անհանգիստ էր: Ամեն րոպե հրետակոծություն կամ դիվերսիա էր սպասվում: Վերջինս՝ հատկապես լուսադեմին: Մինչև լուսադեմ էլ տապիկի գուժկան զրնգոցը չի դադարում:

Զեկուցում են. «Դիվերսիա ենք սպասում»: Ժամկետային զինծառայողների փորձված եռուզեռը կեսգիշերին հպարտություն ու միաժամանակ ապահովության զգացում է պատճառում: Դիրքի ավագը, սերժանտ Ալեն Մինասյանն է՝ կրթված ու գիտուն տղա, որը պարտականությունների բերումով ամբողջ գիշեր չպիտի քնի: Իսկ տղաներն արդեն ավելի քան մեկ ամիս է, որ դիրքերից չեն իջնում: Մինչև լուսաբաց ընկերանում եմ Ալենին: Առավոտյան ժամը 6-ին գլոբալ առումով արդեն խաղաղապահ եմ: Դիտակետում, դիրքապահ ընկերներս Ննգիից են: Հազիվ եմ ինձ զսպում, որ Կամոյին պապիկ չասեմ. բավարարվում եմ հորեղբայրով, իսկ Ռոբերտը միջին տարիքի է: Հակառակորդի կողմից արձակված առաջին կրակոցից փորձում եմ կռանալ, որովհետև թվաց, թե գնդակն ուղիղ գլխիս ուղղությամբ է գալիս, իսկ ականների կողքով վզզացող կրակոցի ձայնն ականջի բլթակը ծակելու պատրանք է ստեղծում: Նայում եմ նրանց դեմքերին, կարծես ծովափ են եկել: Արևն են վայելում: Ավելի ուշ ես էլ վարժվեցի կրակահերթերին՝ այնպես, կարծես պարսատիկով են խփում: Ասում են՝ թուրքերը վախից են կրակում: Երկու օրից, անսովոր ծանրաբեռնվածությունից, ոտքս փքվեց, խռովեց ու որոշեց ինքնակամ լքել ինձ: Հենց նույն օրն էլ հերթափոխի գրաֆիկը փոխվեց, և պետք է ցերեկային հերթափոխը հանձնելուց հետո անմիջապես անցնեինք դիրքերի գիշերային պահպանության: Ամաչեցի ասել ոտքիս մասին: Ցավն ատամներիս արանքում սեղմած՝ բարձրացա դիրք: Դե մի երկու ժամ է, կդիմանամ, էլի: Ինձ անձամբ դասակի հրամանատար Թևոս Հարությունյանն է հրահանգավորում:

- Չմտածես անփորձության մասին, այստեղ բոլորս մեկ ենք՝ թև ու թիկունք: Բան եղավ՝ մի րոպեից կողքիդ եմ: Դու դեռ չգիտես իմ արագությունը: Ավտոմատի գնդակից արագ կհասնեմ,- ասում է:

Հերթափոխին 10 րոպե մնացած, անկախ ոտացավին դիմանալու ճիգերիս, գլուխս մշուշվեց, ու հազիվ հասցրի հենվել խրամատին, որ չընկնեմ: Ինձ մոտեցավ Նաիրին՝ մոբի տղերքից, ինչպես դիրքերում ընդունված էր անվանել կամավորականներին:

- Դիմացի՛ր, 10 րոպե մնաց:

Տեսնելով, որ նույնիսկ չեմ կարողանում իրեն պատասխանել, կապվեց դասակի հրամանատարի հետ: Գետնատնակի ճանապարհին Թևոսը հրահանգում է, որ զենքս ու զրահաբաճկոնս իրեն հանձնեմ: Սթափվում եմ: Չեմ ուզում հանձնել: Համարյա խլում է ձեռքիցս և իր զենքի հետ միասին ուսին առնում իմ ավտոմատն ու ծանր զրահաբաճկոնը: Ապա կռանում, որ շալակի ինձ: Այդ պահին բոլորովին մոռացել էի և՛ ցավի, և՛ որտեղ գտնվելուս մասին:

- Կամանդիր, պետք չի կամաց-կամաց կգամ: Առանց այն էլ ձեր ծանրաբեռնվածությունն առավել քան բավական է,- ասում եմ:

- Ի՜նչ ծանրաբեռնվածություն, ի՜նչ բան, ցավդ տանեմ: Իմ առաջնահերթ պարտականությունն անձնակազմիս մասին հոգ տանելն է:

Չեմ թողնում ինձ շալակի: Բայց դե հիմա ցավն ավելի տանելի է: Հրամանատար Թևոսն էր իմ ցավն առել: Հաջորդ օրը բժիշկ կանչեց: Վերջինս փորձեց ինձ իջեցնել դիրքերից: Ապարդյուն: Մնացի: Գոնե Ալենի փոխարեն մի քիչ կհետևեմ գիշերային տեսողության սարքով: Մի ժամ էլ քնի, բավական է: Գիշերը կարճելու համար կամանդիրի հետ զրուցեցի: Հայրն ազատամարտիկ է: Ապրիլին էլ Մարտակերտում է եղել: Մանկուց սիրահարվել է զինվորական համազգեստին, որով տուն էին վերադառնում հայրն ու հորեղբայրը: Հետո՝ 1992-ին, հորեղբոր համազգեստը թանկ մասունք դարձավ իրենց տան սուրբ անկյունում: Որոշել էր, ու ինքը կրեց հորեղբոր զինհամազգեստի սուրբ խորհուրդը: Հայրենի սահմանի՝ իրեն վստահված հատվածն էլ իսկական միջնաբերդի է վերածել՝ պաշտպանական ամրություններով ու դրանք միացնող խրամուղիներով: Երբ զեկուցում են, թե հակառակորդի առաջխաղացման փորձ են նկատել, անվրդով, որսկանի նման ուսում է զենքն, ու արդեն րոպե անց լսվում է ինքնաձիգի ճարճատյունը՝ գետնատնակից բավական հեռու դիտակետում:

...Մտածում եմ՝ տեսնաս էս հի՞նչ երգինքումա կիրվալ մեր ճկատեն գիրը. հանցա երեկ ինար, վեր մունք մեր հարանց կողքին կռեվ ինք անում, պոստ պահում, սօր էլ մեր խոխեքն ըն մեզնիետ... (կամավորական Կամո պապի բարձրաձայն խոհերից):

Մաս երկրորդ
«ԵՐԿՐՈՐԴ ԷՇԵԼԵՈՆ». ԴԺՈԽՔԻ ՈՒ ԴՐԱԽՏԻ ՃԱՄՓԵՔԻՑ ԱՌԱՋ

...Ինչպես և սպասելի էր, մեզ տրված կարճատև արձակուրդից շուտ պետք է վերադառնայինք դիրքեր: Այս անգամ զորամասում ամեն շարժում և հրաման առավել քան լուրջ էր թվում: Իջնում ենք զինապահեստ՝ զենք ստանալու: Դեռևս Արցախյան ազատամարտից պահպանվող ինքնաձիգներ են: Բավականին մաշված ու գործարանային գույնը կորցրած, փայտե մասի վրա խաչ էր փորագրված: Ժամանակին այս ինքնաձիգներով են գծվել այն սահմանները, ուր մենք պիտի մեկնենք: Խնամքով մաքրում ենք զենքերն ու շարվում՝ սպասելով հրամանի: Ինչպես առաջին անգամ՝ դավադիր մութ է, որին դաշնակցում է նաև անձրևը, իսկ մենք երկրորդ էշելոնի ճանապարհին ենք, որտեղ պետք է դիրքավորվեինք: Ճանապարհի մի մասը գերադասում ենք ոտքով անցնել, չնայած հալվում էինք հոգնածությունից: Մեզ հանդիպած առաջին իսկ գետնատնակում փլվում եմ այստեղի համար բավականին հարմարավետ մի մահճակալի ու աներազ հանգում: Սակայն, ինչպես հետո պարզվեց, ինձ ճոխություն էի թույլ տվել. գետնատնակը մեզ համար չէր նախատեսված: Նեղլիկ մի խրամուղով ժամկետային զինծառայողները մեզ առաջնորդում են տեղակայման վայր: Ամեն հինգերորդ քայլից զգուշացնում էին կռանալ, քանի որ տարածքը դիտարկվում էր հակառակորդի կողմից: Միայն անունն էր երկրորդ էշելոն: Առաջնագծում կարծես թե ավելի ապահով էր: Գոնե գիտեինք ինչ սպասել, զգոն էինք, ու մեր գործողությունների հերթականությունը՝ ըստ իրադրության: Այսպես կոչված երկրորդ էշելոնը մեր երկրորդ դասն էր: Դիրքի ավագ, ուղեկցող սերժանտը մեզ զգուշացնում է, որ ամենավտանգավոր հատվածը մեզ է բաժին ընկել: Պետք է զգոն լինել, որովհետև դիվերսիայի դեպքում միայն մեր կողմից ճանապարհ կա: Բացի այդ, հիմնական ուժերից բավականին հեռու ենք՝ ամայի մի վայրում: Հասնում ենք տեղ: Այդ պահին, առավել քան երբևէ, զգում եմ երկրի մագնիսական ձգողության ուժը: Բաց խրամատի հողը թաց է: Դե նստելու համար էլ բավականին նեղ, իսկ ավելի բարձր նստելու դեպքում՝ վտանգավոր: Երկրորդ էշելոն: Տեսնես ով է մտածել: Մեր պայմաններում նույնիսկ Ստեփանակերտը դժվար է երկրորդ գիծ համարել: Ամբողջ երկիրն է առաջնագիծ: Աչքս ընկնում է հողի մեջ փորված, դեռևս կիսով չափ պատրաստ պաշտպանական մի տարածքի. սողոսկում եմ և, այսպես կոչված, օկուպացնում այն: Բավականին չոր տարածք է, նույնիսկ՝ տաք: Անուշ ննջում եմ հողե անկողնում: Նույնիսկ տանն այսպես չէի քնում: Քիչ անց փոքրիկ տարածքս է ներխուժում ինձնից անբաժան մարտական ընկերս՝ Հակոբը: Այստեղ նեղ են ճամփեքը, երկու հոգու տեղ չեն անում: Ես նահանջում եմ, իսկ քիչ անց ներսից լսվում է Հակոբի տանկային խռմփոցը: Մեզ նախապես տեղեկացրել էին, որ ամեն րոպե հրետակոծություն է սպասվում:

☞12

ԱՌՕՐՅԱ

Կյանքը՝ գրքերով

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԶՈՐԱՄԱՍՈՒՄ

Արցախի գրադարանները միացել են ՀՀ մշակույթի նախարարության՝ այս տարի Գրադարանավարի օրվա կապակցությամբ ընդունված «Կյանքը՝ գրքերով» շարժմանը, որի նպատակն է ընդգծել գրքի, գրադարանի դերը, նպաստել ընթերցանության խթանմանը, գրադարաններում ընթերցողների համար առավել հրապուրիչ միջավայրի ձևավորմանը, ընթերցող-գրադարան կապի ամրապնդմանը: Ծրագիրը նախատեսում է վերջին տարիներին հրատարակված գրքերի շնորհանդեսներ, հանդիպումներ նրանց հեղինակների հետ, մեծարման երեկոներ:

Այդ շրջանակում Ստեփանակերտի Մուրացանի անվան քաղաքային գրադարանը ԼՂՀ «Մայրություն» հասարակական կազմակերպության հետ մեկտեղ շրջագայություններ է կատարում ՊԲ զորամասեր:

Նպատակն է զորամասերի գրադարաններին նվիրել գրքեր, որպեսզի զինվորները երես առ երես հանդիպեն ու ճանաչեն հեղինակներին, դասական ու ժամանակակից գրողների ստեղծագործությունները հասու դարձնել նրանց, զինվորներին պարգևել հոգևոր սնունդ, նպաստել նրանց ակտիվ հանգստի կազմակերպմանը:

Նմանօրինակ միջոցառում էր ՊԲ Կենտրոնական պաշտպանական շրջանի զորամասերից մեկում կազմակերպված հանդիպումը: ԼՂՀ «Մայրություն» հասարակական կազմակերպության նախագահ Հասմիկ Միքայելյանը հանդիպումն անվանեց յուրահատուկ այն առումով, որ միջոցառման ընթացքում չի խոսվի պատերազմի, զինվորական կարգապահության, ծառայության նշանակության ու պատասխանատվության կրման մասին, իրար հետ կշփվեն, կխոսեն բացառապես գրքի, պոեզիայի լեզվով, ասել է թե՝ կփառաբանեն գեղեցիկն ու բարին, սերն ու կյանքը, գիտելիքների անսպառ աղբյուր գրքի դերն ու նշանակությունը մարդու կյանքում:

Մուրացանի անվան քաղաքային գրադարանի տնօրեն Մարիա Խաչատրյանը ողջունեց զինվորներին՝ նրանց փոխանցելով Գևորգ Մարգպետունու պատվիրանը. «Միաբանվե՛ք, միակամությունն է մեր ազգի փրկությունը»: Մարիա Խաչատրյանի հավաստմամբ՝ «Կյանքը՝ գրքերով» նշանաբանով միջոցառումների շրջանակում նրանք նպատակադրվել են մինչև տարեվերջ հանդիպումներ կազմակերպել մի շարք զորամասերում ու այդ ընթացքում գրքեր նվիրել նրանց գրադարաններին:

Գրող-լրագրող Սոֆյա Սարգսյանն ու բանաստեղծուհի Սիրվարդ Մարգարյանը զինվորների համար արտասանեցին իրենց ստեղծագործություններից ու զորամասի գրադարանին նվիրեցին իրենց հեղինակած գրքերից: Մայրաքաղաքի մի շարք դպրոցների աշակերտներից կազմված ասմունքողների խումբը հիացմունք պատճառեց զինծառայողներին, իսկ երգչուհի Մարիա Դավթյանն իր անկեղծ ու արհեստավարժ կատարումներով արժանացավ ներկաների համակրանքին: Զինվորների շրջանում ոգևորությունն այնքան մեծ էր, որ շարքայիններ Գայ Խեչոյանն ու Վահե Ղուլյանն իրենց երգ ու նվագով միացան դպրոցականներին՝ նոր լիցք, երանգ ու տրամադրություն հաղորդելով միջոցառմանը:

Զորամասի հրամանատարի ԱՀՏԱ գծով տեղակալ փոխգնդապետ Հովիկ Սարգսյանը շնորհակալություն հայտնեց միջոցառման կազմակերպիչներին ու մասնակիցներին՝ հույս հայտնելով, որ նման հանդիպումները կդառնան ավանդական, խոստացավ, որ հաջորդ հանդիպումներին իրենք ևս ակտիվ մասնակցություն կունենան ու միայն դիտողի դերում չեն լինի:

Զորամասի հրամանատարի տեղակալը միաժամանակ ողջ անձնակազմի անունից հավաստիացրեց, որ իրենք ամուր կանգնած են Արցախի պաշտպանության դիրքերում և թույլ չեն տա, որ մեր ժողովրդի անդորրը խախտվի:

Վ. ՕՍԻՊՅԱՆ

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԽԱՂ - ՄՐՑՈՒՅԹ

Նոյեմբերի 11-ին Մարտունու Ն.Ստեփանյանի անվան հ. 1 միջնակարգ հոսքային դպրոցում անց է կացվել ինտելեկտուալ խաղ-մրցույթ, որին մասնակցում էր տասը թիմ: ԱրՊՀ ուսանողական խորհուրդը մշակել է կոնկրետ պլան, որով նախատեսվում են համալսարանի դասախոսների և ուսանողների այցելություններ շրջկենտրոններ և տեղում դպրոցների ավագ դասարանների աշակերտներից թիմերի համար կազմակերպել ինտելեկտուալ ու ժամանցային միջոցառումներ: Նախատեսվում է նաև շրջանային փուլում հաղթող ճանաչված թիմերին պարգևատրել ԱրՊՀ ռեկտորի սահմանած մրցանակներով և հրավիրել մասնակցելու եզրափակիչ փուլին, որը կնվիրվի Արցախյան շարժման 30-ամյակին:

Բացի մրցութային խաղից նախատեսել էին նաև երաժշտական համարներ, որն անչափ գոհացրեց և՛ հանդիսատեսին, և՛ մասնակիցներին: Միջոցառումը կրում է հայրենասիրական բնույթ: Դրանք խիստ անհրաժեշտ են բոլորիս:

Արցախցի՛ ենք մենք ոգով ու սրտով,
Եվ ինչո՞ւ չասենք, ինչո՞ւ չպատմենք,
Որ մենք ծնվել ենք այս հողի վրա,
Հայկի հետնորդն ենք, ազատ ենք, անկախ,
Արցախցի՛ ենք մենք, կմնանք հավետ...

Այս խոսքերն Արցախցու բնութագիրն են, և այսօրվա սերունդը փորձում է ապացուցել յուրաքանչյուր բնագավառում:

Խաղ-մրցույթն ուներ նաև մի հետաքրքիր ծրագիր. խաղի ավարտից հետո բոլոր մասնակիցները 30-մետրանոց Արցախի դրոշը բռնած, շարժվեցին դեպի Մարտունու Մոնթե Մելքոնյանի արձանի մոտ ու իրենց հարգանքի տուրքը մատուցեցին հերոս նահատակների հիշատակին: Միջոցառումն ավարտվեց հայրենասիրական երգերով և շուրջպարով:

1-ին տեղում էր Խնուշինակի թիմը, 2-րդ տեղում՝ Մարտունու Ն.Ստեփանյանի անվան դպրոցը, 3-րդ տեղում՝ Հերոսների թիմը: Առաջին տեղը զբաղեցրած թիմը կմասնակցի հանրապետական փուլին: Մրցանակային տեղեր գրաված թիմերը պարգևատրվել են շնորհակալագրերով ու գրքերով: Մաղթում ենք նրանց հաջողություն, և թող շարունակական լինեն նմանատիպ միջոցառումները:

Դ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Մարտունու Ն. Ստեփանյանի անվան
հ.1 մ/հ դպրոցի ԴԱԿ

ԿՅԱՆՔՆ ՈՒ ԶԵՆՔԸ ՍԻՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

11 Ուստի առավոտյան մեր առաջին գործը լինում է ննջասենյակի վերածված պաշտպանական տարածքն ավարտին հասցնելը: Արդեն կեսօրին՝ չնայած կիզիչ արևին, բավականին առաջադիմել էինք: Մեր կեսօրահացը համեստ է՝ տնից բերված հացուպանիր և հաճելիորեն սառը ջուր: Երկրորդ էշելոնի համար բավականին ճոխ ճաշեցինք, ինչպես հետո հասկացա ժամկետայինների զրույցից և մեր հետագա ճաշերի սեղմ բովանդակությունից: Հարցիս զինվորները պատասխանեցին իսկական զինվորավայել ու լակոնիկ. «Որովհետև երկրորդ էշելոնում ենք»:

Մի պաշտպանական բնագիծ, որի ամրացման եռուն աշխատանքները մեր ժրաջան զինվորների շնորհիվ չէին դադարում ոչ մի վայրկյան: Որոշվել էր, որ մթնով պետք է համապատասխան միջոցներ բերեինք պաշտպանական ամրությունների կառուցման համար: Շատ ծանր թիթեղներ էին: Քանի որ տարածքը հակառակորդի նշանակետում էր, զինվորները, ովքեր ծանոթ էին տեղամասին, գրեթե վազքով դաշտից դուրս են գալիս և մտնում խրամատները: Մարտական ընկերս՝ Հակոբը, որը, ի դեպ, վաղուց արդեն հատել էր միջին տարիքի սահմանը, դժվարանում էր տեղաշարժվել՝ ծանր թիթեղի տակ կքած: Ուստի կեսճանապարհին, երբ արդեն մենակ էինք, հասկացանք, որ մոլորվել ենք: Որոշում ենք թիթեղը վայր դնել ու փորձել կողմնորոշվել տեղանքում: Ես գերադասում եմ պառկել, քանի որ մեկ անգամ չէ, որ զգուշացրել էին, թե տարածքը վերահսկվում է թշնամու կողմից: Հակոբը, որը դժվարությամբ էր կողմնորոշվում մթնում, որոշում է ինքնակամ լքել ինձ: Սակայն փշալարերին կախվելուց, ապա փոսն ընկնելուց ու ինչ-որ այլ կարծրության հետ բախումից հետո գերադասում է գոռգոռալով ու անհասցե հայհոյելով սահմանափակվել: Կարծում եմ՝ բարձրաձայն հայհոյանքը ելք գտնելու մյուս ճիգերի համեմատ իսկը տեղին էր, որովհետև բավականին հեռվում զինվորները լսել էին: Քիչ անց մոտեցան և ուղեկցեցին մեզ: Հետագայում քիչ անգամ չմոլորվեցինք մինոսյան լաբիրինթոսի նմանվող խրամուղիներում: Մի անգամ, նույնիսկ այն աստիճանի, որ հոգնել էի ապարդյուն ճիգերից, նստեցի ու սպասեցի՝ մինչև եկան գտան անհայտ կորածիս:

Վաղ առավոտյան գետնափոր մեր կացարանում քնած էի, երբ հրետակոծության նմանվող խլացնող կրակոցներ լսեցի: «Սկսվե՞ց»,- տագնապահար մտածում եմ: Առանց խուճապի, սակայն գլուխս նեղլիկ մուտքի ցեմենտբետոնե հատվածին բախելով, արագ ինձ դուրս եմ նետում՝ դիրքավորվելու: Պարզվեց՝ մարտական ընկերս իր ռազմական գիտելիքներն է փորձարկում գնդացրով: Քիչ հետո, երբ հանգստացնում եմ Հակոբի մարտական կրքերը, մտնում ենք էքսկավատորի մեր դերի մեջ և այս անգամ արդեն փորձում մեզ համար արևից պաշտպանվելու և գոնե նստելու տեղ պատրաստել: Կրկին հողափոր: Հազիվ էինք ավարտել մեր քրտնաջան աշխատանքը, և մեզ տրված անձրևանոցներով տանիք սարքել մեր հողոտ գլուխների վրա, նստել մի փոքր շունչ քաշելու և քրտինքներս չորացնելու, երբ հրաման ստացանք՝ մեկնել առաջնագիծ: Ժամկետային զինծառայողները տխրությամբ ընդունեցին լուրը: Մենք էլ կարոտով բաժանվեցինք: Առջևում մարտական հերթապահության անքուն ու զենքի հետ աշխարհում երևի ամենաիրատեսական ու կենսալից ռոմանտիկայի գիշերներն էին:

...Կույր գնդակները մտրակով դաղոցի ձայներ արձակելով, խոցոտում էին հողի կուրծքը: Լուսնի փոխարեն մեր բաժին երկինքը մահաբեր հրթիռներն ու անօդաչու թռչող սարքերն էին լուսավորում: Դժոխքի ու դրախտի ճամփեքից առաջ ոգու և կամքի փորձության հրավառություն էր: Կյանքին ու զենքին սեր խոստովանելու ժամանակ:

Վանիկ ՆՈՎԻԿՈՎ

ՍԿՍՎԱԾ Է

ԼՈՒՍԱՐԱՐ-ի

2018 թվականի բաժանորդագրությունը

«ԼՈՒՍԱՐԱՐ»-ը

հաղորդակցման հուսալի ամբիոն է:

«ԼՈՒՍԱՐԱՐ»-ը՝ անաչառ զրուցակից ու խորհրդակից:

«ԼՈՒՍԱՐԱՐ»-ը Արցախի հոգևոր ներուժի խտացումն է:

Տարեկան բաժանորդագինն անփոփոխ է՝ 3000 դրամ:

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ

✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 21.11.2017թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: